

Հ. Շահումյան

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՋՈՎՈՒՄՆԵՐ

8(47.925)
Lb-50

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ


ՀՐԱԶՅԱ Ա.ՃԱ.ՈՒՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԵԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

647

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն — 1 9 7 6



Կազմեցին՝ Ա. ՄԱԴՈՅԱՆ
Ա. ՏԵՐ-ՍԵՓԱՆՅԱՆ
Ծանոթագրություններ՝ Ա. ՄԱԴՈՅԱՆԻ
Խմբագիրներ՝ Է.Դ. ԱՂԱՅԱՆ, ԷՄ. ՊԻՎԱԶՅԱՆ

Ա 70202—20
704(02)—76 13—76

© Երևանի համալսարանի հրատակչություն, 1976

АЧАРЯН
РАЧИЯ АКОПОВИЧ

ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

Издательство Ереванского университета
Ереван—1976



ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը իր բեղմնավոր գիտա-մանկավարժական գրքունեության ընթացքում հրատարակել է հարցություր գրքեր ու հոդվածներ, որոնք մեծ մասամբ լեզվաբանական երկեր են՝ ոստամնասիրություններ, բառարաններ, ստուգաբանություններ և այլն։ Սակայն բազմ սկզբանի հետաքրքրությունների տեր գիտնականը զբաղվել է նաև հայ վիմագրության, ինչն ու նոր գրականության, հայ ժողովորի պատմության և հայագիտության այլ բնագավառների վերաբերող խնդիրների ոստամնասիրությամբ։

Մեծամուն հայագետի ծննդյան 100-ամյակի առթիվ հրատասուկող սույն ժողովածուն ընդգրկում է նրա բնասիրական-բնագրագիտական կարևորագույն հետազոտությունները։

Հայ մատենագրության ոստամնասիրության բնագավառում մեծ է Հրաչյա Աճառյանի ծառայությունը։ Մատենագրությունը նրան հետաքրքրել է ո՞չ միայն լեզվաբանամիան տեսանկյունից։ Նրա երկրորդ նախասիրությունն է եղել զուտ բանսուրական աշխատանքը՝ բնագրերի կազմում և ձեռագրական սրբագրություններ, պատմա-բնասիրական հետախուզում և գրական վելուծություն։ Եվ բնասիրական շահախմնդրությունները ուղեկցել են նրան ամբողջ գրքունեության ընթացքում՝ թե՛ լեզվաբանական ծանրակշիռ մենագրություններում, թե՛ բառարմնական-ստուգաբանական հոդվածներում։

Օր-օրի զբաղվելով իր հիմնական աշխատանքով, Հր. Աճառյանը առիթ է ունեցել սրբագրություններ, ճշտումներ կառարելով մատենագրական այս կամ այն հուշարձանի բնագրում, որտողություններ անելով և գրախոսություններ գրելով բազմաթիվ նոր հրատակությունների վերաբերյալ։ Այսպես են ստեղծվել շատ բա-

նասիրական հոդվածներ, որոնք մեծ ճնաւամբ ցրված են .Խամանակի մամուլում և դժվար մատչելի են նոյնին մասնագետի համար: Ուստի կարևոր այդ ուսումնասիրությունների հրաւարակությունը առանձին գրքով օգտակար կլինի հայագիտության՝ զրադպողներին:

Հր. Աճառյանի բանասիրական հոդվածները բնույթավոր բազմազան են. կան ինչպես մատենագիրների ստեղծագործաւան դիմանկարներ, այնպես էլ ձեռագրական նշութի ու տրամարտնական վերլուծության հիմնա վրա արվող սրբագրություններ, բնագրերի վերծանության-թարգմանություն և այլն: «Հայկականք» հոդվածաշարում (տպագրված 1897 թվականից, տարբեր գիտական դրաբաններում) հաճախ նաև ձեռք է զարկել այդ կարգի համարների քննությանը, նպաստել դրանց պարզաբանման ու վերջնական լուծմանը:

Սույն ժողովածուի առաջին հոդվածը՝ «Մովսես Կաղանեկանվացի», Հր. Աճառյանը գրել է 1892 թ., երբ ընդունենք 17 տարեկան էր և Պոլսի Կելլրունական վարժարանում աշակերտում էր անվանի հայկարան Ա. Մ. Գարագաջանին¹: Երեք տարի անց, Փարիզում, նա գրում է «Մատթեոս Ուոհայեցի» հոդվածը: Ինչպես երևում է 1896 թ. հունվարին «Հանդես ամսօրյալի» խարագությանն ողղված համակից, նա մտադիր էր գրելու հոդվածաշար՝ «հայ մատենագրաց անձին ու ժամանակի և վրա», բայց չի հաջողվել իրագործել այդ մտադրությունը: Նշովի է, որ Հր. Աճառյանը, իր խոստվանությամբ, Փարիզ մեկնել էր «հասաց տանելու համար լեզվաբանական ու բանասիրական ուսումները»²:

Իր կարևոր եզրահանգումներու առանձնանում է համակապես «Տիմոթեոս Կուոկ և ս. Գրիգոր Նորաբեր թարգմանությունը» ուսումնասիրությունը, որին խթան ծառայեց Գ. Տեր-Մկրտչյանը՝ 1908 թ. «Արարա» ամսագրում տպագրված մի հետազոտությունը:

Գ. Տեր-Մկրտչյանը նկատել էր, թե Տիմոթեոս Կուոկի «Հականառության» հայերեն թարգմանության մեջ, որ ամբողջապես հունարան հայերենով է, Աստվածաշնչից արված քաղաքացքները

¹Տե՛ս Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 103:

²«Հանդես ամսօրյա», 1953, էջ 451:

տարբեր են ուկեղարյան թարգմանությունից և որիշ աղյուր են ենթադրում: Ուստի նա առաջադրում էր Եւսույալ հարցը. «Հականառության» մեջ բերված հատվածները թարգմանիչը քաղել է երրորդ, Նորաբեր կոչված թարգմանությունից³, թե՝ ինքն է թարգմանել:

Հր. Աճառյանի ուսումնասիրության նպատակը այս վերջին հարցին պատասխանելով էր: Գ. Տեր-Մկրտչյանի բերած փաստերից ելեւով նա պնդում է, թե Նորաբերը «Ընդհանուր ազգին կողմէն հավանություն գտա»⁴ և եկեղեցպով մեջ ընդունված գործ մը համարելու չէ բնավ, այլ մայրագումեց: Այս հանգանակքը նկատի առնելով, Հր. Աճառյանը դիմում է, թե «Տիմոթեոսին ուղղափառ բարգմանիցը բնավ իրավունք չպիտի համարել իրեն՝ դիմելու անոր»:

Փաստերի համադրությամբ ու մանրախույզ քննությամբ, Աստվածաշնչի ուկեղարյան թարգմանության, հունարեն չնագրի համապատասխան հատվածների, Տիմոթեոս Կուոկի աստվածաշնչական վկայությունների գուգադրությամբ ու համեմատությամբ Հր. Աճառյանը հերականում է. Տիմոթեոսի թարգմանիչը և Գրիգորի որևէ թարգմանությունից չի օգտվել, և հիշյալ վկայությունները թարգմանել է հենց «Հականառության» հունարեն բնագրից:

Այսօր բանասիրության առջև ծառացած կարևորագույն խրնիրներից է Գրիգոր Մագիստրոսի երկերի վերծանությունն ու մեկնությունը, անշուշտ, համեմատական բնագրերը հրատարակելուց հետո: Այս «խրթին ու դժվարիմաց» հեղինակի մասին բանասերները խոսել են հաճախ թերահավատությամբ: «Ղագիստրոս խըրթին՝ բերդողական ոճի սիրահար՝ գրած է յուր շատ դժվարիմաց լեզվով և ոճով, որոնք այսօր անհնուտ ընդօրինակողներու պես պես աղավաղումներով գրեթե անհնանալի մնացած են շատ տեղ», —գրել է Ն. Ալիխանը⁵:

Գրիգոր Մագիստրոսի խրթին երկերը վերծանելու ողղությամբ առաջին լորջ քայլը կատարեց Նորայր Բյուզանդացին, որ նկատեց թե «Գամագուականի» առաջին հատվածը, որի սկզբանագրերը հոդում են Գրիգորի անունը, մեկնել է հենց ինքը Մա-

³«Հանդես ամսօրյա», 1910, էջ 125:

գիտրութ Կիրակոսին ուղղված համակրող (թուղթ ԽԵ): Հարություն Թիրյաքյանը Նորայի Բյուզանդացու հոդվածի առիթով սովորաբանեց գամ, զամագիտ, գոեն, գոենիկ բառերը⁵: Այնուհետև Նորային հետևելով, Գարբրիել Մենսիշյանը թարգմանեց «Գամագույնանի» հաջորդ մասը⁶:

Հր. Աճառյանին հաջողվեց պարզաբանել Մագիստրոսի անհասկանալի երկերից ևս մեկը: Նրա «Գրիգոր Մագիստրոսի «Մրգու փանաքի» լուծումը» աշխատությունը մեծ կարևորություն ունի իր հետապնդած նպատակով ու արդյունքով: Նախ ձեռագրական տարրներցումների համեմատությամբ նաև վերակազմեց բնագիրը, արեւ մի շարք բնագրագիտական դիտողություններ, սորոգություն 15 քառ, նոր միայն մեկնաց թարգմանեց բնագիրը:

Նորայր Բյուզանդացու, Գ. Մենևիշյանի և Հր. Աճառյանի շամբերի շնորհիվ այսօր կարելի է արձանագրել, թե Գրիգոր Մագիստրոսի գործերը հայ երգիծական գրականության ինքնատիպ նմուշներից են⁷:

Հր. Աճառյանի բանահրական ժառանգության մեջ պահձին քաժին են կազմում բնագրական ճշգրտումները, որոնք դիսավորական ամփոփվեցին «Զեռագրական սրբագրություններ» հայ մատենագիրների մեջ» (Երևան, 1926) ապակետիպ գրքու։ Պատկերացնելու համար այս ուղղությամբ հրա կատարած աշխատանքի ընդգրկումն ու ծավալը, բավական է նշել միայն, որ Աճառյանը հիշյալ աշխատության մեջ սրբագրություններ է առաջարկում հայ հերթարկույն ու թարգմանական մատնեագրության երեք տասնյակից ավելի պատմական, իմաստահրական, մեկնադակական, իրավական, գեղարվեստական և այլ կարգի գործերում, եզրեկից ու Բուգանից մինչև ուշ շրջանի պատմիները, տաղեր-

⁴ Խորայշ Քյուզանդացի, Գրիգոր Մագիստրոսի «Գամագուական» թղթին մեկնությունը ի Նմին խնկ ի Մագիստրոսի, «Բանասիր», 1900, պր. Բ:

⁵ *Տե՛ս «Քանասարք», 1900, հունվարի 10-ի*

⁶ Գ. ՄԵԼԻՔՅԱՆԻ, ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՎԻ ՇԱմագուականից ամբողջ սկան Ճամփար, Վեհենա, 1912:

⁷ У арх и с т р о п и с и . 2 4 . М я б р и . К б р о д а н и о в и т ю я н . Н и з о н и . М я м е р . Н и з о н и . У к а с а р и д е г и н . Ф о р д а л е . Т и б ' . «К с к е р . С а ј . С о н и м и т ю . А в а с и м и т ю я н . И р а н с а у ф и р и т ю я н » («С о н и м а д и н и к и . С о н и м а д и н »), Б е р к а н , 1971 , № . 8 . А р т и к л и ж а н и . С о н и м а д и н :

գումերը, Կյուրեղի, Բարսեղ Կեսարացո, Հովհան Ռոկեբերանի
երկերը:

Դժբախտաբար, այս աշխատությունը, նախապես տպագրքած պարբերական մամոլում, ապա բազմացված լինելով սահմանափակ քանակությամբ (50օրինակ), մատչելի չի եղել հաճախ մասնագետին, և միշտ չէ, որ նրա առաջարկությունները օգտագործել են բնագրերի նոր հրատարակություններում:

Մատենագրական բազում երկերի քնագրական վերականգնումների ու սրբագրության ողղությանը ականավոր հայագետի կատարածի պատկերը ամբողջացնելու համար պեսք է հիշել ևս «Երկու ողղում Կորյունի մեջ» հոդվածը ու «Քննություն և համեմատություն Եզնիկ Առաքյան ձեռագրին» ուսումնասիրությունը⁸: Առաջինի մեջ հեղինակը սրամիտ բացատրություն է տալիս Մեսրոպ Մաշտոցի վարքում տեղ գտած քնագրական ակնհայտ աղճատումներին և հիմնավոր ողղումներ առաջարկում, իսկ Հրկրորդում Եզնիկ Կողբացու երկի միակ ձեռագրի տվյալներով ողղում է 1826 թ. Վենետիկյան հրատարակության մեջ եղած Վրիպումներն ու սխալները, դարձյալ առաջարկելով բազմաթիվ սրբագրություններ:

Արտացոլելով «Եղծ աղանդոցի» ձեռագրի ճշգրիտ պատկերը, «Քննություն և համեմատություն Եզնիկ Առաքուտ ձեռագրին» աշխատությունը կարևոր աղբյուր է այդ երկի հրատարակիչների ձեռքում, մասնավեպ հրանց, ում մատչելի չէ, բնագիր:

Բանասիրական, բնագրագիտական, աղբյուրագիտական այլնայլ խնդիրներին Հր. Սմառյան անդրադարձել է նաև «Հայոց անձնանունների բառարան» (Երևան, 1942—1962) հինգ հատորանոց համավոր աշխատության, Պետրոս Շուրյանի երկերի լիակատար ժողովածորի (Երևան, 1947, իսկ առաջին անգամ՝ Ազ. Տեր-Հարությունյանի աշխատակցությամբ՝ Ծովի, 1904) մեջ և այ-

⁸ Գ. Տեր-Միրտչյան, Հր. Աբաոյան, Քննություն և համեմատություն Եղիսկա նորագոյուս ձեռագրին, Վիճննա, 1904: Խնշվես նշված է զրքի Եղիսածության մեջ, համատեղ աշխատանքի արդյունք է միայն ձեռագրի և եղինիկի գեներելիքան հատարակության համեմատությունը, մնացածը Հր. Աբաոյանի աշխատանքի արդարքին է:

լոր, կազմել է Կարինի Սանասարյան փարժարանի (Վիեննա, 1900), Թավրիզի (Վիեննա, 1910), Նոր Բայազետի (Վիեննա, 1924), Թեհրանի (Վիեննա, 1936) ձեռագրերի ցուցակները, Ակադեմիկ 162 ձեռագիր⁹, Հ. Մանանդյանի աշխատակցությամբ, 100 գրչագրերի հիման վրա հրատարակության է պատրաստել «Հայոց նոր վկաները» ժողովածուն, որ ունեցավ կրկնակ հրատարակություն (Վաղարշապատ, 1902, 1903), երկրորդը՝ գիտական պատշաճ մանրամասներով, ձեռագրական տարրներցվածներով։ Վերջին ընդգրկում է հայագիտությանը հայտնի բոլոր վկայաբանական բնագրերը, որոնք վերաբերում են 1156—1843 թթ. համատակված հայերին։

Ինչպես Հր. Աճառյանի բոլոր աշխատությունները, այնպես էլ մասնավորապես բանասիրական հետազոտությունները, աչքի են ընկնում մոտեցման թարմությամբ, հետազոտվող նյութի ընձեռած բոլոր տվյալների ու կողմնակի փաստերի համակողմանի քննությամբ, եզրահանգումների տրամաբանականությամբ ու հետևողականությամբ։ Այս ամենը հնարավոր է դարձել ոչ միայն հեղինակի տաղանդի ու իրոք զարմանալի աշխատունակության, այլև լեզվաբանական ու բանասիրական լորջ պատրաստության շնորհիվ։

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՅԻ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՐ ԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎՐԱ

Ա.

Խորենացին հիշող պատմագիրներու մեջ ժամանակագրական կարգով առաջին կամարվի Մովսես Կաղանկատվացի, պատմիլ աղվանից, որ կնկատվի ապրած և երկասիրած յոթներորդ դարուն։ Այս Մովսես իր եռահատոր պատմության մեջ (տպ. Փարիզ, Կ. վ. Շահնազարյան)¹ շատ բան բառացի փոխ կառնի Խորենացին, որ ինչպես առհասարակ մեր բոլոր պատմագիրներուն միակ ստուգ, անվիճելի և վավերական աղբյուրն է մեր պատմության հնագույն ժամանակներուն համար, նույնպես ալ Կաղանկատվացի Մովսեսին՝ աղվաններու պատմության առաջին ժամանակներուն համար։

Փոխառության եղանակին համար ահավասիկ համեմատական երկու հատվածներ։

ԽՈՐԵՆԱՑԻ

Եթէ ո՞րպէս կարգեաց Վաղարշակ զարկմուտս և զհիւսի մերոյ աշխարհիս։ — Աստ կոչեցեալ զվայրենի եկամուտ աղգն, որ ի դաշտին հիւսիսոյ և որ զստորհտով մեծի լերինն Կաւկասոյ, և որ ի հովիտս կամ ի ձորս երկայնագոզս խորացեալս, ի լեռնէն՝ որ զհարաւով՝ իշեալ մինչ ի դաշտարե-

...Վաղարշակ արքայն Հայոց, ...ի կառգելն իւրում զհիւսիսայինսն՝ կոշեաց զվայրենի եկամուտ աղգս որ ի դաշտէն հիւսիսոյ կամ որ ի զստորհտով կաւկասու, կամ ի զովիտս կամ ի խորածորս զհարաւով մինչ ցմուտս դաշտին,

⁹Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Հտ. Ա., Երևան, 1959,
էջ LXIX.

բանն մեծ պատուէր տալով զաւագակոթին և զարդադաւոթին ի բացքել յինքնանց, և հրամանաց հարկաց արքունի հպատակ լինել. որպէս զի միսանդամ տեսնալ զնոսա, առաջնորդս և իշխանս Հանդերձ դեղեցիկ կարգօք հաստատեսցէ: Եւ արձակէ զնոսա Հանդերձ արամբք իմուտովք և վերակացուք յիւրմէ: (Խոր. Բ. Զ.)

Յետ սորա մեծ և անուանի և բազմաբեր զարեւելից Հիսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ Հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր: Բայց զայս գիտեա, զի զցեղս զայս մեծ և անուանի մոռացումն եղա մեզ յառաջին մասենին յիշատակել, զգունդս սիսական՝ որ ժառանգեաց զդաշտն Աղուանից, և զեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն երասիս մինչեւ յամուրն՝ որ ասի Հնարակերտ. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա կոչեցան Աղուանք զի աղու ձայնէին զնա:

Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ՝ կարգեցաւ ի Պարթէէն Վաղարշակայ կողմնակալ բիւրաւոր: Ի սորա զաւմէէ ասեն սերեալ զազդ Ուտեացոց և Դարդմանացոց և Շաւդէացոց և Գարդարացոց իշխանութիւնսն: (Խոր. Բ. Ը.)

պատուէր առնէր զաւագակոթին և զմարդադաւոթին թողուց. և հարկաց արքունի հնազանդ կամ

Ապա կարգեաց նոցա առաջնորդս և զեռակացուս, յորոց զլխաւոր ոմն ի Սիսական տումէ Յարեթական ծննդոց կարգի հրամանով Վաղարշակայ Առան անուն,

Որ ժառանգեաց զդաշտը և զլերինս Աղվանից ի գետէն երասիս մինչեւ յամուրն՝ Հնարակերտ: Եւ աշխարհն յաղագս բարուց նորա անուանեցաւ Աղվանք զի աղու ձայնէին զնա վասն բաղցրութեան բարուցն:

Ի սորա ծննդոց Առանց, ասեն, անուանիս և քաջս կարգեցան կողմնակալս բիւրաւոր ի Պարթէէն Վաղարշակայ: Եւ ի սորա զաւակէն, ասեն, սերեալ զազդս Ռուէացոց և Գարդմանացոց իշխանութեանց: (Մով. Կաղ., Ա. Հատ., էջ 92)

Կաղանկատվացին իր պատմության մեջ տեղ մը նաև կհիշենորենացին, Մովսես Քերոպահայր ծանոթ անունով. ահա իր խոսքերը. «Յոյժ ցանկալի էր ըստ կարգաց գիտել զպատմածս, որ ինչ յԱռանայ նախագահութենէն ցայսօր* գործք. բայց արևիկայցս բազմազգութիւն ամբոխեալ ցուցանէ զորպէսն (այսինքն թե ինչպես այն պատմությունները զնշված, կորսված կամ անհիշատակ մնացած են) և կտակարանացն հրկիզութիւնք. սակայն յայսմ վայրի նպաստաւորէ մեզ Քերոպահայրն Մովսես (ի պատմելն) զպատերազմելն Արտավազդայ ընդ Հռովմայեցիսն» (Մով. Կաղ., Ա. Հատ., էջ 97):

Պարզ է ուրիմն, թե Կաղանկատվացին կատարելապես կճանշնա Խորենացին:

Բ.

Առհասարակ ընդունված է մեր մատենագրության պատմության մեջ, թե Կաղանկատվացին յոթներորդ դարեն է, ինչպես վերը հիշվեցավ. այս կարծիքն առաջին անգամ հայտնեց և հաստատեց Շահնազարյան Կարապետ վարդապետ՝ քննելով Կաղանկատվացին պատմությունը և զնելով այդ գրքեն քանի մը օրինակնեղ իբրև ապացուց իր ըստածին: Այս քննությունը մաս կկազմե այն ընդարձակ նախարանին՝ զոր զրած է իր հրատարակած Կաղանկատվացիին սկիզբը, և ուր կիսուի աղվաններու պատմության, աշխարհագրության, ազգագրության և լեզվին վրա ընդարձակութեն և մանրամասնաբար: Ահա իր խոսքերը. «Հետազոտեալ իմ խնամօք ի գիրս իւր՝ (Մովսեսի Կաղանկայտուացոյ) գտի հաւաստի ցոյցս ըստ որոց մարթ է, անտարակուսաբար, համարել զնա կեցեալ ի սկզբան է գարուն առ Վիրոյիւ կաթողիկոսաւ, որում և ուղեկից եղեւ յերթալ նորա յողոցին Շաթի՝ արքայորդույն Խազրաց, և առ Ձեւանշիր իշխանաւ: Ի գլուխն 18, Ա. գրոց, ի պատմելն զպանդոյն մատնահատութեան զոր երարձ արքայն Վաղագան^{**}, յաւելու «զոր բիրեալ իսկ տեսաւր բազումք»: Ի պատմելն զհանդիպումն Վիրոյի արքայորդույն Խազրաց, ասէ. Բ. 14. «անդ տեսաք բրազմոցս նոցա... և զընծայ ողջունին որ բարձեալ ի վերայ բազ-

* Մովսեսի տպ. զնե ցայս:

** Այն է Վաղագան Բ Բարեկաշտն:

կաց մերոց»։ Եւ ի գլուխն 28 նոյն գրոց ի ճառելն զհանդերձանաց պալատան ջևանշիր իշխանին, այսպէս գրէ. «յայնժամ չինէր անդ համաշխարհական ժողով... և տեսանէաք զթագաւորական համ... տեսաք օրնիշի... ի զօսանս խաղուց տեսանէաք...»։ Դարձեալ ի գլուխն 32, որ յաղագս գիտի Մեսրոբեան խաշին* «զոր ու [միայն] մեք, այլ աշխարհ ամենայն եղեն տռոօղք»։ Եւ զի փառաւոր իշխանն ջևանշիր եկաց ի կէսն է դարուն, զՄովսէս ևս համարելի է ժամանակակից նմին և տողեալ զպատմական գիրս իւր» (Մով. Կաղ., Ա. հատ., յառաջարան, էջ 82—83)։

Գ.

Շահնազարյան վարդապետին մեջ բերած օրինակներն արդարեւ բավական զորեղ են հաստատելու համար, թե Կաղանկատվացին կամ պատմված դեպքերուն հեղինակը ո՞վ որ է, ականատես է այն դեպքերուն, որ կպատմեն։ Ուստի առանց երկրայության կրնանք զայն ժամանակակից գնել Վաշագան Բ.-ի, տեր Աբասի, Զուանշիրի և եղիազար կաթուղիկոսի։

Բայց Կաղանկատվացին պատմությունը կրածնվի երեք գրքի. առաջինը կպատմեն աղվանից պատմության սկիզբն մինչև մոտ Վարդանանց պատերազմը (451), երկրորդը Կհասնի մինչև մեր Եզր կաթուղիկոսի ժամանակը (640), իսկ երրորդը մինչեւ Սմբատ Ա.-ի մահը (915)։ Հետեաբար դժվարություն մը կա այստեղ, յոթներորդ դարեն մեկը չի կրնար անշուշտ ժ դարուն պատմությունն ընել. այս դժվարությունն ալ վերցնելու համար՝ Շահնազարյան ենթադրած է, թե Կաղանկատվացին պատմության երրորդ գիրքը միենույն հեղինակին գործը չէ, այլ շարահարություն ուրիշ մեկեն, որ կապրեր տասներորդ դարուն։

Դ.

Այս համառոտ ուսումնասիրության նպատակը պիտի ըլլա հաստատել, թե Մովսէս Կաղանկատվացիին պատմությունը միակ գրչե ելած չէ, այլ խմբագրություն է այլևայլ գրություններու, և Կաղանկատվացին Մովսէս հավաքած, դասավորած և կարգադրած է զանոնք տասներորդ դարուն։

* Մեսրովյան խաչի գլուխն եղավ Եղիազար կաթուղիկոսի օրով։

Այս ապացուցանելու համար գտնենք նախ վերոհիշյալ շորս անձերուն ապրած թվականը (Վաշագան Բ, Տեր Աբաս, Զուանշիր և Եղիազար կաթուղիկոս)։ Ասոր համար ալ բավական զժվարություն կա այն պատճառով, որ Կաղանկատվացին ո՞չ թվական կհիշե, ո՞չ թագավորի մը կամ կաթուղիկոսի մը ժամանակակից օտար իշխանները և ո՞չ ալ երկու համանուն թագավորներու առաջին կամ երկրորդ ըլլալը. այսպես, աղվան թագավորներուն մեջ երկու Վաշի կա և երկու ալ Վաշագան, որոնք միշտ կշփոթվին իրարու հետ, մանավանդ որ Մովսէս շարունակյալ կարգով շպատմեր, այլ անկարգ ու խառնակ. այնպես որ այս գլուխը ներկա ժամանակի դեպքի մը պատմությունն է, հաջորդ գլուխը երկու դար առաջվան դեպք մը։

Ուստի դյուրության համար լավ է դնել հոս աղվանից թագավորներուն շարոքը։

Աղվաններուն բոյն ժանոթ պատմությունը կսկսի Վաշագան Առաջին Քաջեն. հետո կհաջորդեն կարգով՝
Վաշէ Ա

Ունայր (ժամանակակից Տրդատի)

Յաւագան (Մոսկ. տպ. Վաշական [Բ])

Միրհաւան (Նույն՝ Մրհաւան)

Սատոյ

Ասայ

Եսուաղէն (ժամանակակից մեր Ա. Մեսրոպին)

Վաշէ Բ

Վաշէ Բ-են ետքը՝ երկրորդ կմնա 30 տարի անիշխան. Հետո կնստի Վաշագան Բ Բարեպաշտը, որու ժամանակակից է Մովսէս Կաղանկատվացին՝ առաջին անգամ ըստ Շահնազարյանի։ Վաշագան Բ-են ետք դարձյալ անիշխանություն մինչև Զուանշիր. այս շրջանը կհաշվենք աղվան կաթուղիկոսներու օգնությամբ։ Տեր Աբաս՝ Վաշագան Բ-են ետք առաջին կաթուղիկոս՝ որ կնստի մոտ 552-ին, հետո Տեր Վիրո՞ որուն հետ Մովսէս կուղեկցի իրրե պատգամավոր Խազրաց արքայորդի Շաթին, Տեր Զաքարիա, Տեր Հովհանն, Տեր Ուխտանես՝ ժամանակակից Զուանշիրի և Տեր Եղիազար՝ որու օրով կկատարվի խաչի գլուխը։

Վաշէ Բ կապրի 470-ին մոտավորապես, քանզի Կաղանկատ-

վացին ունի նամակ մը ուղղված մեր Գյուտ կաթուղիկոսեն այս Վաշեին (Մով. Կաղ., Ա. Հատ., էջ 103). և որովհետեւ Գյուտ կնստի 465—475, Վաշե ևս համարելի է 470-ին: Լայնարար հաշվելով և ենթադրելով, թե Գյուտի վերջին տարին նստավ Վաշե Բ, Վաշեի թվականը գնենք 475, որմե ավելի ուշ անկարելի է բացարձակապես: Այս թվականին վրա ավելցնելով անիշխանության երեսուն տարվան շրջանը, կգտնվի Վաշագան Բ Բարեպաշտին թագավորության թվականը՝ դարձյալ լայնարար, այն է 505՝ գոնե ամենեն ուշը: Դարձյալ՝ Տեր Արա կաթուղիկոս նստած է 552-ին, որովհետեւ Կաղանկատվացին կհայտնե թե «Յերկրորդ ամին Խոսրովու՝ արքայից արքայի, յորժամ զսկիզբն (եղին) Հայ թուականին, ի սոյն ամի փոխեցին զաթոռ Հայրապետութեանն Աղվանից ի Զողայ քաղաքէն ի մայրաքաղաքն Պարտաւ վասն Հինահալած արշաւանաց թշնամեաց խաչին Քրիստոսի: Եւ նստուցին Հայրապետ զՏէր Արա ի գաւառէն Մեծ-Իրանց» (Մով. Կաղ., Ա. Հատ., էջ 219): Այս Արա կաթուղիկոսեն սկսելով առաջ կերթանք և կհաշվենք Հաջորդ կաթուղիկոսներուն թվականը մինչև Եղիազար, որու ժամանակակից կհիշվի Կաղանկատվացին վերջին անգամ՝ գոնե ըստ Շահնազարյանի:

Արա	կնստի	44	տարի	552—596
Վիրոյ	»	34	»	596—630
Զաքարիա	»	17	»	630—647
Ցովհան	»	25	»	647—672
Ուկտանէս	»	12	»	672—684
Եղիազար	»	5	»	684—690

Շահնազարյանի քննության համեմատ պեսք է ընդունել, թե Մովսես Կաղանկատվացին ժամանակակից է ամբողջ այս շրջանին, այսինքն Վաշագան Բ-ին մինչև Եղիազար (505—690), Հարյուր ութուն և Հինգ տարվան միջոց մը և ավելի ևս, որովհետեւ 505-ին՝ Վաշագան Բ-ի թագավորության ժամանակ՝ դարձյալ պատմության համեմատ՝ Մովսես ականատես եղած էր մոգերուն տանջանարաններուն (Մով. Կաղ., Ա. Հատ., էջ 144): Արդ՝ այսպիսի գեպքի մը ականատես ըլլալու և հետո ալ զայն Հիշել կարողանալու համար պետք է որ Մովսես գոնե 10—15 տարեկան

եղած ըլլար. որով կգտնվի անոր ծննդյան մոտավոր թվականը՝ 490—495: Ինչ որ ալ ըլլա անկարելի է, որ Մովսես 195—200 տարի ապրած ըլլա և հետևաբար անկարելի է նաև, որ ժամանակակից եղած ըլլա այն գեպքերուն և այն շրջանին:

�.

Մովսես Կաղանկատվացին ապրած է տասներորդ դարուն. և ասոր ապացուց այն է, թե իր պատմությունը կհասցնե մինչև տասներորդ դար, բնավ պատճառ մը շունինք ըսելու համար, թե աղվաններու պատմության երրորդ գիրքը նույն Մովսեսին չէ, այլ ուրիշ Մովսեսի մը շարահարությունը. քանի որ զրին վերտառությունը այդպիսի բան մը շհայտներ, այլ ընդհակառակը կհաստատե, թե մինույն հեղինակին գործն է. «Մովսեսի Կաղանկատվացոյ երրորդ գիրքը պատմութեան Աղուանից»:

Նույնիսկ Շահնազարյան այս կարծիքն ունեցած է՝ արդեն ընդունած ըլլալուն համար, թե Մովսես յոթներորդ դարեն է: Արդ՝ բանի որ կհաստատվի, թե Մովսես այն շրջանին ժամանակակից չկոնսար ըլլալ, անհիմն կմնա Շահնազարյանի այս հետևողությունն ալ, թե Աղվանից պատմության երրորդ գիրքը նույն Մովսեսին չէ:

Ուրիշ ապացուց կրնա հայրապիտ այն, թե Մովսես կհիշե Բագրատունիները, այնպիսի տեղ մը՝ ուր պետք չկար հիշելու և ուր մյուս ցեղերուն կամ նախարարություններուն վրա խոսք չկա. «Ասս բարձաւ թագաւորութիւն յԱրշակունեաց, և Հայրապետութիւն ի ցեղէ սրբոյն Գրիգորի: Իսկ եթէ յաղագս Բագրատունեացն կամիցիս գիտել, Պարոյր Սկայորդի կոչեցեալ Հրաշեալ՝ թագաւոր Հայոց՝ որդի Հայկակայ, որ խնդրեաց յարքայէն Բարեկացոց զմի ոմն ի գերելոցն Հրէից Եբաթ անուն, զոր ածեալ բնակեցուց յերկրին Հայոց մեծաւ պատուով: Ի սմանէ սերեցաւ աղդն Բագրատունեաց ի նուազել մհծագոյն ազգին Ցարեթականի»:

Կտեսնիվի, որ Բագրատունի ցեղը մասնավորաբար և առանձին՝ իբրև Համապատիվ Արշակունյան ցեղին կհիշվի ասոնցմե վերջ. իբրև թե Մովսես ըսել ուզեր, թե Արշակունիներն են կթագավորին Բագրատունիները: Բագրատունյան այս Հիշատակությունն ուրիշն կակնարկե, թե այն ժամանակ, որ Մովսես զրեց այս հատվածը՝ Բագրատունիք արդեն մեծ դեր ունեին մեր մեջ և

արժանի էին միմիայն իրենք հիշատակվելու և իրրե Արշակունյաց հաջորդ նշանակվելու: Բանավոր է այս ժամանակն դնել Ժդարուն՝ ուր Բագրատունիները կտիրեն արդեն երկրին:

Ուրիշ ապացուց մը դարձալ: — Կաղանկատվացին կհիշվի առաջին անգամ Ստեփաննոս Ասողիկեն ետք՝ ԺԵ դարուն վերջերը և ավելի ետք՝ հաջորդ դարերուն մեջ Ասողիկ որ Տիեզերական պատմություն կդրե և որ կիշատակե մեր պատմագիրները իր պատմության նախաբանին մեջ, չհիշեր Կաղանկատվացին: Այս ապացուց է ուրեմն, թե Կաղանկատվացին եթի Ասողիկեն վերջ չէ, հազիկ անոր ժամանակակից է:

Զ.

Եթե Կաղանկատվացին տասներորդ դարեն է, բնական է ուրեմն, թե այն դեպքերը, որ կապտմէ աղվաններու պատմության առաջին ժամանակներուն վրա, քաղված ըլլան ավանդութիւնն և մանավանդ այլևս պատմագիրներէ. ինչպես ինքն իսկ տեղ մը կհայտնե. «Յստոյգ և ի բուն պատմագրաց, այսպէս ժանեարա...»:

Դարձալ կան երեք գլուխներ, որոնք բառացի օրինակված են ուրիշ հնագույն աշխատություններէ. մին իր հիշատակարանովը միասին: Այսպիս, էջ 221 կկարդանք. «Յառաջնում ամի հայրապետութեան Աբասայ, տեսի ես անարժանս Վեհիկ ի տեսլիան այր մի անապատական, որ ունէր նշան աստուածային խաչի գրեալ. և ասէր ցիս զանուն իմ:

Եւ ասիմ. «՞ և իս դու, Տէր, և նա ասէ ցիս. ես եմ Պօղոսիկ, արդ եկ, երկրպագեա՛ խաչիս, և մի՛ մերձենցիս ի սա: Եւ ես զարթուցեալ ի քնոյ:... Եւ ես Վեհիկ հիացեալ կայի ընդ միտս իմ մինչև ցեօթն ամ՝ խնդրելով յամենողորդէն Աստուծոյ:... Եւ ապա յարուցեալ ես Վեհիկ՝ չոգայ առ սուրբ հայրապետն Աբաս:...

Ես Աղրիանէ, որ զիշատակարանս գրեցի, մաղթեմ յիշել զանարժանութիւնս իմ ի յընթերցողացդ, և զհայրապետն Աբաս մի՛ ևս մոռանալ, յորոյ ժամանակս լոյս աշխարհի ժագեցաւ, ընդ նմին և զՎեհիկ՝ կարապետ նոցին, յիշեսցէ՛ Տէր Աստուած ողորմութեամբն իւրով մեծաւ, և որք յիշեք՝ ձեզ վարձս ընդ երանելի վկայիցն հատուցէ՛ Քրիստոս այժմ և յակիտեանս. ամէն»²:

Ինչպես կտեսնվի՝ Վեհիկ գրած է պատմությունը, ուստի և կխսի միշտ առաջին դեմքով և ասեմ, ընդ միտս իմ, չօգայ, ես Վեհիկ, և ալլն, և այլն. Հետո Աղրիանէ անուն մեկը օրինակած է Վեհիկի պատմությունը իրմէ ևս ավելցնելով այն հիշատակարանը. «Ես Աղրիանէ և ալլն»: Հետո ալ Մովսես Կաղանկատվացին միամիտ մեկը՝ գտած է Աղրիանեի օրինակությունը և հիշատակարանովը միասին առած է իր պատմության մեջ:

Էջ 277, ԺԵ. գլուխը «Վասն սաստկացեալ սովոյն, սրոյն և գերութեանն ի միտսին» քաղված է Վիրոյի պատմութենեն, ինչպես որ գլխուն վերջը կհիշատակվի. «Ես Վիրոյ՝ Աղուանից և կինաց և Չողայ կաթողիկոս, թողում ասել զայլն ամենայն, զպէսպէս զազրալիս՝ զմարմնոյ սեութիւնս և կնտութիւնս գլխոց...» և ալլն, և այլն (Մով. Կաղ., Ա. հատ., էջ 279—280):

Էջ 417 Մ. գլուխը. «Վասն Յովսեփայ անապատականի բնակելն յԱրձախ, և երբ յԵրուաղեմ, ընդ նմին և բերումն նշխարացն սրոց», քաղված է նույն Հովսեփ անապատականի պատմութենեն բառ առ բառ. «Ի թագաւորութեանն Հերակղոսի և շախախ թագաւորութեանն Յազկերտի, և ի կաթողիկոսութեանն Հայոց Եղիի, և ի սպարապետութեանն Մուշեղի, ի Սիմեաց տէրութեանն Գրիգորի, յեպիսկոպոսութեանն Մաթուսաղայի... գնացի ես Յովսէփ անապատական ի գաւառէն Գեղամայ՝ յանապատէ Բրտի այրից վասն չար նեղութեան ժամանակի... խոյս տուեալ իմ եկի ի գաւառս Արձախայ... ընկալեալ զիս զանարժանս... Տնկեցաւ ի սիրտ իմ ցանկութիւն ստանալ ի նշխարաց սրոցն Յովսանու... ընկալեալ իմ Յովսեփայ՝ բերի ի նոյն վկայան...»:

Ստորագծված բառերը կցուցնեն, թե այս գլուխն ալ բառացի օրինակություն է առաջին հեղինակեն:

Այս օրինակները բավական են արդեն ցուցնելու համար թե խմբագրություն է Կաղանկատվացին, և այն հատվածները որ Շահնազարյան մեջ կրերե և որոնց մեջ արդարէ ականատես մըն է միշտ խոսողը, գրած են ո՞ւ թե Կաղանկատվացի Մովսեսն, այլ անոր առաջնորդող պատմագիրներէ. և Մովսես բառ առ բառ կօրինակե անոնցմէ:

Այս պատճառով է, որ Կաղանկատվացին խառնակ պատմություն մըն է՝ լի կրոնական առասպելներով (Հմմտ. 147—182, 193—211), խաչի և սուրբ նշխարներու անվերջ գյուտերով (Հմմտ. էջ 417—420, 95—97, 147—157, 220—224, 325—333, 345—349), երբեմն դեպքերն անկարգ (100—115), պակաս, խառնակ (217), զիսավոր արժեքը հիշատակությունն է քսանի մոտ պաշտոնական թուղթերուն և Գավթակի ողբին:

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌԱՅԵՑԻ

Է.

Ի՞նչ է սակայն Կաղանկատվացին գրության բում թվականը: Հիշվեցավ, թե պատմության երրորդ գիրքը կհասնի մինչև 914. ուրեմն Մովսես ալ այս թվականին մոտերը գրած պիտի ըլլա. դնենք 920: Կրնա առարկվիլ սակայն, որ եթե Կաղանկատվացին 920-ին գրած է, Ասողիկ որ անկե 84 տարիներ վերջ կդրե, ինչո՞ւ համար չհիշեր զայն: Ասոր ալ պատճառն այն պետք է ըլլա, որ Մովսեսի պատմությունը՝ իբրև հեռացած ցեղի մը մասնավոր պատմությունը՝ մնացած է միայն իր միջավայրին՝ Աղվան երկրին մեջ, և շատ ուշ տարածված է Հայաստանի բնիկ գավառները³:

1897, մայիս 10, Փարիզ

Մատթեոսի ժամանակագրությունը կբաժնվի երեք մասի կամ գիրքի, և ամեն մեկ գիրքը՝ Հատվածներու: Առաջին գիրքը կսկսի Հայոց ՆԱ և Քրիստոսի 952 թվականին և կհասնի մինչև Քրիստոսի 1052 և Հայոց Շ թվականը՝ պարունակելով իր մեջ Հարյուր տարվան պատմություն: Երկրորդը կսկսի Հայոց ՇԲ և Քրիստոսի 1053 թվականին և կհասնի մինչև Հայոց ՇԾ և Քրիստոսի 1102 թվականը՝ պարունակելով գրեթե 50 տարվան պատմություն: Իսկ երրորդ գիրքը կսկսի այս թվականին և կհասնի Հայոց ՇԶԵ և Քրիստոսի 1137 թվականը՝ պարունակելով երեսուն տարվան պատմություն: Ուրեմն Մատթեոսի պատմությունը կպարունակի ընդամենը 180 տարվան պատմություն՝ սկսելով Քրիստոսի 952 թվականին և հասցնելով մինչև 1137¹: Բովանդակ առաջին գիրքը՝ 100 տարվան պատմություն՝ Մատթեոս՝ ինչպես ինքն ալ կըսե, քաղած է ժամանակակից անձերե և հին գիրքերե. աճաիր իսոսքերը. «Արդ մինչեւ ցայս վայրս բազմացան եւ աշխատաւոր քննութեամբ գտեալ գրեցաք զշարագրական գրեալս զհարից ամաց, զորս ի բազում ժամանակաց հետաքննեալ հասուեղաք: Ընդ այնքանեաց տեսողացն եւ լսողացն որք էին ի հին ամաց ծնեալք, եւ ընդ ընթերցողսն յառաջին պատմագրացն՝ որք ականատեսք էին լեալք ամենայն եղելոցն» (Մատթ. Ուռհ., էջ 133. տիպ. Երուս.)²: Մատթեոսի մեծ փափազն էր արդեն գրել իր ժամանակի պատմությունը՝ որպեսզի այն ամեն դեպքերն ու պատահարները շկորսվին, շմոռցվին. «Զայս ամենայն յօժարեցի ի տեսութիւն եւ ի մատենագրութիւն ածել գրով, վասն զի ի շարաշար դառնութեան ժամանակն (=ժամանակին) կորիցէ այս

ամենայն եւ մոռացի ...թողի զայս ի լիշտակ սիրողաց ժմանակագրութեանց» (էջ 134): Ուստի երկար ժամանակ աշխատեցավ այս գործին «բազմաշան և աշխատաւոր քննութեամբ»:

Մատթեոսի պատմության Գ գրին ա հատվածին մեջ (էջ 340) կկարդանք. «Եւ այս եղեւ ի հայրապետութեանն Հայոց տանն տէր Գրիգորիսի եւ տեառն Բարսղի, յորժամ եղեւ առաջին սկիզբն Երկրագութեանս»: Արդ՝ այս վերջին բառն ապահովապես սիսալ է և պետք է ըլլա Երկարիցութեան՝ ինչպես որ Մատթեոսի պատմության Հրատարակիչներն ալ այդ դիտողությունը կընեն (էջ 569), քանզի այս խոսքին մեջ երկրագության խնդիր չկա, այլ բուն իսկ երկարիցության վրա կխոսի Հեղինակը: Նույն սիսալը կտեսնենք նաև երեք թուղթ հետո (էջ 347). «Ճոր գարձեալ սկսաք Երկրագութեանց՝ ըստ երանելի վարդապետին Գրիգորի նիւսացւոյ». ուր հայտնի է թե բառը պիտի ըլլա Երկարիցութեանց³:

Արդ՝ եթե այս ընթերցվածին միտ դնենք, պիտի իմանանք թե Մատթեոս առաջին գիրքը գրել սկսավ Գրիգորիսի և Բարսեղի հայրապետության ժամանակ: Ո՞վ է այս Գրիգորիսը: Պատմության այն շրջանին մեջ, ուր կգրե Մատթեոս իր ժամանակագրությունը, հետզհետեւ հաջորդեն Գրիգոր անունով քանի մը կաթողիկոսներ. այսպէս՝

1058	Խաչիկ	Բ.	1165	Ներսես	Դ.
1065	Գրիգոր	Բ.	1173	Գրիգոր	Դ.
1082	Բարսեղ	Ա.	1193	Գրիգոր	Ե.
1113	Գրիգոր	Գ.	1195	Գրիգոր	Զ.

Բայց որովհետեւ Գրիգորիս կհիշվի Բարսեղի հետ միասին և որովհետեւ Մատթեոսի ժամանակագրությունը կհասնի մինչև 1137, սույն Գրիգորիսը կրնա ըլլալ միայն Գրիգոր Բ. կամ Գրիգոր Գ. մյուսները բռնոր կմնան 1137 թվականին անդին:

Մատթեոս իբրև ժամանակակից կհիշե նաև Հունաց Ալեքս կայսրը (1081—1118), Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկոլ (—Նիկոլ Գ. 1084—1111), Անտիոքի հայրապետ Հովհաննես (Դ. կամ Ե.), Ասորաց հայրապետ Աթանաս (=է. 1090—1129), Երուսաղեմի հայրապետ Սիմեոն (Բ.) (1094) և Ալեքսանդրիայի հայրապետ Հովհաննես: «Եւ ի նոյն հայրապետութեան տեառն Գրի-

գորիսի եւ ի թագաւորութեան Յունաց Ալէքսին դարձաք յօժարական մտօք եւն» (էջ 346):

Ուստի՝ Մատթեոսի պատմության սկզբնավորության թվականը կգտնվի 1065—1165, բայց այս հարյուրամյա շրջանին մեջ երկու թվական միայն կրնան հարմարի Մատթեոսի հիշած պայմաններուն, այն է՝ կամ 1113: Որովհետեւ Գրիգորիսի (Բ. կամ Գ.) և Բարսեղի ՄիԱՍԻՆ հիշվիլը կցուցնե թե Մատթեոս գրել սկսած է այն տարին, որ Գրիգոր Բ. կվախճանի և Բարսեղ Ա. հաջորդեն 1082 (եթե հիշված Գրիգորը՝ Գրիգոր Բ-ն է) և կամ այն տարին, որ Բարսեղ Ա. կվախճանի և Գրիգոր Գ. հաջորդեն 1113 (եթե հիշված Գրիգորը՝ Գրիգոր Գ-ն է): Այս երկու թվականներին գուրս ուրիշ ինչ թվականի մեջ ալ որ սկսած ըլլար Մատթեոս՝ չպիտի կրնար ըսել թե Բարսեղի և Գրիգորիսի (միասին) ժամանակ սկսած:

Մատթեոս առաջին գրին համար աշխատեցավ 8 տարի. «Ճութ ամ անհանգիստ քննութեամբ կացի, եւ զայս ամենայն յօժարեցի ի տեսութիւն եւ ի մատենագրութիւն ածել գրով» (էջ 134): Ուրեմն երկրորդ գիրքը գրել սկսած 1090-ին կամ 1121-ին. այս գրին համար ալ աշխատեցաւ 7 տարի, ինչպես կհետեցվի իր մեկ խոսքեն. «Արդ զայս ու ոք է կարող առնել զոր ինչ մեք արարաք, զի զոր ինչ գրեցաք՝ գրեցաւ. զի զամս հնգետասան ունէաք զայս զործ քննութեանս» (էջ 344): Այսինքն թե 15 տարի աշխատեցավ բովանդակ պատմությունը մինչև այստեղ հասցնելու համար՝ առաջին երկու գիրքերը Հորինելու համար. արդ՝ քանի որ գիտենք առաջինին գրության տևողությունը՝ 8 տարի, կհետեւ, թե երկրորդին համար աշխատած է 7 տարի: Ուրեմն, երբ ավարտեց առաջին երկու գիրքերը՝ Քրիստոսի 1097 կամ 1128 թվականն էր:

Հոս գիտենք, թե Մատթեոս 1097-ին գրած ավարտած պիտի ըլլա երկրորդ գիրքը՝ որ կհասնի մինչև 1102. այս անկարելի է. ուրեմն անկարելի է նաև, որ Մատթեոս սկսած ըլլա 1082-ին. Կմնա միայն 1113:

Այնուհետև Ուռհայեցի 10 տարի կդադարի գրելե. «Եւ յայս տեղուց լոեալ դադարէաք ի յարուեստաւոր քննութեանէս մերմէ.. զամս տասն ոշինչ արարաք հոգս վասն այս ժամանակագրու-

թեանս. եւ թողեալ էաք ի բացեայ զարուեստ գրչութեանց» (էջ 340—341), Բայց հետո տեսնելով, թե ոչ շանք լըներ ժամանակակից դեպքերը պատմելու, վերստին սկսավ գրել Քրիստոսի 1138 թվականին: Արդ՝ Ա. և Բ. գրքերը կհասնեին մինչև Հայոց ՇՄ և Քրիստոսի 1101 թվականը. Մատթեոս պետք էր շարունակեր այս տեղեն և բերեր նախ մինչև 1128՝ որ էր գրության ավարտած ժամանակը՝ ճիշտ 27 տարի. Հետո այդ թվականին ևս շարունակել և զալ մինչև 1137 թվականը՝ այն է ընդամենը 36 տարի. «Այսպիսի օրինակաւո եւ մեք դարձուք ի մեր թողեալ կէտ գրոյն, եւ գտաք զբնաբան զառաշինն զոր թողեալ էաք, յորժամ էր ի յամս ՇՄ: Եւ արդ սկսաք ասել այլ եւս ամաց քսան եւ նօթանց, եւ երեսուն՝ լիցի վճարումն գրոցս» (էջ 345):

Այս է ճիշտ և ուղիղ հաշիվը՝ որու համաձայն կուգան Մատթեոսի բոլոր խոսքերը և բոլոր հիշած թվականներն ու անձերը (Գրիգոր, Բարսեղ և Ալեքս): Անհամաձայն է միայն վերի «Եւ երեսուն՝ լիցի վճարումն գրոցս» խոսքը՝ փոխանակ 36-ի. ասոր համար ալ հաստատ կերպով կրնանք ըսել, թե փոքրիկ սխալ մըն է⁴: Կրնայինք անշուշտ մտածել նաև, թե Մատթեոս երրորդ գիրքը գրել սկսած ատեն մտադրած ըլլար պատմությունը մինչև 1131 հասցնել. այսպեսով անհամաձայնությունը պիտի վերնար: Սակայն այս բնական չէ: Հա՛րկ էր որ Մատթեոս՝ երրորդ գիրքը գրել սկսած ատեն՝ նպատակ դրած ըլլար պատմությունը հասցնել մինչև 1137՝ որ էր երրորդ գիրքը գրել սկսած թվականին անմիջապես առաջին տարին:

(Հոս ավելցնենք նաև թե թվականներուն մեջ մեկ տարվան տարրերությունը տոմարական տարրերությունն է:)

Ուոհայեցիին հրատարակիչները՝ շկարենալով ընել այս հաշիվները՝ կգրեն, թե սխալ կա այս խոսքերուն մեջ. «Ի թուականութիւնս ամացն նշմարին վրիպակք մուծեալ ի գրչաց, կամ ի նորին իսկ հեղինակին անգուշութենէ» եւն եւն (էջ 570, ժան. 211):

Ասոնցմեն վերջ՝ քանի մը դիտողություններ ունիմ ընելիք. նախ պետք է չնշել էջ 135 ՀԶ հատվածին վերջին պարբերությունը. «Նա այլ եւս ունիմք ասել ձեզ ամաց ութսնից զաշխատութենէ Մատթեոսի Ուոհայեցւոյ եւ վանաց երիցու»⁵: Այս խոսքը բուն

հեղինակեն չէ, այլ օրինակողե մը ավելցված է. որովհետեւ Մատթեոս այդ մասերը գրած ժամանակ չէր զիտեր, թէ պիտի հասցներ մինչև 1137, թե 80 տարվան պատմություն ևս պիտի գրեր. այլ իր նպատակն էր միայն 50 տարի ևս շարունակել, ինչպես որ վերն ալ տեսանք, թե այդտեղ հասնելե վերջ՝ դադրած էր այս գրելե և տասը տարի վերջ միայն շարունակել ուզած էր: Նույնիսկ խոսքին ձեզ կհայտնե, թե հավելված է. քանզի երրորդ գեմքի վրա կլուսվի. մինչ անկե անմիջապես առջի նախադասության մեջ առաջին դեմքով. «Չոր ընկալաք ըստ արժանեաց մերց զհատուցումն»:

Էջ 340⁶ ՃՀԱ հատվածին սկիզբը՝ ի յամի հինգ հարիւրերորդի ևն պետք է իմանալ կամ կարդալ ի յամն (=մինչև ցամն) ևն, Զեռագիրներուն մեջ կգրվի. «Ի յամի ԴՃերորդի եւ Ծերորդի», ինչպես կտեսնենք ծանոթության մեջ, մինչ հայտնի սխալ է ինչպես ծանոթությունն ևս դիտել կուտա (էջ 569, ժան. 205):

Էջ 341 և էջ 347 Երկրպագութեանց բառերը պետք է կարդալ Երկասիրութեանց. այս մասին տես վերը:

* * *

Մատթեոսի կյանքին վրա շունինք բավական տեղեկություն. միայն իր գրքեն և իր պատմածներեն հայտնի է, թե Ուոհայի մասին պատմածները շատ մանրամասն են. այսպես՝ Հովհաննես Քարափնեցիին մահվան համար զրածները, թե «Արարին ժողով զամենայն քաղաքն Ուոհայ ի վերայ նորա. եւ մեծաւ հանդիւի թաղեցին զնա ի դուռն սուրբ եկեղեցւոյ իւրոյ՝ ի հիւասիսն կողմն քաղաքին, իբրև նետընկէց մի հեռի ի պարսպէն» (էջ 273); նույնպես Գրիգորիսի թուղթը՝ զոր գրեց Ուոհայեցիներուն՝ ամբողջ մեջ բերելը ևն. էջ 342՝ Մատթեոս հայտնապես կըսե իր բնագայուր. «Ի բաղաս Միջագետաց յՈւոհայ, ժողովեալ գրեցաք մինչեւ ցայս վայր եւն»:

Նաև գիտենք, թե Մատթեոս վանական է, ինչպես կցուցնե էջ 134. «Եւ վասն այսորիկ Մատթեոս Ուոհայեցի եւ վանական՝ զաշխատութեանս զգործ իմ ուշնչ համարեցայ» ևն: Բայց էջ 135՝ նախարանին վերջին հատվածը, ուր Մատթեոս կհիշվի իբրև «վանաց երէց», ինչպես որ վերն ալ ցուցուցինք՝ հետո հավելալ է և մեզ համար կարեռություն չունի:

1896, հունվար 7 (19), Փարիզ

**ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ
«ՄՐԳՈՒԶ ՓԱՆԱՔԻ» ԼՈՒԾՈՒՄԸ**

ԺԱ. Դարու Հեղինակ խրթնախոսն Մագիստրոս՝ շորս փոքր պատմավոր գրություն թողուցած է մեզի, որոնք իրենց առաջին բառերու համաձայն՝ կկուլին 1. «Գամագոտական». 2. «Մրգուզ փանաք», 3. «Գանգին բախին», 4. «Կէտ կարթիւ» (տպված վերջին անգամ Ալեքսանդրապոլ, 1910, 4. Կոստանդնուպոլիսի Հրատարակությամբ, «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 133—135 և 236—240):

Եղիպտական մեջնագիր գրությանց նման անիմանալի բաներ էին ասոնք, երբ հանկարծ նորայր Բյուզանդացին՝ Champollion-ի նման գտավ հանելուկին բանալին և առաջին անգամ ինքը ձեռք դարկավ լուծման գործին: Այս բանալին էր «Գամագոտականի» առաջին կեսին թարգմանությունը, զոր թողուցեր էր ինքը Մագիստրոսը, որով և կարելի եղավ այդ անիմանալի գրվածքին մասնաւոր կեսին գաղտնիքներուն թափանցել (տե՛ս «Բանասիր», 1900, էջ 119—140):

Նորայրի գործը շարունակեց Հ. Գ. Մենեկչյան, որ հիմնվելով Մագիստրոսի կիսատ թարգմանության և Հին ձեռագիրներու մեջ պահված Թերթողական բառորդերու վրա՝ շատ հաջող կերպով լուծեց ամբողջ Գամագոտականը (տե՛ս «Գրիգորի Մագիստրոսի «Գամագոտականի» ամբողջական լուծում», երկասիրեց Հ. Գ. ծ. Վ. Մենեկչյան, Վիեննա, 1912):

Այսպես վերջացավ «Գամագոտականի» գործը:

Քաջալերվելով Հ. Մենեկչյանի օրինակեն և հետևելով մասմբ իր գծած ուղիին՝ կձեռնարկելի ես ալ լուծելու Մագիստրոսի երկրորդ անիմանալի գրությունը՝ «Մրգուզ փանաքը»:

Երբ ընագիր կգործածեմ Կոստանդնուպոլիսի Հրատարակածը (էջ 237), հանդերձ ձեռագրական տարբերությամբ (էջ 279), իսկ իբր

մեկնության միջոց ունիմ նոր Հայկազյան բառարանը (ՆշԲ), Առձեռնությունը (ԱԲ), Մենեկչյանի գիրքը և Երեմիա վարդապետի «Բառագիրք Հայոցի» կրկին հրատարակությունները (Ա. տպ. Ալիկոռնա, 1698, Բ. տպ. 1729):

ԲԱԱԳԻՐ

(բառ Կ. Կոստանդնուպոլիսի, էջ 237):

1. Մրգուզ փանաք ծրդեալ ծեքեալ անհոյծ(1) ոգեալ յառեալ,
2. Իրազեկ խանտեալ(2) մանձրեալ յարազինեալ(3) իսկոյն յահրեալ.
3. Մանջուկ(4) մանչոն ճահճեալ(5) ղամեկեալ(6) ըմբահակեալ(7),
4. Դիւրադատ(8) պատենեալ անոահավար պարայածեալ(9),
5. Որջասոյզ եւ գրուանող ծեքեալ նոժեալ(10) ապազոնեալ(11)
6. Փինատ թեքըտ(12) փքացեալ ապա զինի(13) բաց ասացեալ(14),
7. Հի՞կէն գոյս(15) կոյր կոպանեալ(16) թափառական կոկողացեալ,
8. Ամայի բաղադրեալ(17) առ վիրական ի զուր խոնջեալ,
9. Անխորասոյզ արգոր(18) կարծեալ արտօրինեալ(19) բարութեալ,
10. Անզրուատ(20) գրուակ բոսոր անիրապէս ըմբոշխորեալ(21),
11. Անձոնի տիպ դիմառեալ ապաժաման լաւից եղեալ,
12. Ընկրկեալ(22) թոպեալ թրմեալ(23) խողեալ ի յայտ(24) տրամակայեալ,
13. Բոսորապոյն հաշմեալ շուրածական արտալածեալ,
14. Խւզագործ կիւտ կածնական յուզեալ խուզեալ(25) եւ խողիսողեալ(26),
15. Անհեթեթ վիթխարացեալ հրազիմացող գաղափարեալ,
16. Մեզգետ(27) մախիզ զոփեալ(28) միտեալ յարդեալ արասունեալ(29):

ԶԵՐԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(էջ 279):

- | | |
|-------------|---------------|
| 1. անյոյծ. | 3. յարաշինեալ |
| 2. խանդեալ. | 4. մանչոն. |

5. ճաճեալ, ճաճեալ.
6. զակիմեալ, զամիկեալ.
7. ընպահակեալ.
8. դիրադարդ, դիրաթարթ.
9. պար յածեալ.
10. նոծեալ.
11. ապազինեալ
12. փինաթեքքդ, փինատ փէքքդ, փինատ փթիքդ.
13. ապազինեւ.
14. բացասացեալ.
15. գու.
16. կոպանեալ.
17. բարադադրեալ.

ՎԵՐԱԿԱԶՄՅԱԼ ԲՆԱԳԻՄ (մեր վերակազմած բառերն ընդգծված են)

1. Մրգուզ փանաք ծրդեալ՝ ծեքեալ՝ անհոյժ ողեալ յառեալ,
2. իրազեկ՝ խանտեալ, մանձրեալ, յարազինեալ, իսկոյն յա՞րեալ.
3. Մանչուկ մանչոն ճաճճեալ, զամիկեալ, բմբաճակեալ.
4. Դիրադատ պատենեալ, անուաճավար պարայածեալ:
5. Ռջասոյզ եւ գրուանող ծեքեալ, նոծեալ, ապազոնեալ.
6. Փինատ փեխդ փքացեալ՝ ապազինի բացասացեալ.
7. Հիկէն գոս կուր կոպանեալ, թափառական կոկոզացեալ՝.
8. Ամայի բաղադրեալ, առվիրական ի զուր խոնչեալ:
9. Անխորասոյզ արգոր կարծեալ՝ արտօրինեալ բարուրեալ.
10. Անդրուատ գրուակ բռոր՝ անիրապէս ըմբոշխորեալ.
11. Անճոռնի տիպ դիմառեալ, ապաժաման լաւից եղեալ.
12. Ընկրկեալ, թոպեալ՝ թմբեալ թողեալ, ի յայտ տրամակայեալ:
13. Բոսորագոյն հաշմեալ, չույածական արտալածեալ:
14. Խղագործ կիւտ կաճնական յուղեալ, խուզեալ եւ խողխողեալ.
15. Անհեթեթ, վիթխարացեալ, նրաշիմացող գաղափարեալ,
16. Մեղետ մախիզ զոփեալ՝ միտեալ, յարդեալ, առասունեալ:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նայելով իմ հասարակ ըսածներուս՝ կցնդարանեիր, թե անոնք անպիտան, գձուձ ու աղտոտ բաներ են:

2. Երբ իրազեկ եղար, նախանձով վառեցար ու մրկեցար, ու զենք առիր, շուտ մը դեմս հանդիմեցար:
3. (Երբեւ) մանչուկ մը, փոքր տղա մը ստաճակեցար, ընչվզեցառ և ըմբոստացար:
4. Դյուրին բան մը երևեցավ քեզի. բայց հիմա ճամբադ կորսընցուցած՝ ման կու զաս ասդին անդին:
5. Որչիդ մէջ պաճված՝ ծածուկ կցնդարանեիր, հիմա [ընկճվեցար], պարտվեցար:
6. Խեղճ ու թշվառդ հպարտացեր էիր, հիմա հայտնապէս ու վըճռաբար անզեն ու տկար կովվեցար:
7. Ինչպէս կուր կգեգերիս թափառական, դու որ մեծամտեր էիր:
8. Իզուր իրար խառնեցիր [գրվածքն բան մը հասկնալու համար], իզուր և իզուր հոգնեցար:
9. Պարզ [կամ դյուրաճասկանալի] խոսք մը համարեցիր, բայց չափե դուրս դատապարտվեցար:
10. Նախատական ամոթալի խոսքը պարապ տեղը [կերար]:
11. Դիմք անճոռնի կերպարանք մը առավ [քիթդ-բերանդ թըթվեցուցիր] լավ բանի շնասար:
12. Ետ բաշվեցար, ծեծ ուտելով՝ թմրած մնացիր և հայտնի կերպով հասկցար [ըմբռնեցիր]:
13. Ամոթաճար ջարդվեցար, աստանդական հալածվեցար:
14. Թանաք-գրիդ փնտորեցիր, որոնեցիր և խուզարկեցիր:
15. Շատ մեծ, խոշոր, հրաշալի գիտուն կարծեր էիր քեզի:
16. Բանտարկված անտեղյակ, նեղը մնացած, խոնարհեցար, կարգի եկար ու մարդ դարձար:

ԲԱԱԾԵՐ

(բգանշաններ կցուցնեն տողերը):

- ԱՄԱՅԻ 8. սովորական իմաստն է բառիս «ավերակ, անբնակ տեղ» Մագիստրոս կմեկնի «պարապ տեղ» առումեն և հոս կգործածե «պարապ տեղը, իզուր» նշանակությամբ:
- ԱՆԴՐՈՒՍ 10. առանց դրվատանքի, պարսավանքի արժանացած, նախատված կամ նախատական, պարսավական:
- ԱՆԻԲԱԴԻՍ 10. սուտ կամ պարապ տեղը:
- ԱՆԻԽՈՐԱՍՈՅ 9. որ հասկնալու համար շատ խորերը սուզվելու պետք չկա. դյուրաճասկանալի, պարզ: — Նշի ասոր տեղ ունի

անխորոգ ընթերցվածք, որ շափի պակասության պատճառով մերժելի է (տե՛ս ՆՀԲ արկոր բառին տակ):

ԱՆՀԵԹԹՅԹ 15. շատ մեծ:

ԱՆՀՈՅԾՍ 1. կոշա, կոպիտ.—Մագիստրոսի սիրած բառերեն մեկնէ, որ շատ անգամ կզորժածէ. կազմված է ան բացասականով նոյն (իմա՞ նոն) բառեն: Թարգմանությանս մեջ ըստ հարմարության դրի «Հասարակ», այն է քերթողական պահումանքների զերծ: ԱՆՀՈՅԾԱՎԱՐ 4. ըստ Առձ. բառ. «Ճամբե ելած». ավելի լավ է դնել ճամփան կորսնցուցած:

ԱՊԱՋԻՆԻ 6. անգեն ու տկար.—Կոստանյանի բնագրին մեջ իբրև երկու բառ դրած է ապա զինիւ. ձեռագրական ընթերցվածներուն մեջ կդտնեմ ապազինեւ և ասոր համեմատ ավելի լավ կկարծեմ կարդալ ապազինիւ և կանցունեմ բնագրին մեջ: ԱԲ ունի ապազեն ռանդեն, տկարու: Երեմիայի Բառպիքըն ալ գիտե ապազեն ովատթարագին կամ անդեն»: Ասկէ շինած է Մագիստրոս գործիական հոլով մակրայածև մը:

ԱՊԱՋՈՒՆԵԱԼ 5. անստուցի բառ. բնագրին մեջ դրված է ապազնեալ, ձեռագիր մը ունի ապազինեալ, ասիկա՝ նախորդին իբրև բայաձելը՝ կրնա մեկնվիլ «անդեն՝ տկար դառնալ, տկարանալ», իսկ ապազոնեալ կրնա մեկնվիլ ապ- բացասականով հուն. Հանդ «գոտի» բառին: Գոտի կապել, գոտեռորվիլը նշան էր կովի պատրաստվելու. ըստ այսմ գոտին կորսնցնել կամ գոտին իյնալ պիտի նշանակե «պարտվիլ, տկարանալ»:

ԱՊԱԺԱՄԱՆ 11. ես մնացած, չհասած:—Ապաժաման լափց եղեալ բացարություն մըն է, որ կնշանակե «աղեկ բանի չհասած»:

ԱԲԱՍՈՒՆԵԱԼ 16. Կոստանյանի բնագրին ունի արասունեալ, որ այլուստ անծանոթ է. ձեռագիր մը ունի առասունեալ. եթե ուշ դնենք ասոր քովի միանալ և յարդեալ բառերուն, որոնք «խոնարհցար, կարգի եկար» թարգմանեցինք, կրնանք հոս ալ ձեռագրին ընթերցվածը ճիշտ ընդունիլ և մեկնել առ-ասուն-եալ, այսինքն՝ ասուն մարդու կարգ անցար, մարդ դարձար:

ԱԲՎԻԲԱԿԱՆ 8. իզուր, պարապ տեղը:—Կոստանյան իբարմէ անցատ կգրէ առ վիրական, իբր թե առ նախդիր մը ըլլար: Բայց առ վիրական իմաստ չունի: Ավելի լավ է կարդալ մեկ բառով առվիրական, ինչպիս մտցուցած եմ բնագրին մեջ: Ասիկա առափր

«զուր, վայրապար» բառն է, որ հայտնի է Փիլոնին ու Լաստիկերցացինեն: «Գամագուականին» մեջ Մագիստրոս այս առափրը դարձուցած է բառափր (Հմմտ. Մենկիշյան, Գամագու. էջ 45), իսկ հոս նոր մասնիկով մը շինած է առվիրական: Ասոր իբրև հոմանիշ նույն տողին մեջ իբրար հունե կդտնենք ամայի և իզուր: ԱՐԴՈՒ 9. խոսք:—Այս բառը Մագիստրոս «Գամագուականին» մեջ ալ գործածեր է. ընթառեցից վետական արգոր, զոր ինքը կթարգմանե «ընձեռեցից յայտնի լուսաւոր բան» (տե՛ս Մենկիշյան, էջ 28):

ԱՐՏԱԼՈՒԽԵԼ 13. դուրս հալածվիլ, վտարվիլ, դուրս քշվիլ: ԱՐՏՕՐԻՆԵԱԼ 9. կարգե՝ օրենքի դուրս, չափագանց: Հմմտ, ԱԲ արտօրէն, արտօրինազոյն «արտաքո կարգի, անկարգ»:

ԲԱՂԱԴՐԵԼ 8. իբրար խառնել, հոս առնված է՝ գրվածքի մը միտքը հասկնալու համար՝ բառերը իբրարու հետ համեմատել, շարադասության կարգը քրքրել են իմաստով:

ԲԱՐՈՒԽԵԼ 9. մեղադրվիլ, դատապարտվիլ: Շինված է բարուք, բարուքն «մեղադրանք, զրպարտություն» բառեն:

ԲԱՑԱՍԱՑԵԱԼ 6. հայտնապես ու վճռաբար ա՛յնպիս կոչվիլ. Հմմտ. բացասել «հայտնի վճռաբար ըսել»: մեր բառը ասոր կրավորականն է: Բնագրին մեջ Կոստանյան դրած է երկու բառով՝ բաց ասացեալ, որ միտք չունի. ձեռագրական տարրերությանց մեջ կդտնեմ բացասացեալ, զոր իբր ավելի ուղիղ ձև՝ կառնում բնագրին մեջ:

ԲՈՍՈՐ 10, ԲՈՍՈՐԱԳՈՅՆ 13. երկուքն ալ կնշանակեն «կարմիր» և հոս առնված են «ամոթեն շիկնած, կարմրած, ամոթահար» իմաստով:

ԳԱՂԱՓԱՐԵԼ 15. իր վրա այնպիսի գաղափար ունենալ, կարծել, համարել:

ԳՈՍ 7. Կոստանյանի բնագրին մեջ դրված է գոյս. ուղիղ ձևն է գոս «կաս, հս», ինչպիս կդտնենք ձեռագրական տարրերությանց մեջ. հաշորդ կոյց բառեն աղդվելով է, որ բառը այս ձևն ստացեր է:

ԳՐՈՒԱԿ 10. Կոստանյանի բնագրին մեջ դրված է գրուակ. ձեռագրական տարրերություններ ալ չկան: Մարդ կփորձվի նախ մտածելու, թե ասիկա եղիշեի ծանոթ գրուակ «հանցավոր» բառն

ըլլա. Յորժամ գրուած՝ եղեն նոքա յիրս արքունի եւ մահապարացուն (Եղիշե, Մատ. տպ. Վենետ. էջ 143): Այս պարագային հիշյալ տողը կրնանք թարգմանել «նախատված, հանցավոր ու ամոթահար», Բայց երեմիայի բառդրին մեջ կդանենք գրուակ «զրուց» բառ մաւ, որ եթե առնունք «խոսք» իմաստով, կրնանք նույն տողը թարգմանել «նախատական ամոթալի խոսքը», ինչ որ նույնպես շատ հարմար կուգա տեղին:

ԳՐՈՒԱՆՈՂ 5. ծածուկ. դրված է իրը հոմանիշ՝ որշասոյզ «իր որչին մեջ սուզված, թաքնված, թաքուն, գաղտնի» բառին քով, ՆՀԲ և ԱԲ գիտեն արդեն գրուանող «գրվանին տակը զինքը ծածկող»: Այս առումը ձևացած է Մատթ. Ե. 15 (եւ ո՞չ լուցանեն ճրագ եւ դնեն ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի եւ լոյս տայ ամենեցուն՝ որ ի տանն իցնեն) և Մարկ. Դ. 21 (Միթէ զա՞յ ճրագ, զի ընդ գրուանաւ գնիցի կամ ընդ մահճօք. ո՞չ ապաքէն ի վերայ աշտանակի գնիցի) հատվածներուն ակնարկությամբ: Նույնպես ունի նաև Մենակիշյան, էջ 53:

ԳԻՄԱԾԽԵԱԼ 11. դեմք մը առած, դեմքը այնպես ձևացուցած. կազմված է դեմք և առնով բառերեն, բայց իմաստով կզանազանի դիմառութիւն և դիմառութիւն բառերեն: Բառիս հետ միասին գրված է տիպ «դեմք, կերպարանք», որ դիմառեալ բարդին առաջին մասին գրեթե կրկնությունն է: Ըստ այսմ աննունի տիպ դիմառեալ կնշանակե «դեմքդ անձունի կերպարանք մը առավ, քիթդ բերանդ թթվեցուցիր»:

ԳԻՒՐԱԴԱՏ 4. դյուրին դատված, դյուրին կարծված:

ԶՈՓԻԼ 16. Նեղվիլ:—Հայ զոփակ «դողալ, սարսուալ» բառն է՝ որ Մագիստրոսի քով նոր առում մը ստացեր է: Նույն առումով է նաև «Գամագտականի» մեջ. Ախորժեալ արտասանեմ զդատ արկածեաց զիր յանդականդ, զի զոփեսցիս (հեշտ է ինձ հայտնաբանել զգնիո թշնամանաց զիրս չափական, զի նեղեսցիս): Բառիս վրա ընդարձակ տե՛ս Մենակիշյան, էջ 43—44:

ՀՄԲԱՀԱԿԻԼ 3. ընդվիլ, ապարասանիլ, անհնագանդ գտնվիլ: Լավագույն գրչությունն է ըմպահակիլ, որ և ամպահակել, ըմպահակել, ծագած պահակ «պահապան, ոստիկան» բառեն: Գործածված է նաև «Գամագտականին» մեջ՝ ըմբարհակեալ ձևով. Հիկէն գեստրաս հտպտեալ ըմբարհակեալ կոկողանաս (որպես

զորսորդ ծածկյալ ապարասանյալ մեծամտես): Բառիս վրա տե՛ս նաև Մենակիշյան, էջ 54:

ՀՄԲԱՀԵԽԵԱԼ 10. Գրվածքիս ամենեն մութ բառն է, որ ուրիշ որևէ տեղ ավանդված չէ. Երեմիայի բառդիրքը չգիտե. զրիներեն մեկն ալ չէ կրցեր ճիշտ կարդալ բառը և օրինակեր է ընկրեալ, որ հայտնի կերպով սխալ է, քանի որ չափի կողմե չի հարմարիր: Կրնայինք ըմբոշխորեալ կապել ըմբոշխնել բային և թարգմանել «լիուլի վայելել» [նախատանքի ամոթալի խոսքը պարապտեղը լիուլի վայելեցիր (կերար)]: Բայց ասիկա մեր կողմեն հանդգնություն համարելով, կապասենք որ լավագույն աղբյուրները լուծեն խնդիրը և այս անծանոթ բառին ճիշտ նշանակութունը երևան հանեն:

ԹՄԲԵԱԼ 12. Կոստանյանի բնագրին մեջ դրված է քրմեալ, մյուս ձեռագիրներն ունին բմբեալ, բմբրեալ: Հայերեն կա քրմեալ բառ մը և կնշանակե «շաղվելով կակուղցած, թթված» սակայն այս իմաստը շատ չի հարմարիր հոս: Ուստի արգելք մը շկա ընդունելու բմբեալ ձեւ և թարգմանելու «Ետ քաշվեցար, ծեծ ուտելով» թմբած ինկար»:

ԹՈՂԵԱԼ 12. այս ձեին տեղ Կոստանյանի բնագիրն ունի խողեալ. ձեռագրական տարբերությանց մեջ կան խորշեալ և բողեալ ձեռքը: Թեև խողեալ բառ մը կա՛ Մագիստրոսի լեզվին մեջ (ասկե քետախողեալ, «Մագիստրոսի թղթերը», էջ 113), բայց անիկա հոս չի հարմարիր իմաստով: Ավելի լավ կկարծեմ ընդունել ձեռագրին բողեալը, որով հառաջ կու գա նաև Մագիստրոսին այնքան սիրելի նմանաձայն բառերու շարք մը. թքեալ բմբեալ բողեալ «ծեծ ուտելով» թմբած մնացիր»:

Ի ՑԱՅ 12. հայտնի կերպով:

ԻԲԱԶԵԿ 2. բանիմաց, տեղյակ, գիտակ: Այս սովորական իմաստով գործածված է նաև «Գամագտականի» մեջ. Իրազեկ զինէն ծանեալ (տե՛ս Մենակիշյան, էջ 59):

ԻԻՂԱԳՈՐԾ 14. շատ պարզ կազմությամբ և իմաստով բառ մէ, որուն վրա տե՛ս կիտ բառին տակ:

ԽԵՂԵՑԵԱԼ 2. Կոստանյանի բնագրին մեջ բառս խանտեալ ձեռվ է. մեկ ձեռագիր ունի խանդեալ. Մենակիշյան (էջ 11) մեջ բերելով այս օրինակը՝ դրած է խանրեալ ձեռվ, բայց առանց նշանակու-

թյունը որոշելու: Հին մատենագրության մեջ գործածված է «նախանձիլ, նախանձեն վասիլ, հանդիմանել, նեղել, խոռվել, շարշարել, տրտմեցնել, խայտառակվել» իմաստներով: Այս իմաստները բոլորն ալ կրնան հարմարիլ, բայց հետևելով հաջորդ բառին՝ անոնցմ կընտրեմ «նախանձեն վասիլ»:

ԽՈՂԽՈՂԵԼ 14. Հայերենի մեջ ծանոթ է «մորթել, փողոտել» իմաստով. մյուս կողմե ունինք զվո. խովսուել, որ Երևանի բարբառով կնշանակե «քրքրել, որոնել, փոտոտել»: իսկ Նոր-Ձուղայի բարբառով «փայտ մը ծակե մը ներս խրելով մեջը խառնըշտկել՝ բան մը որոնելու համար»: Այս երկու իմաստներն ալ կհարմարին տեղին. հատկապես երկրորդը՝ իբրև զուտ հոմանիշ քովի յուղել և խուզել բառերուն: Գեղեցիկ պատկերով մը կներկայանա մեր աչքին Մագիստրոսի թղթակիցը, որ թանաք-գրիչը փնտոելով սեղանին առջև կանցնի պատասխան գրելու իր հզոր մրցացին, գրիչը շարունակ կթաթիս ու կզարնե թանաքամանին մեջ, գրեթե կմորթե կսպաննե թանաքամանը, բայց ապարդյուն, ոչինչ կրնա զրել, ու հետո գոռող զլուխը վար կկախն և մրցակցին հզորությունը կիսուտվանի:

ՍԵՔԵԼ 1. 5. ցնդարանել, Հայերենի մեջ արդեն ծանոթ է ծեֆել «ծումոել, խոսքը խեղաթյուրել» նշանակությամբ: Կրկին նախադասությանց մեջ ալ խոսքին ընթացքին հարմարելու համար՝ աշխարհաբար թարգմանության մեջ մենք դրինք «ցնդարանել», ողմիկնույն է «խոսքը խեղաթյուրել» նշանակության հետո—Բառիս վրա կիսուի նաև Մհնկիշյան (էջ 52), բայց բոլորովին տարբեր արդյունքի կհասնի: Երկու նախադասություններեն առնելով միայն երկրորդը (Որշասոյզ եւ գրուանող, ծերեալ, նոծեալ, ապազոնեալ) և ամբողջը իրարու նույնանիշ համարելով՝ ծեֆել կդնե «ծածկել», ինչպես են որշասոյզ եւ գրուանող: Սակայն Մենակիշյան, թեև հիշած, բայց անդրադարձած չէ բառին առաջին վկայության վրա (Մրգուզ փանաք ծրգեալ ծերեալ), ուր «ծածկել» իմաստը շատ անհարմար է: Եթե Մագիստրոսի յուրաքանչյուր տողի բառաշարքը անպատճառ հոմանիշներե բաղկացած ենթադրենք, առաջին տողին մեջ ալ ծեֆեալ պիտի նշանակե «աղտոտ, գծուձ» իրբե հոմանիշ մրգուզ, փանաք և ծրգեալ բառերուն: Երկու տարբեր նախադասությանց մեջ միկնույն բառը եր-

կու տարբեր իմաստով դնելն ալ շատ անպատճէ է: Ուստի կենթադրեմ, թե ծեֆեալը երկրորդ վկայության մեջ որչասոյզ և գրուանող բառերուն հոմանիշ չէ, մանավանդ որ հեղինակու ասոնք իրարու հետ եւ շաղկապով միացուցեր է, ասով բաժնելու ուղելով այս երկու համագորները նախադասության մյուս եղբան և ցուցնելով որ ծեֆեալը անկախ բառ մէ:

ԿԱԾՆԱԿԱՆ 14. այս բառը երկրորդ անգամ գործածել է Մագիստրոս «Առ հայրն Անանիա» գրված թուղթին մեջ. Զնախուստ բաղամիութեան մերում թուի մեզ եթէ զբուր պատաշումն տարբերական տարրական ի ձեռն կածնական մակտառութեան բողոքակալ քեզ իբրև զատուգական լրտեսի ոչ զանդաղեցաք ազգել զկածառական հանգիսի մակթորական ասրափառ տեղման նախահօրն (էջ 120): Կոստանյան էջ 267 ձեռագրական տարբերությանց մեջ կդնե պանական ձև մը, իսկ էջ 325 այս բառը հիշելու ժամանակ կզրե կածնական: Հավանաբար վերջինը տպագրական սխալ մէ, թեև գրիպակներու ցանկին մեջ հիշատակված չէ. և որովհետև Մրգուզ փանաքին մեջ ալ դրված է կածնական՝ առանց որևէ ձեռագրական տարբերության, ուստի պետք է ընդունիլ, թե բառին հարազատ ձեռ է կածնական: Ասիկա կազմը-ված է ական մասնիկով կածին արժատեն, որ կգտնեմ Երևմիայի բառգրքին կրկին տպագրությանց (Ա. տպ. էջ 152, Բ. տպ. էջ 219), ինչպես նաև Փետրիմալճյանի Հայկագյան բառարանին մեջ (տպ. Կ. Պոլիս, 1844) «գրիչ» նշանակությամբ, որով կածնական կըլլա «գրչի, գրչագրական», և շատ լավ կհարմարի կածնական մակտառութեան (գրչագրական վերտառության) դարձվածին, որ է նամակ կամ այլ գրություն:

ԿԻՒԴ 14. Կոստանյանի բնագրին մեջ տպված է կիստ, առանց ձեռագրական տարբերությանց. այսպիսի բառ մը չեմ զտներ որևէ տեղ. բայց իս ուղղելի է կիտ (այն է կիւ բո), որ ծանոթ կիւ ուժութ, խեժ» բառն է և նախորդ իւղագործ և հաջորդ կածնական (գրչական) բառերուն հետ միասին գործածվելով՝ կցուցնե որ խոսքը թանաքի և գրչի մասին է: Ինչպես հիմա, նույնպես և հին ժամանակները, մելանի զլիսավոր տարրը խեժն էր: Ահա թե ինչ կորե Villon, Nouveau manuel complet de la fabrication des

Ո՞վ է Սմբատը: Եթե Սմբատ Բ-ն է, սա ո՞չ թե Աշոտ Գ-ի հայրն է, այլ որդին և Գագկի Ա-ի եղբայրը: Եթե Սմբատ Ա-ն է, ի՞նչպիս կարող ենք ասել «որդույ Երկաթայ», այսինքն Աշոտ Բ-ի, երբ գիտենք, որ Աշոտ Երկաթը Սմբատ Ա-ի որդին է:

Ըստ իս հատվածի մեջ երկու բառ փախցրել է գրիշը: Աշոտ Գ-ի հիշատակությունից հետո՝ բնագրում գրված պիտի լիներ «որդույ Աբասայ» և իրոք որ Աշոտ Գ Ողորմածը՝ Եղբայր Աշոտ Երկաթի, որդին է Սմբատ Ա-ի, ուրեմն «որդույ Սմբատայ» բառերով պետք է հասկանալ Սմբատ Ա-ը: Բայց այն ժամանակ «որդույ Երկաթայ» չի հարմարում, որովհետեւ սովորաբար Աշոտ Երկաթ անունով մենք հասկանում ենք Աշոտ Բ-ը: Սակայն ակներն է, որ Ուռհայեցու մոտ Երկաթ է կոչվում ոչ թե Աշոտ Բ-ը, այլ Բագրատունյաց հիմնադիր Աշոտ Ա-ը, որ Սմբատ Ա-ի հայրն է:

Թե մեր այս սրբագրությունը և Աշոտ Երկաթի մասին տված բացատրությունը սխալ չէ, ցույց է տալիս նաև Ուռհայեցու երկրորդ ճյուղագրությունը (էջ 86). «Յայնժամ զարթուցեալ մանուկ մի ութ և տասն ամաց՝ Գագիկ[Բ] անուն, ի նոյն շառաւիղէն Բագրատունեաց, որդի Աշոտոյ արքային [Բնավորը], որդույ Գագկայ [Ա], որդույ Աշոտոյ [Գ], որդույ Աբասայ, որդույ Սըմ-

բատայ [Ա], որդոյ երկաթայ [Աշոտ Ա]»։ Այս ճյուղագրությունը ուղիղ է և բոլորովին համապատասխանում է մեր մյուս պատմիչներին։

Ուռհայեցին մի երրորդ անգամ էլ (էջ 218) տալիս է Բագրատունի թագավորների ճյուղագրությունը. «Սպանաւ Գագիկ շահնշահն [Բ], որդի Աշոտոյ [Բռնավորը], որդոյ Գագկայ [Ա], որդոյ Մմբատայ, որդոյ Երկաթայ, Բագրատունի ազգաւ»։ Այս ճյուղագրությունը ավելի պակասավոր է։ Նախորդ երկու հատվածների համեմատությունից երկում է, որ «որդոյ Գագկայ» բառերից հետո պետք է ավելացնել «որդոյ Աշոտոյ, որդոյ Արասայ»։ Այս բառերն ել գրի ուշագրությունից սպրցել են և ընագրում անպատճառ պիտի գտնվեին։

57. ՆՈՒՅՆ, էջ 300—301. «Յայսմ ամի մեռաւ սքանչելագործն եմ ճգնաւորն Մարկոս միայնակեացն, որ զամս 65 կայր ի խոտաճարակութեան վարս... և էր բնակեալ ի յանջրդի լեառն մի ի Մոկացն գաւառին, որ ասի Կոնգոնակ, որ էր ասորի Խարսինակըն, մերձ ի յաշխարհն Մարաշ քաղաքին»։

Մոկաց բառի դեմ երեք ձեռագիր ունին Կոկաց, բայց հրատարակիչները ընտրել են Մոկաց ձեզ։ Ըստ իս ուղիղն է Կոկաց։ Մոկաց գավառը շատ հեռու է Մարաշից ու Կիլիկիայից։ Մարկոս ճգնավորի մասին խոսում է նաև Վարդան պատմիչը (տպ. Վենետիկ), ԿԶ հատվածում, նույն մանրամասնությամբ, ինչպես Ուռհայեցին, և ավելի պարզ Ուռհայեցու մոտ որոշ կերպով չի հասկացվում, թե ինչն էր կոչվում Կոնգոնակ։ Լե՞ռը թե գավառը. Վարդան ցույց է տալիս, թե լեռան անունն է Կոնկոնար, որ միենույն Կոնգոնակ բառն է։ իսկ գավառը կոչվում է Կոկաց և ոչ թե Մոկաց։

58. ՆՈՒՅՆ, էջ 28. «Յորժամ եկիր առ մեզ ի յԱշոտոյ շահնշահէ և հոգիական գաւակէ մերմէ և դարձուցէր զամենալն սըրտմբառթիւնս ի նմանէ և տարար զբագրատ ի Պապն Յանձաւացին։ Դու և ես Սատ Թոռնեցին պոտոսպաթարն»։

Ստորագծյալ մասը երուսաղեմի տպագրության մեջ «դոյնպէս և զՄմբատ» ձեն ունի։ Հրատարակիչները ամենակին ուշագրության առած շեն որ միենույն իշխանը՝ էջ 18 հիշվում է Ստատ

անունով. «Իմաստասէրն կոն և Ստատ իշխանն թոռնեցին։ Մինչեւ անգամ երկուսը իբր տարբեր անձեր հիշվում են ցանկում։ Ստատ թոռնեցի և Ստատ Թոռնեցի. երուսաղեմի տպագրության մեջ Ստատ ձեմ դեմ էլ գտնում ենք Սմբատ, որով տէսնվում է, որ երուսաղեմի օրինակը հետևողական է եղած։ Դու և ես Սատ հայտնի կերպով սիալ է. ուստի կամ պետք է ուղղել (իբր մեկ բառ) Եսսատ, կամ համաձայն նախորդին՝ Ստատ։ Սմբատի պես հանրածանոթ մի անուն հազիկ թե կարելի լիներ աղավաղել. իսկ Ստատ՝ որ ուրիշ տեղ բնավ շպատահող մի անուն է, մեծ դյուրությամբ կարող էր աղավաղվել։

59. ՆՈՒՅՆ, էջ 221. «Եւ ահա գայր Վասակ՝ հայրն Տէր Բարսեղի և եղբարք նորա՝ Հասան և Գրիգոր և Ապլչապակ»։

Վերջին բառի դեմ երեք ձեռ. ունին Ապլչափապ, երուսաղեմի տպագիրը Ապլչափապ։ Առաջին երկու ձեռքը ուրիշ տեղ դոյնություն շունին. բայց Ապլչափապ գիտե Ուռհայեցին՝ էջ 11. «Կ որդեաց նորա Ապլչափապայ և Վասակայ և Սարէ և ամենացն զօրացն տայր թագաւորն Հայոց գաւառու և զիշխանութիւնս»։ Բատայսմ ուղղելի է Ապլչափապ։

60. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՉԱԿԵՑԻ, տպ. Վենետիկ, 1865, էջ 18. «Եւ դարձեալ թագաւորէ եղբայր նորա Խոսրով(Դ) ամ մի և ապա Արտաշիր, և Արտաշէս թագաւորէ յետ նորա»։

Գրվածքի այս վիճակից երկում է որ Արտաշիր և Արտաշէս տարբեր անձեր են, ինչպես նկատում է նաև Կիրակոսի Հրատարակիչը (նույն էջ, ծան. 1)։ Բայց անշուշտ այսպես չէր բնագիրը և ուներ պարզապես «...և ապա Արտաշիր (որ և Արտաշէս) թագաւորէ յետ նորա»։ Այս բանը ապացուցվում է Կիրակոսի Հաջորդ էջի մի տողով. «Յայսմհետէ բարձաւ թագաւորութիւնն Արշակունեաց յետ Արտաշիրի, որ թագաւորեաց ամս վեց»։ Եթե Արտաշիրը վերջին թագավորն է, ուրեմն Արտաշէս ըստ Կիրակոսի տարբեր է Արտաշիրից³։

61. ՎԱՐԴԱՆ ՊԱՏՄԻՉ. տպ. Վենետիկ, էջ 155—156. «Տարաւ իւրով ծախիւր և գրաստիւր զմեզ և որք ընդ մեզ էին վարդապետք եղբայրը մեր Սարգիս և Գրիգոր, և աւագերեցն Տիփիսաց տէրտէրն»։ Այսպես է նաև էմինի հրատարակության մեջ, էջ 204։

Հատվածի վերջին տողում ավագերեց և տերտեր իրար ռ.ն.-հարմար են. Տփխիսի քահանան կամ ավագերեց էր, կամ պարզ տերտեր. միաժամանակ շէր կարող երկուսն էլ լինել: Խոսքի կազմովթյունից այնպէս է երնում, որ երկուսից մեկը հատուկ անուն է: Եթե Ավագ բառն առնենք իրը հատուկ անուն, երեց և տէրաէր թեև հօմանիշ, բայց ավելորդ կրկնություն կլինի: Ըստ իս իրբ հատուկ անուն առնել պետք է Տէրաէր բառը, որով թէ՛ խոսքի շարադասովթյունը ճիշտ կլինի և թէ նախորդ խոսքի համարությունը պահպատ կլինի (նախ բացահայտիչ, հետո բացահայտյալ). այսպէս՝ «վարդապետք եղբարք մեր՝ Սարդիս և Գրիգոր, և աւագերեցն Տփխեաց՝ Տէրտէրն»:

Տէրաէր իրը հատուկ անուն՝ զարմանալի չէ, որովհետև ունինք ուրիշ տեղեր՝ Տէր Խորձենացի (Խոր. Գ. ծդ. Փարագ. Ժ), Տէր եպս. Կամինական (Կոր. էջ 14), Տիրացու վրդ. Վանանդեցի (Մեծոփ. յիշատ. Ա), Տիրացու եպս. Թագեսու առաքելոյ վանուց (Օրբել. Կթ), Տիրացու եպս. Վասպուրականի (Կիր. Ե), Տիրացու քահանայ Մշեցի (տե՛ս Ցուցակ. ձեռ. Թավրիզի, էջ 113 թ), Սարկաւագ եպս. Գողթան (Օրբել. Կթ), Սարկաւագ վրդ. Գետկայ վանից (Կիր. ԺԱ.), Սարկաւագ բորեպիսկոպոս Ստեփաննոս Գ կաթուղիկոսի Աղոստանից (Կիր. Դ), Երիցակ եպս. Սիմեաց (Օրբ. ԺԹ, ԻԱ, ԽԵ, ՀԱ):

62. ՎԱՐԴԱՆԱՅ ԲԱՐՁՐԲԵՐԴՅԻՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՅ ԴԱԼԻԹԻ, տպ. ի յԱժդարիան, 1797, էջ 140. «Ընդունայն է ամենայն մարդ մսեղի. Սիմաքսո՝ որպէս շոգոյ լի է. հագագի է նման, որ է շնչոյ. մսեղի, որ զկնի մարմնոյ հետկի»:

Պետք է ուղղել շոգոյի «գոլորշի, շոգի»:

63. ԱՆՍԻԶՔ ԱՆՏԻՈՔԱՅ (Assises d'Antioche) Վենետիկ, 1876, էջ 81. «Եւ թէ սերեֆիկն (=արար. սրբավոր) ոսկի զնէ կամ արծաթ, ու սղալուրդի, նա իր է սղալն. զի ճանշելն իր գործ էր. է՞ր սղալեց»:

Ստորագծյալ բառը հրատարակիլը մեկ բառ է համարում, իրը «սիսալիլ» և թարգմանում է «Et si le banquier achetant de l'or ou de l'argent, se trompait, c'est a' lui la faute»

Պետք է կարդալ երկու բառ՝ սխալ ուրդի «սիսալ պատահի», Աւրդիլ «պատահիլ» միջին հայերենի սովորական բառերից մեկն է, որ գործածված է նաև Անսիզքում. Հմմտ. «Եթէ ուրդի որ լիճ ճորտ առանց պարունին համնաց բաժնի» (էջ 13). նույնպես և էջ 15, 23, 29:

64. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐՁՆԿԱՅԻՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ս. ԱԻԵՏԱՐԱ-ՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ (շարայարութիւն Շնորհալույ), տպ. Պոլիս (Հասանփաշա խան), 1825, էջ 441. «Նույնպէս և այժմ ո՛չ ի ձիս և ի ջորիս, այլ յիշկան ևեթ նստի (Յիսուս). որպէս զի թէ ումեք վասն տկարութեան և կամ վասն երկար ճանապարհի պիտանացու լինիցի՝ այսու լցցուք զկարիս մեր և ու ամելիս իգանս խնդրեցուք, որպէս բազումք»:

Ուղղում եմ ավելի սիգանս «ավելի պերճանքներ». Հմմտ. Ոսկ. մ. գ. 13, որից փոխառյալ է հիշյալ հատվածը. «Ճիշկան ևեթ նստել և ընդ այն աւելի ինչ սիգանս ու խնդրել»:

65. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐՁՆԿԱՅԻՈՅ ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԻՑ... տպ. Նոր-Նախիչևան, 1792, գլուխ թ. էջ 13. «Երկոտասան կենդանակերպն որ յերկինս են, ի վերայ աշխարհիս բաժանած են. զի յորժամ ի խոյն մտանէ արեգակն ուատպապ պահամալ լինի»:

Համալ բացարում եմ արար. լ. համալ կենդանակերպը՝ որ համապատասխանում է մարտ ամսվան. պահամալ լինում է պրս. լ. համալ «Համալ կենդանակերպի հետո»: Իսկ ուատպապ նո՞ւյն է արար. շահ մսեն «Արշի համաստեղությունը»:

66. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆԻ ՊԱՍՄՈՒԹԻՒՆ, Հրտր. էմինի, էջ 123. «Ցետ այսր գործոյ, մինչ վարէր զիշխանութիւնն ճոխաբար Գրիգոր, ու ժուժացեալ շարին՝ արկ նախանձ ի սիրտ Բարգենի՝ եղոր Փիլիպպէի, որոյով Վասակայ... և սպան Բարգէն զԳրիգոր»:

Ստորագծյալ բառը պետք է ուղղել ուրդոյ, Վասակ ուներ միայն երկու որդի՝ Փիլիպպէ և Սահակ. Փիլիպպէ թողեց երեք որդի՝ Բարգեն, Վասակ, Աշոտ: Այս Բարգենը թշնամանլով Սահակի որդի Գրիգորի հետ, սպանեց նրան: Ահա ա՞յս է վերոշիշյալ Բարգենը: Սլունյաց իշխանների մանրամասն ազգահամարը տալիս է Օրբելյան՝ գլուխ ԾԴ, որ Բարգեն Փիլիպպէի որդին է և Վասակի թոռը: Հմմտ. «Մեռանի Փիլիպպէ և թողու երիս

որդիս՝ զԲարդեն, զՎասակ և զԱշոտ (էջ 217). իսկ յետ աւուրց վասն դոյզն պատճառի ի վերայ հայրենեաց՝ պատերագմին՝ ընդ իրեարս Բարգէն՝ երեց որդի Փիլիպէի և Գրիգոր՝ որդին Սահակայ. և Հարստեալ Բարգէնի զԳրիգոր դիաթաւալ կացուցանէ (էջ 217). Տէր Բարգէն և Տէր Վասակ և Տէր Աշոտ՝ իմ Փիլիպէի որդիք» (էջ 152): Հմմտ. նաև Յովհ. Կթ, գլուխ ին:

67. ՆՈՒՅՆ, էջ 135. «(Սմբատ) զմայրն իւր զՇուշան և զկինն իւր Սոփի, որ էր դուստր Դերենկին և քոյր Գագկայ թագաւորելոյն ի Վասպուրական, փոքրիկ ստնդիայ տղայիւ միով, և զկինն Սահակայ՝ եղբօր իւրոյ, որ էր դուստր Բգեշին Գուգարաց, տարեալ ամրացուցանեն յանառիկ ամուրն Երջնկայ և ինքեանք փախստեայ լինին: Սմբատ զնայ առ աներն իւր Գագիկ ի Վասպուրական և Սահակ առ իւր աներն ի Գուգարաց»:

Հատվածի առաջին մասից երկում է, որ Սմբատի կինը Գերենիկի աղջիկն է և Գագիկ Արծրունու քուլը. Հետևաբար մի քիչ ցած դրված աներ բառը պետք է Հասկանալ «աներորդի». սա սակայն սխալ չէ, այլ ավելացնում է մի օրինակ ևս Նշթ-ի հիշած այն վկայությանց վրա, որոնցից երկում է, որ աներ գործածված է նաև «աներորդի» նշանակությամբ:

68. ՆՈՒՅՆ, էջ 137. «Գայ ապա և առ Յուսուփի Աշոտ՝ Եղբայր Սմբատայ արքայի և Հնազանդի նմա. ըմբռնէ նա ի պատերագմի և զՄուշեղ՝ զորդին Սմբատայ»:

Պատմությունից գիտենք, որ Սմբատ Ա Յուսուփի գեմ ուղարկեց իր Աշոտ և Մուշեղ որդիներին. Սմբատ շուներ Աշոտ անունով մի եղբայր. եթե այսպես լիներ, ուրեմն Աշոտ Ա Համանուն մի որդի ունեցած պիտի լիներ, ինչ որ Հայոց մեջ սովորական չէ: Այս պատճառներով վերի հատվածի մեջ Եղբայր պետք է ուղղել որդի:

69. ՆՈՒՅՆ, էջ 201. «Ի վախճանէն Գէորգայ կաթուղիկոսին մինչ ի ժամանակս յայս Անանիայի (Մոկացոյ), յաւուրս հինգ կաթուղիկոսաց՝ Մաշտոցի, Յովհաննիսի, Ստեփաննոսի, Եղիայի և Թէոդորոսի»:

Կաթուղիկոսների այս շարքը պետք է Հասկանալ Հետեւալ ձևով.

Գեորգ Բ. Գառնեցի	876—897
Մաշտոց	897
Յովհաննես Զ.	897—924
Ստեփաննոս Բ.	924—925
Թէոդորոս Ա.	926—936
Եղիան	936—941
Անանիա Մոկացի	941—965

Թէոդորոսի հաջորդն է Եղիշե. այսպես ունին Ասողիկ Գ. Է. Միւ. Անեցի Դ. և նույնիսկ Օրբելյան՝ էջ 366 դրված ցանկի մեջ: Քսա այսմ վերի հատվածումն էլ Եղիայի ուղղելու է Եղիշայի. ձեռագիրներից արդեն մի օր. ունի Եղիսէի:

70. ՆՈՒՅՆ, էջ 211. «Հասանէ վախճան կաթուղիկոսին Հայոց տեառն Անանիայի և փոխեն զնա ի Հանգիստ ի վանսն Արգինայ: Եւ թագաւորն Աշոտ՝ որդի Սմբատայ, առնէ ժողով եպիսկոպոսաց և Հարց սրբոց... ընտրեալ զՎահան... օծանեն զնա Կաթուղիկոս Հայոց»:

Այս Անանիան է Անանիա Մոկացի, որ վախճանվեց 965 թվին և որին հաջորդեց Վահան: Այս թվին Հայոց թագավորն էր Աշոտ Գ Ողորմած, որդի Արքաի և ո՛չ թե Սմբատի: Արք'ս էր որդի Սըմբատի: Ուստի վերի հատվածը ուղղելի է Աշոտ՝ որդի Արքայ, որդով Սմբատայ:

Արտագրողները երկու բառ փախցրել են:

71. ՆՈՒՅՆ, էջ 163. «Ազդէ զայս... և միւս իշխանին որ ի Գեղամ գաւառի լինէր՝ Գրիգորի, Սուփանայ որդուց՝ Գարուռայ և Սահակայ»:

Խոսքը թե՛ անմիտ է և թե սխալ. Գարուռ և Սահակ իրար եղբայր չեն և ոչ չէ Սուփանը ունի երկու այս անոն որդիներ: Գիտենք միայն Գրիգոր Սուփան իշխանը, որդի Սահակայ, և եղբայր Հրահատի և Գագիկի, Գրիգոր Սուփանի որդիներն էին Վասակ Գարուռ և Հրահատ, իսկ Վասակ Գարուռի որդիներն էին Գրիգոր Սուփան, Սահակ և Վասակ: Ամեն ինչ կուղղվի, եթե մեկ տառ և կետագրությունը փոխենք Հետեւալ ձևով. «և միւս իշխանին՝ որ ի Գեղամ գաւառի լինէր՝ Գրիգորի Սուփանայ՝ որդույ Գարուռայ, և Սահակայ» (լուր տվին Վասակ Գարուռի որդիներին՝

Գրիգոր Սուփանին և Սահակին): յ տառն էլ կարելի է պահել, եթե բառերի տեղափոխությամբ ասենք՝ «...Գրիգորի Սուփանայ և Սահակայ՝ որդոց Գաբրուայ»:

72. ԱՏԵՓԱՆՆՈՒԻ ՍԻՒՆԵԱՅ ԵՊՍ. ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻԹԻՒՆ ԸՆԴՇԼՄ ԵՐԿԱԲՆԱԿԱՅ, տպ. Պոլիս, ԱՄԵ, էջ 8. «Սպառազինեալ հոգեւոր զինուն՝ յանդուգն յարձակմամբ և յախուռն համարձակութեամբ առնում ոպղոն և դիողոն («զենք») և իշանեմ և թալպիովթ («ամրոց»), մենամարտեալ ընդ ստուերազէն ճակատու հերձուածուացնա»:

Պետք է ուղղել ստուարազէն «ծանր զենքերով զինված»։ նորագուտ բառ. չունին թիւ նշի և թէ ԱԲ։

73. ԿՈՍՏԱՆԴԻՒՆ ԵՐՁՆԿԱՅԻՈՅ ՏԱՂԵՐԸ. տպ. Վենետիկ, 1905, էջ 169.

Զերդ բզլուսին սուրաթ բոլոր,
Շուրջ երեսին մազերն ոլոր.
Այնով արեր է շատ մոլոր,
Ունցափ լուսով յիս ծաթեցաւ։

Հրատարակիւը՝ էջ 169 և 201 լի կարողացել ոնցտի ձեին մի բացատրություն տալ. ըստ իս պետք է կարդալ ոնց տիւ «օրվա պիս, որպես այդ»։

74. ՆՈՒՅՆ, էջ 174.

Պլառով իմաստուն սախի,
Սախի լուսեղէն մեզ կան,
Կանզնին ու դինի մեզ տան,
Որ ևս խմեմ տօստ օֆան։

Հրատարակիւը վերջին ստորագծյալ բառը հասկացել է պրատուր «սիրելի» և արար. հուզզա «աման դեղոց» (տե՛ս էջ 205 և 206 բառացանկը): Պետք է կարդալ իբրև մե՛կ բառ՝ տօստովան, որ մի շատ սովորական բառ է և մինչև անդամ գտնվում է Առածեռում դօստաքան ձեռվ և «պատժանակ, բաժակ, մեծ գավաթ» նշանակությամբ։ Գրված է նաև տօզուան (տե՛ս Էմբ. առ Վեն. տպ. Վենետ. 1865, էջ 241): Փոխառյալ է պրա. Հայկաց ձօտկան (թթր. tostakan, վրաց. ღოხօյշան դրսաքանի) հոմանիշից։

75. ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵԽԱՅԻՈՅ ԳԻՐՔ ՔԱՐՈՉՈՒԹԵԱՆ, որ կոչվ Զմեռան հատոր. տպ. Պոլիս. ԽԵԶԹ, գլուխ ի, էջ 114 ա. ասվում է առյուծի համար, թե քայլելուց հետո «Ցետովն զհետն ծածկէ առիւն»։ Գլխատառ Յ փոխելով ձ կարգում ևմ ձեառվն. —առյուծը պոշով ոտքի հետքերը ջնջում է։ Այսպես պիտի ուղղել նաև գլուծ. էջ 586 «յետովն զհետն ծածկէ» (առիւն)։

76. ՆՈՒՅՆ, գլուխ ՃԺԱ, էջ 505. Նոյի տապանի կազմվածքը համեմատելով մարդու հետ՝ գրում է. «Եւ յիսուն կանգունն՝ զի մանուկն յարգանդին քառասնօրեայ հոգեորի և յիսուն օրեայ շարժի. երեսուն կանգուն բարձր և պապ լինի յերեսն ամենին»։ Վերջին բառերը պետք չե հասկանալ «ամենքի երեսը», որ իմաստ չունի. այլ պետք է կարդալ յերեսնամենին. այսինքն թե տապանի 50 կանգուն լայնությունը համեմատական է սաղմի հիսուրյաշարժման, իսկ 30 կանգուն բարձրությունը համեմատվում է նրան, որ մարդ 30 տարեկանին դառնում է պապ (մեծ հայր), Վերջին կետը շահտի զարմացնե մեզ, որովհետև նույն Տաթևացին գլուխ նԱ, էջ 205 գրում է. «Մինչև յեօթն ամն երախայ կոչի և տղայ, և տնկականն կատարի՝ որ է կերակրիլն, սնանիլն և աճիլն. իսկ յորժամ կրկնի հօթն ամն ի տասն և երեք ամն, ցանկական մասն կատարի և կարէ զնմանն ծնանիլ»։ Այլուր Տաթևացին ավելի որոշ կերպով գրում է, թե պսակվող աղջկա տարիքը պիտի լինի 12, տղայինը 14. (էգն շուտով աճէ և կատարի քան զարուն. վասն այն երկոտասան տարւոյ աղջկանն պսակ դնեն, այլ կտրիճն 14 տարւոյ պիտի. գլուխ ժԵ, էջ 90 թ): Այս հաշվով 30 տարեկան մեկը կարող է պապ լինել:

77. Նույն, գլուխ ՃԺէ, էջ 432. քահանայացու մարդու արտաքին հատկությանց վրա խոսելով՝ ասում է. «Չափ մարմնոյ ոչ կարի երկայն և ոչ փանաքի. ոչ թուխ և ոչ սպիտակ, այլ ցորենագույն, զի երկուքն պակասութիւնը են։ Նոյնպէս և հերն ո՛չ առավել սկ և ոչ կարմիր, այլ խարտեալ»։ Այս վերջին բառը նշանակում է «խարտոցով քերած»։ որ միտք շոնի մազի համար. նույնպէս կարելի չէ առնել «խուզված, կտրված» իմաստով, որովհետև խոսքը ո՛չ թե մազի երկարության, այլ գույնի համար.

է: Այս պատճառով համարում եմ հասարակ վրիպակ՝ փոխանակ խարսხաշ:

78. ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒԶԱԿԻ ԴԻՒԱՆԸ (Հրտր. Ա. Չոպանյան, Փարիզ, 1902), էջ 61 կարդում ենք.

Սոխախովդի ի վար կուգի, լուկ մէկ մի ուշիկ ձայն էած.

Դառնամ ի յետիս նայիմ, խօշ եարս է կանգներ՝ շար

շապկանք.

ԶԼԱՀԿԻԿՆ թուզ ու մուլ կապեր, զկէս ճակտին թողեր է ի բաց,
Թուլս աշուին ժարուր քաշեր, էտ քաֆրիկդ ելեր յօրինաց:

Ստորագծյալ բառը պետք է կարդալ (մի՛ բառով) շարշապ-
կանց «շարե շապիկ հագած». շապկանք բառ գոյություն չունի
լեզվի մեջ և հանգով էլ չի հարմարվում մյուս երեք տողերին.
մինչեռ շապկանց բառը կա՛ երևանի, Սեբաստիո և Տիգիսի բար-
քառներում և հարմար է գալիս հանգին⁸:

79. ՆՈՒՅՆ, էջ 64.

Հա՛յ իմ սերկակի մորճիկ, լինչ ատեն էիր սիրելու.

Զար փուշն է ի քեզ պատած, որ չկա ճարակ մտնելու.

Զար փուշ պատողին ճկրուն՝ ես հագնիմ նաղան կոռ,

Գամ մտնում ու վարդ քաղեմ, թող հոգեկս ի տեղն ենու.

Երբ Քուշակ ուզում է հագնել մի բան՝ որով ազատ պիտի կա-
րենա գալ ու փուշերի մեջ մտնել, այդ բանը պիտի լինի մի տե-
սակ պաշտպանող ծածկոց. այս մտածումով վերի անստույժ բա-
ռը ուզում եմ կարդալ հաւանիսու՝ «գեմքը՝ երեսը պաշտպանող
պրամ»=պրս շահանշաու յանչառ-ի-րն, որ թերեւն *հաւանիկու գավա-
ռական մի ձև էլ ունեցած լինի՛: Ճաւան «զրա՞» բառը արդեն
գործածական է միջնադարյան հայերենի մեջ, ինչպես ունին դր.
եր. Մարթին. Լմբ. առ կե. տպ. 1865, էջ 239, թլկուրանցի՝ էջ 54
հմ:

80. ՆՈՒՅՆ, էջ 72.

Երկու ծամ դեղձան ունիս, ի դնչիդ մէջն կայ նշան,

Զոներդ ալ իլ զարարել ու կերթայ ի Մսրայ թալան,

Շատ առ շատ գերի բերէ, շատ խօճա ու շատ պաղերկան:

Ստորագծյալը՝ որ իմաստ չունի, կարդում եմ իլլար արել,
որ է թրք. պրս. ՁԱՅՆ իլյար «արշավել»:—«Զուներդ ալ իլլար

արել ու կերթայ ի Մսրայ թալան» նշանակում է թե ունքերը ար-
շավանքի է պատրաստել և Մսրը կողոպտելու է զնում, որից շատ
ու շատ գերի պիտի բերե: Վերջին տողը կարելի է կարդալ շատ
ու շատ գերի, բայց ավելի լավ է շատ առ, շատ գերի (շատ ավար,
շատ գերի)⁹:

81. ՆՈՒՅՆ, էջ 74.

Սէրն ալ կամ ուտի ունի ու ձեռվի զէտ էս հարամի,

եկէք հարամին տեսէք, հարամին որ նետ մի չունի.

Անդուր ՚ անսպառ եկեալ անգրող հոգիս կու տանի:

Ստորագծյալ բառերը հարմար չեն տեղին. ըստ իս պետք է
ուղղել անքուր ՚ անսպապ «առանց թուրի և առանց զենքի».
այսպիսով շատ հարմար կդա նախորդ տողին.—սերը մեկ ավա-
զակ է, որ ո՞չ նետ ունի, ո՞չ թուր և ո՞չ այլ գենք, բայց գալիս է
ու հոգիդ տանում: Կերմի նաև որ առաջին տողում կամ շաղկապը
պետք է կարդալ գէմ «իրոք, արդարե», որ Քուշակի և նմանների
սիրական բառերից է⁹:

82. ՆՈՒՅՆ, էջ 83.

Հոգին նու վարօքն անցաւ ու զմարմինն ի հողն ահեծեց.

Մարմինն ի հողուն ի գուրս մէկ խօսօք զնողին վճարեց:

Պետք է ուղղել հողվարօքն. այս բառը նշանակում է «գերեզ-
ման» և գործածված է նաև Քուշակի մոտ: Կամ «ի հողվերօքս
անցանես, հետ լնուս զաշերդ ու թափես» (էջ 53):

83. ՆՈՒՅՆ, էջ 110.

«Գիտեմք որ շատ հայրեն (երգ) գիտես. լավ կընդուէ աիկ
մի ասա»:—Այս տողի մեջ աիկ համառոտագրությունը Զոպան-
յան ուզում է կարդալ «աշխարհիկ», որ հարմար չէ: Ըստ իս պետք
է կարդալ պարզապես մէկիկ.—շատ երգեր գիտես, մի լավն ընտ-
րի՛ ու ասա՛:

84. ՆՈՒՅՆ, էջ 111.

Հողէ մըղէ ո՞վ տեսել զարծվին որսիկն է խլել.

Առէր է ի հավան ելեր պարծեցել թէ որս եմ արել:

Ստորագծյալ անիմաստ բառը անշուշտ պետք է հասկանալ
նողամաղ (թոշունը):

85. ՄԻՄԷՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՊԱՐԱՆՑԻՈՅ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ.
տպ. Վաղարշապատ, 1870, էջ 121.

Յիւրաքանչիւր նաւս հազար այր՝
Զքաշամարտիկսըն կարգեցին.
Եւ ընդ սոսա այլ փայտեայ յարկ,
Հինգ հազար փոքր քան զառաշին.
Յորում տանէր այրըս հարիւր,
Թէթևնթաց յածէզ անձին:

Յածէզ բառ չկա հայերենում, ստորագծյալ երկու բառերը
միացնելով պետք է կարդալ յածեզաձին: Այս հաստվածք ամբողջ
առել է Ապարանցին՝ Սեբեռոսի ԼԶ գլխից, ուր սակայն յածեզաձի
բառը գործածված է: Այդ բառը գտնում ենք Պերիարմ. և Անժ-
պերիարմ. «ծովաճենի նավ» նշանակությամբ, ն հոդը հանգի հա-
մար է ավելացված:

86. Նույն, էջ 130.

Անքաւական գոլով մերոյ՝
Առ ի մաշկեակըն հըպելոյ:
Եւ ո՛չ տեղի պատրաստելոյ,
Կրկին զողին ընդունելոյ.
Որպէս ի սերմըն սապատայ,
Հեղիսէսըն հանգէլոյ:

Ստորագծված բառը շփոթված է սապատ «կողով» բառի հետ,
մինչեւ հատուկ անուն է և պետք է ուղղել Սափատայ:—Սերմն
Սափատայ՝ նղիսե մարգարեն է, որի վրա հանգչեցավ եղիալի
հոգին, հմմատ. Գ թագ. ԺԹ. 19. «Եւ զնաց անտի և եղիս զեղիսէ
որդի Սափատայ... և եհաս եղիս առ նա և ընկէց զմաշկեակն իւր
ի վերայ նորա»:

87. ԳԲ. ԿԱՄԱԽԵՑԻՈՅ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ, տպ. Երևա-
ղիմ, 1915, էջ 165.

Մոխիր տաք տաք դրին վերայ թեխս, որն անխով հարին:
Հրատարակիւր ծանոթագրում է թե ձեռագիրն ունի անխով:
Մի տառի տեղափոխությամբ պետք է կարդալ՝ որ նախով հա-
րին. թրք. նանախ «կացին»:

ԵՐԿՈՒ ՈՒՂՂՈՒՄ ԿՈՐՅՈՒՆԻ ՄԵԶ

1.

Նկարագրելով Մեսրոպի վերջին օրերի կյանքը, Կորյունը
պատմում է, թե ինչպես նա գիշեր ցերեկ խրառում էր բոլորին,
մանավանդ, երբ զգում էր, որ մոտ է իր մահը, ել աշքերին քուն
շէր գալիս. «Մանաւանդ զի և զմտաւ իսկ ածէր ըստ տէրունա-
կան հասակին գօր վախճանին, շտայր քուն աշաց և ոչ նիրճ
արտևանաց» (Կորյուն, տպ. Վենետիկ, 1894, էջ 43):

Տէրունական բառը նշանակում է «աստվածային, քրիստո-
սական» և գործ է ածված միայն աստծու և Քրիստոսի համար,
ասվում է, օրինակ՝ տէրունական հրաման, տէրունական գիրք
(Աստվածաշունչ), տէրունական սեղան, տէրունական տուն (տա-
ճար), մարմին տէրունական (Քրիստոսի մարմինը), տէրունական
լանջք, ոտք (Քրիստոսի լանջքը, ոտքը), աղօթք տէրունական
(Հայր մեր), տէրունական օր (կիրակի), տէրունական պատուէր
(Քրիստոսի պատվերը) և այլն, և այլն: Այս բոլորի վկայություն-
ները տես «Նոր Հայկ. բառ.», Հտ. Բ, էջ 872: Սովորական և հա-
սարակ բաների համար բնավ չի գործածված տէրունական, ուստի
անհարմար է այստեղ Մեսրոպի համար ասել տէրունական հա-
սակ, որ է «աստվածային հասակ»:

Ըստ իս բառը պետք է ուղղել ծերունական, որ գործածված
է ուշ ժամանակի գրականության մեջ¹. վկայությունները տես Նոր
Հայկ. բառ., Հտ. Ա, էջ 1014, ուր կա նաև ծերունական հասակ
(Կիւրդ. յովել): Միաւն առաջացել է Տ և Ծ տառերի նմանությու-
նից, որ գրիշները շփոթել են իրար հետ:

Թե Կորյունի իսկական բնագրում բառը ծերունական ձևն
ուներ, ապացուցում է նաև փոքր-Կորյունը, որ համապատասխան
տեղում ունի «ծերունի հասական»:

Այսպիսով մենք ունենում ենք ոսկեդարյան մի բացատրություն (ինչպես տէր, տէրունի բառից կա տէրունական, նմանապես ծեր, ծերունի բառից էլ ծերունական):

Ֆնտգլյանն իր Կորյունի քննական հրատարակության մեջ (Երուսաղեմ, 1930, էջ 63) ոչ մի ուշադրություն չի դարձրած վերի տէրունական բառի անպատճեռության վրա և պահել է անփոփոխ:

2.

Կորյունի պատմության մեջ թվական մի անձտություն կա, Կորյունը (տպ. Վենետիկ, 1894, էջ 17) պատմում է, թե 'Դանիելյան նշանագրերը Վուամշապուհի հինգերորդ տարին Հայաստան բերվեցին. «ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր»: Մեսրոպն այդ տառերը փորձեց երկու տարի. «իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր և նովին նշանագրովք տանէր»: Այնուհետև Մեսրոպը տեսնում է, որ թերի են այդ տառերը և մեկնում է Միջագետք՝ նոր խուզարկություններ կատարելու համար, դարձյալ Վուամշապուհի հինգերորդ տարին. «Խաղալյր գնայր ի հինգերորդ ամի Վուամշապուհոյ արքային Հայոց» (էջ 18): Եղիսիայում և Սամոսատում մի ժամանակ աշխատելուց հետո, Հայերեն տառերը գտած դառնում է Հայաստան «ի վեցերորդ ամի Վուամշապուհոյ արքային Հայոց մեծաց»:

Ամեն մի ընթերցողի համար էլ հայտնի է, որ երկու հինգերություններից մեկը սխալ է: Թանասերները զանազան բացատրություններ են տվել սխալն ուղղելու համար: Ումանք առաջին հինգերությունը պահում են անփոփոխ, և որովհետև Դանիելյան նշանագրերի փորձարկությունը երկու տարի տևեց, երկրորդ հինգերությունը դարձնում են եօթներորդ, ասելով թե 6 (5) և է (7) տառերը շատ հեշտ էր շփոթել: Բայց այս դեպքում հաջորդ վեցերորդ բառն էլ պետք պիտի լիներ փոխել ուրենորդ: Որդիշներն այսքան փոփոխությունը շատ համարելով, Կորյունի «ամս երկու» բացատրությունը դարձնում են ամիսս երկու, որով բոլոր մյուս թվերը մնում են անփոփոխ:

«Պատմություն Հայերեն նշանագրերու» (Վիեննա, 1913, էջ 27) Կորյունի սույն հատվածից «եւ իբրև ամս երկու կարգեալ

զվարդապետութիւն իւր» բառերն ամբողջովին հետին լուսանցագորություն է համարում և զնջում է, որով դարձյալ երկու հինգերությունները կմնան, ենթադրելով թե փորձարկության միջոցը շատ կարճ էր: Օրմանյան («Ազգապատում», Պոլիս, 1912, հա. Ա, էջ 277) մատնանշում է սխալը, բայց ոչ մի փոփոխություն չի առաջարկում, ասելով թե «թվականներու հարմարությանց համար ավելի երկարելը ձանձրալի կրնա դառնալ»: Գալուստ Տեր-Մկրտչյան («Արարատ», 1912, էջ 508 և 511) նկատում է սխալը, առաջին հինգերությունը ուղղիղ, երկրորդն անորոշաբար գրում է «հի... երրորդ», իսկ վեցերությունը դարձնում է ժամ (փոխանակ 6-րդի): Բայց այնուամենայնիվ երկու տարվա հաշիվը մնում է առանց բացատրության: Ֆնտգլյան՝ Կորյունի քննական հրատարակության մեջ (Երուսաղեմ, 1930, էջ 18) սխալ է համարում երկրորդ հինգերությունը, որովհետև, ասում է, «Դանիելյան նշանագրին երուն հանկարծագյուտ համնիլն ավելի տպավորիչ ըլլալով՝ ժամանակն ավելի ճշտիվ պահված ըլլալու է»: Կարծես թե սխալը Կորյունը կատարած լիներ և ոչ թե հետին գրիշները: Այնուամենայնիվ, էջ 21, վեցերության անփոփոխ պահում է:

Ես էլ պիտի առաջարկեմ փոքրիկ ուղղում, որով կարծում եմ թե բոլոր անպատճեռությունները հեշտությամբ պիտի վերանան:

Անփոփոխ պահում եմ Կորյունի վեցերությունը, երկու ամսը և երկրորդ հինգերությունը. իսկ առաջին հինգերությունը՝ ուղղում եմ երրորդ: Սխալն առաջացել է հետեւյալ ձևով: Կորյունի ձեռագրում գրված է եղել երդ (համառոտագրված և առաջին տարի վրա պատվի նշանով), որ բնականաբար պիտի կարդացվեր «երրորդ»: Մի խեղճ գրիչ, վրան պատիվ դրած Ե-ը թվանշան համարելով՝ կարդացել է հինգերությունը: Մնացյալը պահել է ճիշտ նախկին ձևով, առանց անդրադառնալու թե 5+2 չի տալ 5:

1941 թ. մարտի 10

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ
ԵԶՆԿԱ ՆՈՐԱԳՅՈՒՏ ԶԵԽԱԳՐԻՆ

Ա.Ռ.ՋԱԲԱՆ

Էջմիածին եղած ժամանակս, դեռ 1900-ին՝ ինչպես այլուր հիշած եմ (տես «Բանասեր», 1902, էջ 218), նպատակ էի ունեցած կազմել հայերեն տաղերու և գանձերու լիակատար հավաքածու մը¹. նույթ հավաքելու համար շվատահերով գտնված թերակատար ցանկերուն վրա, ակսած էի մի առ մի պրատել ձեռագրատան բոլոր ձեռագիրները՝ սկսելով Կարինյան ցուցակի և թիվին և հառաջանալով հաջորդաբար: 1902 թվականի գարնան արդեն հազար ձեռագիր անցած էի. երեկո մը Միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանի քով գտնվելով, խոսք բացվեցավ Եզնիկի կորսրած ձեռագրին վրա. Միաբանը կասկած հայտնից, թի Կարինյան թիվ 1111 և ուրիշ թիվ ձեռագիր մը (որ այժմ մոռցած եմ) Եզնկա անունը կրուն և հավանականաբար Եզնկա Ընդեմ Աղանդոցն ըլլալու են. հանձնարարեց անպատճառ նայել այն երկու ձեռագրերը:

Անցավ մեկ երկու շաբաթ. ձեռագիրներու քննությունը առաջ կերթար միշտ բնական կարգով. երեկո մը՝ ապրիլ 25, Հինգշաբթի օրն էր, առջևս շարված խումբ մը ձեռագիրներու մեջն մեկը բացի պատահաբար. աշքին հետեւյալ տողերը հանդիպեցան. «Այսպիսի անհաւատ եւ դանդաշանաց բանից տիմարաց կարկատելոց...», կարելի՞ է երևակայել իմ զգացած ուրախությունս. Եզնիկն էր, 1111 թիվ ձեռագիրը, այն որ Միաբանը հանձնարարած էր նայել: Խսկույն բացի մյուս նշանակված հատորը, դըժքախտաբար կապրունակեր միայն Եզնկա և Արձանի հարցմունքը: Նույն երեկո՝ հատորը տարի Միաբանին և անմիջապես սկսանք աշխատության. հաջորդ օրը ձեռագրի գյուտը երկտողով մը ժա-

նուցի Վիեննայի միարանության գեր. Հ. Տաշյանին, «Հանդիսամուրյա» հրատարակեց սույն երկառողը (1902, հունիս, էջ 191), ուր կիսուտանայի շշատ շուտ» հրատարակության տալ մեր աշխատության արդյունքը:

Աշխատությունն այսպիս բաժնեցինք. նախ երկուքս միասին պիտի կազմեինք ձեռագրի մանրամասն համեմատությունը տպագրի հետ. երկրորդ՝ ձեռագրի մանրամասն նկարագրությունը պիտի կատարենի և միայն. իսկ երրորդ՝ Միաբանը պիտի տարիու մասնավոր քննությանց արդյունքը, որով կապացուցաներ, թե հիշյալ նորագյուտ ձեռագիրը ո՞ւ այլ ինչ է, բայց եթե այն ձեռագիրը՝ որ իր հիմք ծառայած է տպագրին և որ մինչև այժմ այրած կհամարվեր Զմյուռնիու մեծ հրդեհին մեջ Հունիսին արդեն երկու մասերը վերջացած պատրաստ էին. կմնար միայն երրորդը, որ հետաձգվեցավ Միաբանի բացակայությամբ: Յուր վերագրածեն առաջ ինքս մեկնելով դեպի Շուշի, մեր հարաբերությանց կապը ավելի թուլցավ և հազիվ տարկույս հոկտեմբերի վերջն էր, որ Միաբանը ուղարկեց աշխատությունը՝ առանց երրորդ հոդվածին: Արդեն պատրաստ մասերուն վրա ավելցնելով իմ կողմեն բանի մը նոր հատվածներ ևս, ամբողջը այժմ կհանձնեմ հրատարակության: Ըստ այսմ աշխատությունը կազմված է հետեւյալ ձեռվ. Ա. Ձեռագրի նկարագրությունը. Բ. Հանգամանը համեմատության ձեռագրին ընդ տպագրին. Գ. Ձեռագրական տարրերությունը. Դ. Քննությունը հիշյալ համեմատությանց. Ե. Ձեռագրական սրբագրություններ Եզնկա մեջ. Զ. Եզնկա կորսված մասերը:

Վերոհիշյալ վեց գլուխներեն հինգը ամբողջովին իմ աշխատությանս արդյունքն է, իսկ միայն երրորդ գլուխը «Ձեռագրական տարրերությունը» կազմված է իմ և Գ. Տեր-Մկրտչյանի աշխատակցությամբ:

Ա.

ԶԵԽԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Եզնկա նորագյուտ ձեռագրը կկրի 1111 թիվը², Կարինյան ցուցակով 1091. առանց հաշվելու սկիզբը և վերջը դրված մեկ թուղթ մաղաղաթյա պահպանակները, որոնք հին Ավետա-

րանի մը մնացորդն են, ձեռագիրն ունի ընդամենը 323 թուղթ, որոնք առաջ էշահամարներով նշանակված չեն. նոր ժամանականերս՝ երկի էշմիածնի ձեռագրատան ցուցակը կազմելու ժամանակ՝ մեկը մատիտով էշերը նշանակեր է, բայց առաջին թուղթը՝ որուն մեկ երեսը հիշատակարան մըն է և երկրորդ երեսը պարապ է, մոռցած է նշանակել. 1 էշահամարը դրված է երկրորդ թուղթին վրա և այսպիս կշարումակիր. էջ 223 կրկնված է, ուստի պետք է հաշվել 223 և 223 նիւ. ասկե զատ էջ 282 փախցված է, այնպես որ 281-րդ թուղթին կհաջորդէ 283. ըստ այսմ ձեռագիրը՝ թեկ նշանակված 322, բայց ճշտիվ կկրկ 323 թուղթ։ Առաջին գրիշը նշանակած է սակայն թերթերը՝ ստորին լուսանցքի վրա ա, թ են. յուր մեկ թերթը ունի 12 թուղթ, ուրեմն 24 երես. ամբողջ ձեռագիրը ունի 27 թերթ, որոնք բոլորն ալ ամբողջ են, բացի ժամանակին, որոնք վեցերորդ թուղթը կարված է և ունի 11 թուղթ, և գգ թերթեն՝ որ ունի միայն ինը թուղթ=18 էջ. բայց որովհետև այս մասը զմեղ չի հետաքրքրեր, ուստի ասոր պակասներուն վրա մանրամասնությանց շենք մտներ։ Սկիզբին մեկ թուղթ և վերջեն երկու թուղթ, պահպանակներուն հետ միասին ընդամենը հինգ թուղթ՝ դրված են կազմելու ժամանակ։ Ասկե զատ էջ 300 և 301, ինչպես և էջ 304 և 305 իրար փոխանակած են, այնպես որ պետք է կարդալ այս կարգով 299, 301, 300, 302, 303, 305, 304, այս սխալմունքը կազմողն է; Գալով 306թ—310թ էշերուն, ասոր վրա տես վարի համեմատությունները։

Ձեռագրի մեծությունն է՝ 16,5 սմ երկայնություն, 13 սմ լայնություն և 6,3 սմ հաստություն. գրությունը միասյուն է, $13 \times 9,5$ սմ մեծությամբ և յուրաքանչյուր երեսը 19 տող, մոտավորապես 30—33 տառով, բոլորգիր, աև թանաքով։ Նյութն է քամբակի թուղթ, կազմը կաշեպատ փայտյա։ Հանգամանք. լավ և մաքուր պահպած է. ամբողջ ձեռագրին մեջ ոչ մի զարդ կամ պատեկեր. վերնագիրները և սկզբնատառերը միայն պարզ կարմիր թանաքով՝ բոլորգիր գրությամբ. էջ 6թ և 108թ կան մեկ Ա և մեկ Ա' բավական մեծ և թեթև զարդերով։ Բայց ասոր հակառակ գրիշը շատ զգուշ, շատ հոգատար և շատ խնամու գրիշ է. տառասխալ շկու. պատահած սխալները մաքուր կերպով չնշված, քերված և կամ սրբված են. և ուղիղը՝ կամ լուսանցքի վրա հա-

տուկ նշանով և կամ ավելի հաճախ տողամեջերը նշանակված է։ Բայց որովհետև այս ուղղություններն երկու տեսակ գրությունն է և մյուսը մանր և բարակ, ուստի հաջորդ համեմատությանց մեջ ամեն անգամ որոշեցինք գրության եղանակը. երբ «մանրատառ» կրսվի՝ պետք է հասկնալ երկրորդ տեսակի գրությունը, իսկ երբ «մանրատառ» չկա կամ չենք որոշած թէ երկրորդական գրչե մըն է սրբագրությունը՝ այն ժամանակ հասկնալու է առաջինը։

Բուն եզնկա մասին մեջ կարմրատառեր ունինք միայն երեր տեղ. առաջինը էջ 187թ՝ գրքին խորագիրը. «Երանելոյն եզնկա Վարդապետի». նաև «Յորժամ զաներեւոյթէն» հատվածին առաջին գլխատառ լ-ն։ Այս խորագիրը երկրորդ բարակ (մանրատառ) գրիշը փոփոխեր է. նախ չնշած է կ տառը, հետո եզնկա բառին ծայրը կ մը, վարդապետի բառին ծայրը՝ միշակետին վրա ն մը և տակը՝ տողամեջն ալ «Կողբացոյ»։ բառն ավելցնելով՝ խորագիրը դառձուցած է «Երանելոյն եզնակ վարդապետին Կողբացոյ»։ Բայց այս հավելումները սկ թանաքով են։

Երկրորդ. էջ 195 թ, տող 17—18, որ կհամապատասխանե տպագրյալին 21 էջի 25-րդ տողին, կարմրատառով է «Պատասխանի, Ա.», այն է տպագրյալին մեջ «Պատասխանի, ալրդարել»։

Երրորդ. էջ 294թ, տող 6—7, որ կհամապատասխանե տպագրյալին 250 էջին 17-րդ տողին, կարմրատառով է «Պատասխանի. Ա.», այն է տպագրյալին մեջ «Պատասխանի, ալրդարել»։

Եզնկա մասին մեջ՝ էջ 309 թ, վերի լուսանցքը և առաջին շորս տողերը մուրով սկսած են, բայց ոչ անընթեռնելի լինելու աստիճան։ Ամբողջ ձեռագրին մեջ զատարկ կմնա միայն 1թ, 321թ և 322ա—թ երեսները։ Վերջինս կրնանք իբր պահպանակ հաշվել։

Գրին է լուսեր, որ Զիթ=1280 թվին գրեր է ներսես վարդապետի և յուր աշակերտ ծամար, հետո (թվի ներսեսի մահեն վերջը) թովմա վարդապետ յուր աշակերտին հետ վերստին համեմատեր է ձեռագիրը և սխալները մանրատառ նշանակեր։ Երկրորդ նորոգող մըն է տանուտեր Պողոս։ Դժի=1671 թվին, իսկ վերջին ստացողներ են նախ ...ոս ոմն և հետո Հովհաննես վարդապետ՝ որ նվեր է ստացած Զաքարիայեն։

Ձեռագրին բովանդակությունը հետևյալն է.

Էջ 1 ա՛ քիչ մը ապտոտած երեսին վրա սա հիշատակարանը. շօ. վերջի նորոգել տուալ սր տառիս բարեմիտ եւ ածասէր տանուտէրն պաւզոն որ ետ նորոգել սր տառս բարի յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնօղացն. Հօրն, փիրուն, եւ մօրն օղիկին. եւ կուլակցին. շաղոսկոն եւ որդուն աւետիսին եւ փողակցին խոռոմին. եւ որդուն մանուկին եւ եղբաւրն պօղոսին. նազարն. եւ կողակցին. թուրվանդին. եւ քուերցն գուրքէկուն եւ դատերացն. եւ ամ արեան մերձաւորացն. կենդանեաց եւ հանգուցելոցն. եւ մեծ պապուն եղդան եւ կղցի յիշէցէք ի տր զբարէմիտ. տնուտէր պօղոս, որ արարչաւ բարոփ նորոգեց զար գիրքս եւ եղ ի տռն (երեք բառ եղծեալ) ն անջինչ յիշատակ (մի բառ եղծեալ) թվ. Ռ.Ճ.Ի.:

Էջ 1թ գատարկ է: Էջ 1օնս ա—2թ «Յաճախապատում (նախ յառաջնուու» երկրորդ գրիչ մը հետո սրբագրած) իր արարչագործութեց եւ իր նահապետացն եւ իր ալփափետացն եւ իր կոտակարանացն հնոց. տն եպիփան ասացեալ, Յաճախապատումն (ըստ վերինին) աւուր արար ած զվերին երկինս եւ զերկիր եւ զջուր... (վերջ 2թ) վսկի սահմանակիցք են երրացիքն փինիկէցոց աշխարհին»:

Վերջի տողին տակ նույն գրչով՝ «Զմեղապարտս յիշեսչիք ի քս՝ աղաշեմ եւ զծնողսն իմ»:

Էջ 3 ա. «Առաջարան թագաւորութեանց. վս (կարմրատառ) ի յերկուս գիրս զառ ի յերրացւոց պատմութի բարժանելոյ. զի իթ. նշանագրաւր...»:

Էջ 4 թ. «Սրբոյն Եփրեմի խորին ասորոյ Մեկնութի Սամոսէլի Ասացեալ. Գիրք սամուելի որ պատմեն զեղկանաէ...» (կը հետեւ ցանկը, որուն վերջը՝ տարրեր գրով)

Էջ 6 թ. «Զպատահալսդ այսմ մատենի աղաշեմ յիշել յաղաթս զատացալ սորին զմեծ հուետորն ներաէս. նոյնակ եւ զնուաստ ոգիս հսայի հետեւող եւ աշակերտ սր առնն այ ներս վդի»: (Ասոր տակ կարմրատառ)

Էջ 6 թ. «Եւ ի սկիզբն բանից իւրոց Այսպէս ասաց. Ա (այս ա-ը սև մեծ և զարդարուն) յր մի էր յարեմաթեայն սիփա (վարդագոյն) յեփրեմ լեռնէ. այսինքն... (վերջը էջ 37թ) որ ու մերկաց ըզսուսեր իւր ի վերա պարանոցի արթաին»:

Ասոր քով՝ «Զմեղապարտս յիշեսչիք ի քս»:

Եւ տակն իբր խորագիր՝ «Ողբք դաւթի վս շատողի եւ յով-

նաթանու. Երկդ. թագաւորութեցն. Եւ արդ ողբս առեալ դաւթի լայր զջաւող... (վերջը էջ 60թ) արգելաւ ման ի դառնացող ժողովրդնեւ անտի. (ասոր քով նույն գրչով) աւգնէ քս.» (տակը իբր խորագիր)՝

«Կատարեցաւ մեկնութի սամուելի: մեկնիլ թագաւորութեանն. Դպրութի թագաւորաց. զրէ զամս կենաց... (էջ 61 ա) եւ ի սկիզբըն մատենագրութենն իւրո այսպէս ասաց». (կարմրատառով)՝ «Եւ արբայն Դաւիթ ասէ...»:

Էջ 93 ա. լուսանցքի վրա բարակ գրչով. «Զրդ. թգուիք:»:

Էջ 108 թ. «Կատարեցաւ մեկնութի թագաւորութեանն շնորհօքն այ». (տակն իբր խորագիր կարմրատառ) «Մեկնութի գրպութի իբրամենու» (և վարդագոյն միայն առաջին Մ սև և մեծ զարդարուն) «Մատենագիրն դպրութեան իբրամենու...»: (նույն էջ ստորին լուսանցքի վրա՝ բարակ գրչով)՝

«Աւաղ եւ եղո՞ւկ է անդէտ զրագրին: աշած հոգի. ի՞նչ կառնես. գիտեմ բանական ես. զգիրս տողել ես եւ մէկիմէկ յինչ ես կցել» (իմա՞ թե կուզե դատապարտել առաջին գրիչը՝ որ առանց բաժանումներու՝ տարրեր գրքեր միահար կը գրե):

Էջ 145 ա. այսպիս կվերջանա Մնացորդաց մեկնությունը՝ «Որպէս զի պղծեցին Հարք նոցա զանուն իմ»: Ասոր տակ առաջին գրչեն՝ «Ծնորհաւը եւ ողորմութին այ կատարեցի զտառս ածաշունչ ես փցուն եւ ապիկար գրող լուսեր. ի վայելումն սր եւ ամենազով. վզն ներսէսի. աղաշեմ զդասս լուսերամից յիշել զրագմամեղ զրողիկս եւ զժառանկորդ զրիս զհոնետոր զդին եւ ած յիշողացտ ողորմեսցի. ի թուիս հայոց. Զիթ գրեցաւ»:

Ասոր տակ բարակ գրով՝

«Ած ողորմի ներսէս վրժապետին եւ ինձ թվմա վդափիս որ զանարուեստ գիրս յաւարտ ածի. քս ած աշկտին ողմեսցի. որ սկն ինքն ընդ մեզ տանջի ամէն»:

Էջ 145 թ. (կարմրատառ) «Մեկնութի յեսա եւ դատաւ զոր արա տն եփր ի տր. Յանձն եղիւ ժողովուրդն յեսուա... (աեւատառ են սկսեալ անձն-էն. վերջը՝ էջ 153 թ) զի գուցէ թէ որպէս փոխանակեցն զնա»:

Էջ 153 թ. (կարմրատառ) «Մեկնութի յեսուա եւ դատաւորացն

զոր արարեալ է ծայրաքաղ տն եղիշէի հառց վարդապետի. աւգնէ քս. Կոչեցաւ յեսու նաւիանց ի տէ առաջնորդ...» (սևատառ սկսյալ ուշեցաւ-հն. մեկնության ընթացքին մեջ 12 կարմրատառ խորագրեր՝ այլևայլ գլուխներու. վերջն է՝ էջ 187 բ)՝ «Եւ խաղ էղեւ նոցա նոյնալիս եւ ամենայն իիլ. աւրհնել է ած»:

Հոս սկսված է նաև Եղնիկը.

Էջ 187 բ՝ «Երանելոյն եղնակ վարդապետին Կողբացւոյ. Ձոր-ժամ զաներեւութէն...» (տե՛ս քիշ մը վերը քովը կա զարդի ամե-նահասարակ ուրվագիծ մը):

Եղնկա ձեռագրին և Վենետիկի տպագրին³ էցերու համեմա-տությունը հետևյալն է:

Զեռ. էջ Տպ. էջ, տող.

187 բ=5

բ=7, 2 գոյանալ եկին.

188 ա=6, 2 զել, զի մի.

189 ա=7, 26 -որիկ խնայի...

բ=8, 26 -խեն ու ոչ...

190 ա=9, 26 -քարբառ պատաս...

բ=10, 25 -ականիչը են.

191 ա=11, 25 զի որ շարժին.

բ=12, 25 եւ ընդ մշտնջե...

192 ա=13, 26 -նացն անշնչից.

բ=14, 26 որ մերթ կոչի.

193 ա=15, 26 -ես, եւ յորժամ.

բ=16, 26 աւազովն պաշար...

194 ա=17, 25 -լ են ելրեմն.

բ=18, 25 անպատշաճ.

195 ա=19, 25 -է ընդդէմ.

բ=20, 25 այլ եւ խոտէ.

196 ա=22, 2 -մ արք աւազք.

բ=23, 3 -ամարիցին զԱստ...

197 ա=24, 5 -ւցանել կամեցաւ.

բ=25, 9 -արին անօրէնութիւն

198 ա=26, 10 -ինողքդ ոչ ի.

բ=27, 10 թէ ոչ միայն.

199 ա=28, 13 եւ չարիքն ի.

բ=29, 13 -առս չարեացն.

200 ա=30, 14 երեւեցին.

բ=31, 15 զի նախ քան.

201 ա=32, 18 պէսպէս բնութ.

բ=33, 18 ինչ ընդ միմեանս.

202 ա=34, 19 եւ ի հողիս.

բ=35, 19 յիրաւի նմին.

203 ա=36, 20 շարարարս.

բ=37, 21 -ժամ պէտքն.

204 ա=38, 24 -օն մատուցանիցէ.

բ=40, 1 անձնիշխանութիւն.

205 ա=41, 1 զանձնիշխանութ.

բ=42, 2 որով կարող.

206 ա=43, 3 -պար իսկ էր.

բ=44, 4 ստունգանողին.

207 ա=45, 9 եւ ըստ նման.

բ=46, 11 ուրուք թշնամի.

208 ա=47, 11 -արթ էր առնուլ.

բ=48, 15 -պիսի իրաց.

209 ա=49, 19 -տաքերիցէ, ոչ.

բ=50, 24 եւ ոչ փորձիչ.

210 ա=52, 1 կամեցան եւ.

բ=53, 4 եւ ի թշնամու...

211 ա=54, 8 անհնազանդութիւն.

բ=55, 11 իմանայցին.

212 ա=56, 14 միջոյ երարձ.

բ=57, 16 -թեան ընդ ախոյ...

213 ա=58, 18 յայֆմուն.

բ=59, 21 այլ բնութ.

214 ա=60, 24 -օք յայտ է.

բ=61, 26 խրատ տայցէ.

215 ա=63, 2 երկիւղ ի միտու.

բ=64, 4 հեթանոս իցէ.

216 ա=65, 5 -սն սնուցանէ.

$p=66$, 8 եթէ սիրտ.
 217ա=67, 10 -արձեալ կասե.
 $p=68$, 13 միոյ միոյ.
 218ա=69, 13 -դկան զգաղա.
 $p=70$, 16 -բցուք եւ
 219ա=71, 18 թէ եւ ի.
 $p=72$, 20 դէմ ստուգութ.
 220ա=73, 24 -նէր ի դրախտին.
 $p=75$, 1 մահ ի վերայ.
 221ա=76, 4 եթէ կացեալ.
 $p=77$, 6 եւ ու նա.
 222ա=78, 11 -ացաւ զգալ.
 $p=79$, 13 առաջի մարդոյն.
 223ա=80, 14 -երտքն հարցին.
 $p=81$, 16 նոյնպէս եւ.
 218ս=82, 19 դարձեալ թէ.
 $p=83$, 20 հաւատովք.
 224ա=84, 24 գեւ զղեւ.
 $p=86$, 2 -օք հանէր.
 225ա=87, 2 -նէր եւ սրբովք.
 $p=88$, 5 իւրեանց եթէ.
 226ա=89, 7 -շակերտսն եթէ.
 $p=90$, 7 -իստոնեալք այլ.
 227ա=91, 9 -ան եւ ընաւ.
 $p=92$, 8 եւ վասն տա...
 228ա=93, 13 -յու է թէ ուր.
 $p=94$, 15 պատանիս իւր.
 229ա=95, 16 -զանօք յօդեալ.
 $p=96$, 18 շօշափի կամ.
 230ա=97, 21 -կաց կամ համբ...
 $p=98$, 23 եւ զպայն իմն,
 231ա=100, 1 -իզէն եւս ոք.
 $p=101$, 4 ի կուսէ ծնանել.
 232ա=102, 7 զոյ որ կարիցէ.
 $p=103$, 9 եւ ու առ առ.

233ա=104, 11 -արիք ծովականք.
 $p=105$, 12 կենդանի կայ.
 234ա=106, 14 նոյնպէս եւ.
 $p=107$, 16 յԱստուծոյ հրամանէ.
 235ա=108, 18 -ն հոգիք.
 $p=109$, 21 քայց միայն.
 236ա=111, 1 որդիք ծնան.
 $p=113$, 13 եւ յիտ հազար.
 237ա=114, 22 -սաւոր եւ անուշ...
 $p=115$, 25 այսպիսի անհաւատ.
 238ա=117, 3 նորա ամենայն.
 $p=118$, 6 թերակատարութ.
 239ա=119, 11 հազար ամն.
 $p=120$, 15 քաղցր եւ միւսն.
 240ա=121, 19 -բտաքոյ կարգաց.
 $p=122$, 22 -արած լուսաւորացն.
 241ա=123, 25 հաւատայր թէ եւ.
 $p=125$, 2 շար արարածու.
 242ա=126, 6 -ական եւ մնաց.
 $p=127$, 11 -ուց որդոց.
 243ա=128, 15 քարի էր.
 $p=129$, 21 քան զնա եւ.
 244ա=130, 25 լինելն եւ.
 $p=132$, 5 յերկուանալ.
 245ա=133, 8 եւ ու քարույն.
 $p=134$, 11 եւ զիարդ.
 246ա=135, 14 -դարեւ արդեւք.
 $p=136$, 16 ապա եւ յղութ.
 247ա=137, 19 -այլ ապաստան.
 $p=138$, 22 մտանէր եւ.
 248ա=139, 26 ու հնարագիւտ.
 $p=141$, 2 նոցա դատաւոր.
 249ա=142, 4 -ւաւորսն որդէս.
 $p=143$, 6 -եանք յարութեան.
 250ա=144, 11 ու զԱրհմնն.

- $p=145$, 14 բարի եւ գեղեցիկ.
 251ա = 146, 16 -նել փախստականք.
 $p=147$, 20 զի է ի նոցանէ.
 252ա = 148, 24 եւ զմուկն.
 $p=150$, 3 նախ փշեաց.
 253ա = 151, 7 միմեանս, զի.
 $p=152$, 12 ի խաւարն.
 254ա = 153, 16 եւ ուստի բան.
 $p=154$, 20 կենդանեաց.
 255ա = 155, 23 -տեղատունս.
 $p=157$, 1 արդ հասարակաց.
 256ա = 158, 4 -րդկանէ կազմեալ.
 $p=159$, 8 եւ են հարկաւոր.
 257ա = 160, 13 ասորեստանեալցն.
 $p=161$, 17 -եցաւ փառաւոր.
 258ա = 162, 23 -անի կոտորածքն.
 $p=164$, 3 զլորելոց է.
 259ա = 165, 7 եւ զի ոչ անս.
 $p=166$, 13 -ով տեան.
 260ա = 167, 19 եւ ոչ Աստուած.
 $p=168$, 24 -ովք բազմօք.
 261ա = 170, 3 այլազգեաց.
 $p=171$, 7 յափենից.
 262ա = 172, 12 էր, զի՞ պիտոյ էր
 $p=173$, 20 -ործոցն եւ.
 263ա = 174, 26 յամարանոյն.
 $p=176$, 3 նշանակ.
 264ա = 177, 6 -նական ազդեց...
 $p=178$, 10 յորդորելոյ.
 265ա = 179, 13 -մա զան Աստուծոյ.
 $p=180$, 19 եւ նա սաստէր.
 266ա = 181, 25 -եզ իբրեւ.
 $p=183$, 5 սուրբ ելեալ.
 267ա = 184, 13 -մեցաւ: Եւ.
 $p=185$, 19 ասաց Մովսէս.
- 268ա = 186, 24 -արգել. ուստի.
 $p=188$, 4 անշարժ.
 269ա = 189, 10 ապարանիցն.
 $p=190$, 15 եւ յամենայն.
 270ա = 191, 19 ասեն ի միջոցի.
 $p=192$, 24 -ափ ծանրութիւն.
 271ա = 194, 3 -անի: Եւ.
 $p=195$, 8 օրհնեցէք.
 272ա = 196, 11 արարշին կոչի.
 $p=197$, 16 վերոյ քան.
 273ա = 199, 9 եւ արեգակն.
 $p=200$, 20 զի յորմէ կուսէ.
 274ա = 201, 26 -աւ աշխարհ.
 $p=203$, 6 -ութեանն.
 275ա = 204, 11 -ել: Եւ ի.
 $p=205$, 16 իբրեւ թէ.
 276ա = 206, 20 -արգեալ հասանէր.
 $p=207$, 24 -որութիւն էր.
 277ա = 209, 7 ամենայն.
 $p=210$, 11 -ին յանոյշու.
 278ա = 211, 16 -անց ոչ.
 $p=212$, 20 զնէ զձիւն.
 279ա = 213, 25 յայտ է զի.
 $p=215$, 4 ծովուց որոց.
 280ա = 216, 9 -ամ յաճմունսն.
 $p=217$, 17 լուսնի բարբանջին.
 281ա = 218, 22 -նաց իմաստունքն.
 $p=219$, 26 լուսաւորութեան.
 282 Փախցված է.
 283ա = 221, 4 -առ ամենայնի.
 $p=222$, 8 զկարիս մարմնոցն.
 284ա = 223, 12 մեռանիցին.
 $p=224$, 15 թէ որպէս.
 285ա = 225, 21 միջոյ բառնալոց.
 $p=227$, 1 -ում աստուածք.

286ա=228, 7 -նելու արժանի.
 բ=229, 12 -ացեալ ըմբռնել...
 287ա=230, 20 -է թէ յամենայն.
 բ=232, 1 -այ խորհէի.
 288ա=233, 5 -ւրս եւ զ՛ուր.
 բ=234, 8 հնարողութեան.
 289ա=235, 11 ինչ, որ է.
 բ=236, 16 -արերարութիմն.
 290ա=247, 21 ի բարերարութ.
 բ=239, 1 -աշխարհս.
 291ա=240, 10 -ստոնքն Յունաց.
 բ=241, 17 զնա յաշաց.
 292ա=244, 8 առնել ի սմա.
 բ=245, 13 -նձն մեկնել.
 293ա=246, 18 -ողին զնա.
 բ=247, 23 -այցէ գժոխակ.
 294ա=249, 3 -ու, արդ.
 բ=250, 8 թող զայլ.
 295ա=251, 12 -էր, զիթ.
 բ=252, 19 դարձհալ եւ.
 296ա=253, 23 որպէս թէ.
 բ=255, 4 սրտառուշ.
 297ա=256, 8 -ասարակ արարին.
 բ=257, 13 զնենզաւոր եւ.
 298ա=258, 19 -հէնն, զնա.
 բ=259, 23 այլ նախ.
 299ա=261, 1 -ելով որ է
 բ=262, 7 թէ իբրեւ.
 300ա=265, 22 -ի յայտ յանդիման.
 բ=267, 1 -ար զտուն.
 301ա=263, 11 -լոց ընկերացն.
 բ=264, 17 պահապանքն.
 302ա=268, 6 կերպարանս եկն.
 բ=269, 10 յառաջ քան.
 303ա=270, 15 մեր լիւրսն.

բ=271, 19 -աւ եւ տեղեկացաւ.
 304ա=275, 6 -նդանւոյն.
 բ=276, 11 թէ որ հայի.
 305ա=272, 23 թէ արարից.
 բ=274, 2 -թեան արար.
 306ա=277, 15 զի զայսց երկուց.
 բ=278, 18 եւ ոչ ի զործ... (մին-
 չև 279, 13 զոր ուսոյցն, որմե
 նեսոն 281, 2 ապա եւ նոքա, մինչև
 281, 9 ուկերք են, հար).
 307ա=281, 9 -կ է թէ մսեղէն.
 բ=282, 13 թէպէտ եւ զայ.
 308ա=283, 17 ախորժեն ուտել.
 բ=284, 22 առաքեալ թէ.
 309ա=285, 25 եթէ բանիւ.
 բ=287, 3 -ը սակս եւ.
 310ա=288, 7 -ասար հրեշտակաց...
 (մինչև 289, 5 մի՛ մեկնեսցէ,
 որմեն նեսոն 279, 13 Յեսու
 այնչափ առ աստուածս, մինչև 279, 19
 վասն կերակրոց եւ ի):
 բ=279, 20 հնումն եւ ի... (մինչև 280, 20 էր եւ ոչ
 դառն. որմեն նեսոն 289, 5 Արդ Հաւատացելոց...
 մինչև 289, 9 եւ ապա թէ այլ: Խոկ 280, 20
 քանզի քրիստոս... մինչև 281, 2 ասելի է թէ
 հատուածը չկա մեր ձեռագրին մեջ):
 311ա=289, 9 -ընտիր լինիցին.
 բ=290, 15 անմահ եւ տանչ...
 312ա=291, 20 եւ մահկանացուիս.
 բ=293, 1 եւ առաւել.
 313ա=294, 4 ումեք պարտ է.
 բ=295, 7 -ղթին զրէ.
 314ա=296, 10 զփառաւորութիւն.
 բ=297, 13 իշխաց յայլոց:
 Եղնիկը կվերջանա 314 թ էջին [10-րդ] տողին հետ Հաջորդ

էջը՝ 315 ա՛ միւնույն գրչեն. «Ո՞վ երամք աղաւնեաց ընթերցողք
սրբու տառիս լիշեսշի՞ք զկազմո՞ղս զգոր»:

Ասոր տակ կսկսի «Ի դատաւորաց մեկնովինէ» վերնագրով
նոր հատված մը՝ «Եւ յետ նորա յարեաւ սամեգար որդի անաթեա»,
վերջը՝ էջ 320 բ «կոտորեցան նուազունքն որ մնացին ի հետւ նո-
ցա. եւ քի փա՛ռք յափաննս: Զսակաւ աշխատողս լիշեա՛ ի տր
աղաշեմ»: Ամբողջ այս հատվածն ալ նույն առաջին գրչեն է, թեև
վերջին երեսներուն մեջ տառերը սկսած են հետպէսեաւ փոքրանալ՝
տեղի սղության պատճառավ:

Էջ 331 ա կա երկու հիշատակագրություն. դժբախտաբար
առաջինին ծայրեն թուղթը ուղղանկյուն եռանկյունի ձևով քեր-
ված ըլլալով՝ շատ տողերու վերջը պակաս է. այսպես՝

«Ի հուսկ եւ ի վերջի... տեսանեմ զա բարութի՛ եւ զբար...
ա՛նդի հեղինակս եւ ի ժառանգաւորս եկղ... եալ եւ ծովացեալ մե-
ղաց մերոց: Ե՛ս տառատե...ուս՝ սիրող բանի եւ սպասաւոր. հա-
նապարօն որ ...ոյ ձոր. Հանդիպեցայ ըստ նախատեսութին այ-
առ ... ճգնաւորի միոց որոյ անուն յակո՛ք յորչորչի իւր որ եւ ի
ք...ի ծերպս վիմացն քողեալ մրգ որ եւ ուռճացեա՛լ հոգով,
հան ... մահն քի լինքն բերելով. ըստ մրգին թէ վս քո մեռա-
նիմք զաւրէ... եւ ի հարկաւորացն՝ նա՛յ եւ ի վաելլականացն.
նահանջեալ էր զինքն... արի կամօք եւ ածագութ սիրով որ ունէր
առ ած ընկալաւ զմեզ, եւ ... զի ու գոլով մեր նիւթ վրդպտութի որ
են զիրք՝ զմատեանս զայս յաճախսպտում (քերվածներով. նախ
յառաջնում?) թագաւորութից մեզ շնորհեաց. լիշատակ բարի, իւրն
եւ ծնօցց իւրոց՝ եւ մեր ընկալեալ իբրեւ զաւրճութի եւ բա. պա-
տարագ եւ նէր այ. որ հանդիպիք այսմ տառի՝ լիշեսշիք զառա-
շին երախտաւորք սորայ եւ զվերջին երախտաւորք սորայ՝ առաջի
զենման, անմա՛ն զառինն այ զգութ եւ զողորմութի հայցելով յայ-
նց եւ մեզ. եւ զլիշեցողսդ լիշէ անմոռացն ած յարքայութի ամէն»:
Երկրորդ հիշատակագրությունն է՝

«Ես զաքարիա զնեցի զգիրս ի հալալ եւ յարդար վաստա-
կաց իմոց: եւ ետու յովհաննէս վարդապետին լիշատակ ինձ եւ

ծնողաց իմոց ֆէրոսին եւ թա... խաթունին. արդ ով ոք հանդիպիք
այս սր տառիս լիշեցէք ի քս զիս եւ զծնօղսն իմ միշտ եւ հանա-
պազ եւ ինքն քս ած զձեզ լիշէ լիւր արքայութին ամէն եղիցի եղի-
ցի. ընդ նմին եւ զիս զանպիտանս որ զսակաւ զիրս զրեցի լիշե-
ցէք»:

Մնացյալ էջերը բոլորովին պարապ են:

Կմնա մեզ հիշել, թե բոլորովին նոր զրիլ մը սկսյալ էջ 226 ը
մինչև 265 բ՝ լուսանցքի վրա տեղ տեղ դրած է արաբական թվա-
նշաններ, որոնք կցուցնեն Եզնկա Զմյուռնիայի տպագրության
համապատասխան էջերը:

Ստորև կնշանակենք, թե ձեռագրի ո՛ր էջից ո՛ր տողին դիմ
ինչ թվանշան դրված է և թե այդ տողը Վենետիկի տպագրին ո՛ր
էջին ո՛ր տողին կհամապատասխանի:

Զհու. Վեն.

226բ.	2 բայց եւ	79=90, 9
	14 -մն որպէս այլուր	8[0]=90, 26
227ա.	17 -ելոյ այլ զիտեմք	81=92, 4
228ա.	19 -տուցեալ ի լերինն	83=94, 14
229ա.	2 -ո քրորէի ի միջո	84=95, 17
229բ.	1 է եւ որ զգայնոց	86=96, 20
242օ.	18 չեր եւ ու թագաւու...	113=128, 13
243ա.	18 -ա վասն որդոյն	114=129, 17
243բ.	4 -հմենի եւ զնոսա	115=129, 26
244ա.	1 լինելն եւ աստուած	116=130, 25
250ա.	7 -կ զիսարամանո	128=144, 20
254ա.	13 մի զեղեցիկ	138=154, 9
254բ.	9 -եան որոց	138=155, 6
255բ.	1 արդ հասարակաց	141=157, 1
259ա.	13 եւ յայտ է թէ	149=165, 26
264ա.	6 ինչ ինչ բարի	160=177, 13
265բ.	3 ու եթէ լուսնովն	164=180, 23

Միւնույն գոհէը դարձալ մի քանի էջերու ստորին լուսանցք-
ներու վրա նշանակած է մի քանի նույնպիսի թվանշաններ և տե-
ղեկություններ՝ հետևյալ ձևով.

- է 241 թ գրված է 44 թուղթ.
» 257ա » մինչ վերջն ժէ թուղթ է.
» 279ա » 35.
» 285ա » 30.
» 291ա » 24.

Ասոնցմէ առաջինին նպատակը հայտնի չէ. մյուսները կնշանակն բույն Եզնկա մինչև վերջը մնացած թուղթերուն թիվը:

Բ.

ՀԱՆԳԱՄԱՆՔ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԶԵԽԱԳԻՐԻՆ ԸՆԴ ՏՊԱԳԻՐՆ

Եզնկա ձեռագիրը տպագրին հետ համեմատելու ժամանակ դրուժած ենք Վենետիկի ՌՄՀԵ թվականի տպագրությունը. այս թվականով Եզնկա քանի մը տպագրություններ ելած են Վենետիկի միաբանության տպարաններ՝ տարբեր տարբեր տարիներ, որոնց յուրաքանչյուրը բոլորովին տարբեր տպագրություն է. բայց որովհետև հրատարակիչները աշխատած են այլ զանազան տպագրությունները բոլորովին նույն ձեռվ դուրս հանել, ուստի անկարելի էր մեզ որևէց նշանով որոշել թե ո՞ր տպագրությունն է մեր ունեցածն ու գործածածը. ուստի կրավականանաք միայն ՌՄՀԵ թվականը որոշելով:

Հաջորդ գլխուն մեջ ձեռագրին և հիշյալ տպագրին ունեցած տարբերությունները ամենայն բժամնորությամբ և ամենայն խղճմտությամբ նշանակած ենք, առանց բան մը զանց ընելու: Համեմատության ժամանակ սակայն նկրկարացան խումբ մը այնպիսի տարբերություններ, որ ամեն անգամ առանձին նշանակել ավելորդ ծանրաբենություն համարելով, բավականացանք միայն այստեղ ընդհանրապես հիշելով:

1. Զեռագրին մեջ գրքերու և գլուխներու կամ հատվածներու բաժանում չկա. այս բանը պարզապես հրատարակիչներու կողմէն է ավելցված, ինչպես կհիշվի տպագրին սկիզբը դրված համառու «զեկուցում»-ին մեջ. «Եւ զանյօդաւոր զմիահետ գրչագիրն արարաք ի զիրս եւ ի զլուխս»⁴:

2. Զեռագրին մեջ առհասարակ եւ է տառերուն տարբերու-

թյունը պարզ չէ, ուստի շատ տեղ Ե-ով կարծվածը կրնա Ե-ով ալ դրված համարվիլ և ընդհակառակը. այս մթությունը ամեն անգամ նշանակել ավելորդ համարեցինք:

3. Զեռագրական տարբերությանց մեջ ի նկատի շենք առած «Եւ շաղկապին գրության եղանակը, թե արդյոք միատառ «Կ» ձևով է դրված, թե երկատառ եւ:

4. Հաճախ կամ գրիթե միշտ բառերն անանջատ գրված են ձեռագրին մեջ, այս կետն ևս նշանակել ամեն անգամ՝ ավելորդ կարծեցինք:

5. Կետադրությունը, ինչպիս հայտնի է, ձեռագրաց մեջ որոշ կանոնի մը կամ դրության մը տակ չի մտներ առհասարակ, այսպիս է և մեր ձեռագրին մեջ. ուստի այս ևս նշանակել զանց ըրինք:

6. Զեռագրին մեջ յ տառի հապավումներ շատ կան. ինչպ. հաել, փոխանակ ըսելու «Հայել». կամ հայելո, փոխանակ գոհու «Հայելոյ». այս պակասները նշանակած շենք:

7. Զենք նշանակած նույնպես ավելորդ անգիր ը-երու կիրառությունը, այսպիս շմշարնշենաւոր, փոխանակ «Հմշանշենաւոր»:

8. Զենք նշանակած պատիվները, որ թիւ անգամ գործածված են ձեռագրիս մեջ:

9. Զեռագրիս մեջ օ ձայնին տեղ առհասարակ աւ է գրված. այս տարբերությունը նշանակած շենք. բայց ուր որ օ պատահի փոխանակ աւ գրության, նշանակած ենք:

10. Տեղ տեղ մեկ մեկ տառեր քերված կամ ջնջված են. իսկ քերվածները կամ փոխանակված են նորերով (սրբագրված) և կամ այնպես պակաս թողված են. առաջին պարզագային. նշանակած ենք ուղղված ձեզ՝ փակագծի մեջ հայտնելով թե քերված կամ սրբագրված է բառը. իսկ երկրորդ պարզագային համառության համար՝ քերված և բաց թողված տառերու տեղ դրած ենք նշանը:

11. Զեռագրին մեջ «ութիւն» վերջացող բառերուն և ասոնց այլնայլ հոլովածերուն համառությունները պարզ շեն. ինչպես հայտնի է, ուրիշ տեղ սովորական դարձած համառություններն են ուրի, ուրե = ուրիմ, ուրեան, բայց ուրին, ուրեն = ուրիմն, ուրեանն. կամ նաև պարզապես ուի են: Բայց

մեր ձեռագրին մեջ «թիւն» համառոտված է թե՛ թե, թե թն և թե թին ձեռով. այնպիս որ կասկածելի է միշտ թե թին կամ թն գրված բառը արդյոք թի՞ւն պետք է կարդալ թե թիւնն: Այս պատճառով աշխատեցանք ամեն կասկածելի կետ նշանակել. մեծուրի, մեծուրինն, մեծուրնն ձեռքը ուրիշ բան չեն կրնար կարդացվիլ, բայց թե մեծուրին, մեծուրինն. ուստի այս ձեռքը նշանակել ավելորդ էր. նույնպիս կարատուրնս, բնուրինքն, ուստի ասոնք ևս չնշանակեցինք. բայց երբ տպագիրը (էջ 20, տող 2) ուներ ամուսնուրուն, մինչդեռ ձեռագիրը կզրեր ամուսնուրն, նշանակեցինք, որովհետեւ այս վերջին բառը կրնար նաև ամուսնուրինն կարդացվիլ:

12. Զեռագրական տարբերության մեջ ընթերցողը երրեմն պիտի գտնե ձեռք, որոնք տպագրին հետ բոլորովին նույն են. այս պարագային սինալմունք մը ենթագրելու չէ. որովհետև հիշյալ ձեռ դիտմամբ է գրված՝ շեշտելու համար, թե իրոք ձեռագրին մեջ ալ ա՛յդ ձեռ ունի բառը. այս կամատաճի այն ժամանակ, երբ նշանակված բառը ո՛րեկից պատճառով կրնա կասկածանքի ենթարկվիլ, կամ եթե բառին հետ համեմատելի ձեւ մը կդտնվի նույն էջին վրա:

Գ.

ԶԵՐԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՔ

<i>Էջ</i>	<i>Տող</i>	
5	1—3	Երանելոյն եզնկա վարդապետի (այսպես կարմրագրով. հետո սրբագրված ավելի մանր և սե տառերով՝ այսպես. Երանելոյն եզնակ վարդապետին կողբացուլ).
	4—6	Հիմ գիրք առաջին եղծ աղանդոց հեթանոսացն.
	7	զաներեւոյթէն. նախապես գրված զաներեւոյթէն.
	10	լիստակել.
6	3	զրբաւքն.

- 7 անքննին.
 8 ընծայութեն. գծված վանկը մանր տառով՝ լուսանցքի մեջ.
 10 էութինն.
 25 ինչ (Երկրորդ շ-ն ջնջման նշանով).
 7 5 շիմ ամենայն.
 8 տւեալ է.
 10 երեւելեաց.
 14 շիմ ժամանեցուցանել.
 1 շիմ սեպհականեալ.
 5 ընքեան.
 II—12 տա յամենայնի.
 22 նախապես անխախուստ. հետո ս Երված=անխախուստ.
 24 որ.
 9 1 բղմունքն.
 6 աղբիրն է է (է ջնջման նշանով).
 6 որ զամենայն (որ բառը տողամիջում նույն գրշից).
 8 շիմ այս ինքն.
 15 գեղեցկութեան (տողամիջում նույն գրշից ն= գեղեցկութեանն).
 19—20 ի բարոյարարէ.
 22 հերձածողաց
 23 բարո
 24 հիւղն.
 10 1 ի բարերար (ար=ը լուսանցքում).
 8 ընգերին.
 12, 15 խարնւածոն
 11 6 խառնւածովք.
 14 փոփոխմամբ (ք տողամիջում, նույն գրշից).
 15 եթէ է (է տողամիջում, նույն գրշից)
 12 14 շիմ եւ.
8. էջ 197, տող 12—18. «Եւ առ օրինակ ի մարմնոյ. որոյ ի վերայ մորթ և միս է, և ի միջի երակը և խողովակը արեան, և ի ներքոյ գարձեալ նոյնապէս մորթ և միս. և է մարմին և վերոյ բան զերակս արեանն և ի ներքոյ բան զերակսն»: Հոս տպագրական սխալ կթվի վերոյ, որ պետք է ուղղել՝ ինչպես ձեռագրին ունի՛ ի վերոյ, իբրև հակագիր թիւ մը վարը հիշված ի ներքոյ ձևին¹²:

9. էջ 211, տող 10—13. «Զի մարմինն և նոցա ի շորից հիւթոցն կայ, և ոգին ոչ ի շորիցն հիւթոց յօդելոց, այլ ի պարզական և ի սուզական բնութենէ»: Տպագրին մեջ ունինք սուզական, որ

ԶԵՌԱԳՐԱԿԱՆ ՍՐԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵԶՆԿԱ. ՄԵԶ

ըստ Հայկ. բառ. կնշանակի 1. անդնդային.—«Իշխանութիւն շարին սուզական. Զոր խանդացեալ շարին սուզական», Գնձ. 2. հարաւային բեւեռի.—«Կէտքն են այսոքիկ. կէտ երկնամիջակ, կէտ ժամադիտակ, կէտ եթերական, կէտ սուզական (տոմար): Ի սուզականն եւ ի ժամադիտակն միշտ հոլովել (արեգական)». Ասող. վերջաբ. «Ի հարաւայինն խոնարհի ի սուզականն: Ընդ ձմեռնային շաւոք յաներեւակն եւ ի սուզականն կոյս». Խոր. աշխ. Բայց այս երկու իմաստներն ևս անհարմար են տեղին: Մեր ձեռագիրն ունի սուզական, որ ուրիշ տեղ գործածված վինելով՝ բացատրությունը պարզ չէ. բայց կրնա տեսակ մը հոմանիշ կազմել պարզական բառին, կազմված սուլ արմատեն, երկուքն ալ տեսակ մը բնալուծական կամ ավելի ճիշտ բնազանցական բացատրություններ են անյութական հոգիուուն էացուցիչ տարրը որակելու համար: Հետաքրքիր է նկատել, որ Հայկ. բառարանն ալ ունի նույն սուզական բառը, որոն դիմաց իբր վկայություն բերած է միայն Եզնկա ճիշյալ հատվածը. ասկե կրնանք հետևցնել ինչ որ վերը ըսինք, այն, որ եթե ճիշյալ ընթերցվածը տպագրական սխալ մը չէ, հետին հրատարակչաց անճահ և քմահաճ մեկ սրբագրությունն է¹³:

10. Էջ 226, տող 18—23. «Որոյ հայութիւնն ի բուն իսկ գնայ, ըստ նորա ամպարշտութիւնն, որպէս թէ զկէսն յիւր յինքեան ունիցի, և զկէսն իւր ի սոլունսն եւ ի ճճիս տանջիցէ»: Զկէսն իւր, ինչպէս երկրորդ անդամ կրկնված ձևեն կերևա, պետք է ուղղել զկէսն իւր. ձեռագիրն ունի հոս «իւր յընքեան», ուստի պետք է կարծել թէ յիւր տպագրական սխալունք մըն է, պատճառված հաջորդ բառին յ նախորդինն¹⁴:

11. Էջ 245, տող 5—10 կկարդանք տպագրին մեջ. «Աղամ, ես եմ աստուած և շիք այլ ոք. և բայց յինէն այլ աստուած քեզ մի՛ լիցի. ապա թէ ունիցիս զոք այլ աստուածս բայց յինէն, գիտասցիր զի մահու մեռանցիս», թէ ինչքան անհարմար ինկած է հոս «զոք այլ աստուածս», պետք շկս մեկնելու, բայց ամեն բան կպարզվի, եթե խոսքը ուղղենք ըստ ձեռագրին դնելով առ փոխանակ այլ, «եթէ ունիցիս զոք առ աստուածս»¹⁵: Սույն ուղղությունը նմանապէս պատահական տպագրական սխալ մը կթվի:

Թեև Եզնկա ձեռագիրը գրված է վերին աստիճանի զգուշավոր ձեռքով և հատուկ խնամքով, բայց, ինչպէս նախորդ ձեռագրական համեմատությունները ցուց տվին, հոս ալ կան այնպիսի պատահական սխալներ, որոնցմբ ոչ մեկ մարդկային ձեռք կրնա բոլորովին զերծ մնալ: Այս սխալները առջասարակ ուղղագրական են. բայց Եզնկա բնագրին մեջ մտած են նաև այնպիսի սխալներ, որոնք անկարելի է որ Եզնկա պէս փառավոր գոշի մը տակ մուտ գործեին: Ասոնք ոչ այլ ինչ են, եթի ոչ ութը հարյուր տարիներու ընթացքին մեջ (Ե—ԺԴ դար) հաջորդական բազմաթիվ արտագրությանց ժամանակ նախորդ պարզ ուղղագրական սխալն մը հետզհետե ձևափոխվելով հառաջ եկած սխալներ: Բանասիրության պարտքն է որքան կարելի է երեան հանի այդ սխալները, և իրենց նախկին ձերն կերածելով զանոնք, բնագրներու հին վիճակը վերականգնել: Այս նպատակով է, որ կուզեմ հաջորդ տողերով շեշտել հետեւալ անհարությունները, անոնց քով տալով նաև իմ հարմարագույն կարծած սրբագրություններս:

Հոս պարտք կհամարիմ վերստին կրկնել, թէ ի ձեռին շունենալով նորայրի «Քննասերը», առիթ շնմ ունեցած ստուգելու թէ արդյոք հիշյալ սրբագրությունները նկատված են նաև նույն աշխատության մեջ: Այս թերին լրացնել կթողում հարգելի ընթերցողներուն¹⁶:

Էջ 17, տող 18. «որ զշորս կագեցողսն ընդ միմեանս ի հաշտութեան եւ ի հաւանութեան պահեալ նուանէր»: Եզնկա այս հատվածին մեջ՝ ուր աշխարհը կնմանցվի բառածի կառքի մը, սկիզբեն մինչև վերջ ամեն բան գրված է ներկա. ինչ. «զաշխարհս տեսանեմք», «լժին», «օձտեն», «ընթանան», «վարգին» ևն: Ուշադիր ընթերցողը հանկարծ պիտի կանգ առնե նուանէր անկատարին առջև, որ տեղին բոլորովին անհարմար է և ուղղելի «նուանէ»¹⁷:

Էջ 17, տող 21. «Ամենայն կառք ի համազգեաց երիվարաց լժին, բայց միայն այսց կառաց՝ որ ի շամազգեաց լժեալ են»: Բայց կամ բաց «բաց ի» նշանակությամբ ո՛չ թէ սեռ.-տր., այլ

բացառական կպահանջե, ուստի վերի հատվածին մեջ ստորագծյալ բառերը ուղղել պետք է «յայսց կառաց»¹⁸:

Էջ 32, տող 15—21. «Զի եթէ պարզ բնութիւն էր հիւզն, և մենակերպ, և աշխարհս ի յօդուածոց և ի պէսպէս բնութեանց և ի խառնուածոց հաստատեալ է, ան հնարին է ասել՝ եթէ նիվեայն լեալ իցէ»: Հու երկու սխալ կա: Եզնիկ կիւստաբանն, որ եթե հյուլեն պարզ մարմին է, աշխարհս որ բաղադրյալ մարմին է, չի կրնար Հյուլենն աււոչ նկած ըլլալ: Առաջին սխալն այն է, որ «յօդուածոյ» ածականը շփոթված է «յօդուած» գոյականին հնտ և փոխանակ դնելու «ի յօդուածոյ», գրված է «ի յօդուածոց»: Եզնկաքիմիական բառերն են «պարզ բնութիւն» և «յօդուածոյ կամ յօդուածով բնութիւն», որ կհամապատասխանեն մեր այժմյան պարզ և բաղադրյալ մարմին» ասություններուն. ինչպես կտեսնըվի նույն էջ թիւ մը վարը քանի մը անգամ գործածված. «Հէ մարթ յօդուածոյիցն ի միոցէ պարզ բնութենէ ունել զհաստատութիւնն, քանզի յօդուածոյն ի պարզական բնութեանցն յօդին... զի եթէ յօդուածով էր հիւզն, եւ յօդուածոյին ի պարզականացն ունին զանձնաւորութիւն եւն»: Եզնիկ ըսել չուզեր թե աշխարհս «յօդուածներէ» բաղկացած է, այլ թե նա բաղադրյալ մարմին է¹⁹: Երկրորդ սխալն այն է, որ «Հիւլեայն» տրական ձեր միտք չունի և պետք է ուղղել բացառական «ի հիւլեայն»²⁰. ինչպես որ քիւ մը վարն ալ ունինք նույնպես բացառականով «վասն զի չէ մարթ յօդուածոյիցն ի միոցէ պարզ բնութենէ ունել զհաստատութիւնն, քանզի յօդուածոքն ի պարզական բնութեանցն յօդին»:

Էջ 39, տող 8—11. «Եւ այսպէս կազմածոյ իրաց ինչ ևս՝ միտք գործողին գործեն զշարն, որպէս եւ երկաթ մերթ ի բարիս պաշտի, և մերթ ի շար»: Նախորդ էջերուն մեջ Եզնիկ կհաստատեր, թե ամեն բանե կարելի է թե՛ շար առաջ բերել և թե՛ բարի. Հոս ալ կուզի ցուցնել թե գործավորին միտքը կրնա նույնպես գործիք շինելու հատուկ նյութերեն թե՛ շար և թե՛ բարի բան շինել. այս միտքը տալու համար՝ պարզ է որ վերի բառը ուղղելու է «ի կազմածոյ իրաց», իսկ այնպես ինչպես կա՝ իմաստ չունի²¹:

Էջ 41, տող 11—15. «Զի եթէ իբրիւ զմի ինչ յայլոցն ընութեանց լեալ էր՝ զոր ի հարկէն ծառային Աստուծոյ, ապա և վարձս ընդ կամակարութեանն առնլոյ չեր արժանի»: Խոսքին իմաստը

կպահանջե զոր ուղղել որ, իբրև հարաբերական գերանուն հնթակա ծառային բային, որ իբրև չեզոք բայ չէր կրնար արդեն սեռի խնդիր ունենալ²²:

Էջ 58, տող 3—8. «իսկ եթէ ոք յուինչ զԱստուծոյ զպատուիթրանսն համարիցի, յորժամ մրցել ընդ բանսարկուին մարտնչիցի՝ վաղվաղակի կործանի, քանզի չունի զնշանակս յաղթութեան»: Այս հատվածին դեմ Եզնկա ձեռագիրն ունի «մարտ չիցի» բնթերցվածը (այսպես բաց բաց, փոխանակ մարտնչիցի), որմեկերևա, թե մարտնչիցի ձեր հրատարակիլներու հնթագրությամբ է ձեւացած. բայց այս հնթագրությունը՝ որշափ ալ որ արդարանա ձեռագրին երկու բառերուն մեջտեղը գտնված միջոցովը, այնուամենայնիվ սխալ է, որովհետև երկրորդ նախադասության իմաստը կդառնա անկապ: Կանոնավոր նախադասության վերածելու համար պետք էր կամ մարտ չիցի բառը վերածել մատնչիցի, և կամ եթե այդ ձեր ընդունինք մարտնչիցի, մրցել բառն ալ դարձնել մրցեալ. Վերջինս կարող էր և տառին վրա պատիվ մը ունենալ և հնտու այդ պատիվը հապավվիլ, ինչ որ սովորական երկույթ է ձեռագրաց մեջ: Բայց հայտնի է, որ սխալ մը մեկ տառափոխությամբ ուղղելն ավելի հավանական և ընդունելի է, քան երկու տառափոխությամբ. ուստի վերոհիշյալ ձեին մեջ ալ ուղղելի բառն է «մատչիցի»²³:

Էջ 66, տող 8—9. «և զմիսն եթէ սիրտ ուրուք առնոյր և ուտէր՝ ոչ վնասէր»: Նույն էջ՝ տող 22—26 և էջ 67, տող 1—4. «զմանցագուն եթէ ոք լոկ ուտիցէ՝ սատակի է, և խառնեալ ընդ այլ արմատս՝ բնածու լինի քնահատաց: Եւ զիազար՝ եթէ ի տօթ ժամանակի ուտիցէ ոք, քանզի զովացուցիլ է, զտապս ի փորոյն փարատէ: և եթէ ի հով ժամանակի ուտիցէ ոք, վնասէ»: Նույնպես էջ 88, տող 4—9. «Նա և զպաշտօնեայսն իսկ իւրեանց չեթէ ոչ Աստուծոյ սաստ պահէր, ազգի ազգի խեղութեամբք խեղէին, և անհնարին մահուամբք սպանանէին»: Հիշյալ խոսքերուն մեջ ըստ բնական և տրամաբանական բացատրության՝ պետք էր որ զմիսն, զմանցագորն, զիազար, զպաշտօնեայսն ուղղական դրվեին իբրև ենթակա «ոչ վնասէր-սատակի» է, բնածու լինի-փարատէ, վնասէ-խեղէին, սպանանէին» բայերուն: Քիւ մը անփույթ գրողներ կրնային այդ բառերը իբրև սեռի խնդիր մտածելով «առնոյր, ուտէր-ուտիցէ,

իսպանեալ-ուստիցէ-պահէր» բայերուն, դնել հայցական և այս շատ սովորական է մեր մանավանդ հետին գրողներուն մեջ: Եզնիկ այլուր այս տեսակ բան չունի. ուստի կրնայինք այս տեղն ալ ձեռագրական սխալ համարել, բայց այս սրբագրությունը մեր ձեռքով ընել չանդգնելով, կթողունք ընթերցողին դատողության²⁴:

Էջ 68, տող 23—26. «Եւ առաջնոյ շվիտասակարութեան գաղանցն մարդոյ՝ այժմու համբոյք և ընտելութիւնս վկային»: Եթե «համբոյք և ընտելութիւնս» ձևերը համարեինք հոգնակի անորոշ հայցական, կունենայինք ամենակոշտ սխալ մը՝ փոխանակ «համբոյք» և «ընտելութիւնք» ըսելու. բայց պարզ է, որ այսպիսի սխալունք մը կասկածելու տեղի չկա. ասոնց մեջ ս վերջավորությունը համարելու է առաջին դեմքի դիմորոշ հոդ, իսկ «վկային» բայց դրված է հոգնակի՝ բաղադրյալ ենթակային պատճառավ:

Էջ 84, տող 2—5. «Եւ ոչ եթե ի դատապարտութիւն ինչ ոգոց լինի մարդոյն տանջանքն դիւց, այլ առավել ևս յարգահատութիւն»: Տանջանքն ենթակային դեմ լինին հոգնակի բայն ավելի կանոնավոր է²⁵:

Էջ 88, տող 4—8. տե՛ս վերը, Էջ 66 դիտողության մեջ:

Էջ 121, տող 22—24. «Ոի ոչ յԱստուծոյ կարգեցան, այլ ի մարդկականէ հնարդութիւնէ»: Տարօրինակ է հատկացուցչին համաձայնությունը յուր հատկացյալին հետ. շփոթության պատճառ եղած է անշուշտ ի նախդիրը, որ հաջորդ բառը բացառականի է վերածած անհմուտ գրիշներու տակ: Անհավանական է ենթադրել, որ բառն ըլլար փոխանակ ոփ մարդկականէ հնարդութիւնէ» (նախադաս համաձայնյալ ածական): Ուղղելի է «Փ մարդկան»²⁶:

Էջ 124, տող 9—12. «Թարձեալ որ զայն գիտաց՝ եթէ երկու որդիք են յորովայնի անդ, զայն ընդէ՞ր ոչ ծանեաւ թէ մինն բարի և միսն շար»: Ուղղելի «մինն բարի է եւ միսն շար»: Է ձայնավորը մոոցված է շփոթվելով հաջորդ եւ-ին առաջին տառին²⁷:

Էջ 124, տող 22—24. «Ոչ եղծ զշարն, այլ և բազաւորութիւնն ևս նմա ինն հազար ամի»: Զեռագիրն հոս ունի «թագաւորութիւն»: Եթե այս բառը կարդանք «թագավորութիւնն», ինչպես տպագիրն ունի, կծագի լեզվական անհարմարություն և պետք կը լա դարձնել զբագաւորութիւնն, ինչպես է հաջորդ երեսը, Էջ 125, տող 22—25. «դարձեալ զի զթագաւորութիւնն որդցն ետ, միում

զինն հազարամեան, և միւսումն զանսպառական...», բայց երր կարելի է նաև բառը կարդալ թագաւորութիւն», որով սխալանք կ գուշանալ, ինչո՞ւ այսպես շղնել²⁸:

Էջ 132, տող 20—25. «զորոց զբարույն կողմն յՈրմբզդէ դնեն, զարչառաց և զոշարէ և զայլոց պիտանացուաց. և զշարին կողմն յԱրհմնայն, զգայլոց և զգազանաց և զճեաց վնասակարաց»: Իմաստը բավական ցուց կու տա թե զոշարէ պետք է ուղղել զոշարաց, համաձայն յուր վեց ընկերակիցներուն. հատվածը կթարգմանվի. «բարիներուն կողմը Որմիզդեն կհամարին, ինչ. արշառներու, ոչխարներու և ուրիշ պիտանի անսուններու. իսկ շարերուն կողմը Արհմնեն, ինչ. զայլոց, զազաններու և վնասակար ճահներու»²⁹:

Էջ 135, տող. 2. «Քշնամութիւնն» ուղղել «թշնամութիւն»: Ճեռագիրն ունի «թշնամութիւն», որ կրնա երկու ձևով ալ կարդաց-վիլ³⁰:

Էջ 149, տող 1—3. «Եւ այլն եւ ինչ մի ի ջուրս է, եւ զմեր պէտո ոչ հարկանիցէ, բայց միայն զի զկեցուցանիցէ»: Ասոնցմենախորդ տողերով Եզնիկ կցուցնի, թե լուն և մուկը թեև չնշին բաներ են, բայց մենք շենք կրնար չնշել աշխարհեն.—Հիմա կշարունակե.—Նաև ջուրին մեջ ալ ուրիշ բան մը կա (տեսակ մը փոքրիկ անսուն), որ մեզ պետք չէ, այլ միայն կկծե ևն: Այս բացատրության համեմատ, «այլն» պետք է զարձնել «այլ»³¹: (Իսկ այն եւս կնշանակի «մյուսները, մնացյալը», որ բնավ չէ հարմար):

Էջ 154, տող 6—14. «Վասն որդէծնութեան եւ մարդկան յաշխարհի սերելոյ, ներեաց նմա ինն հարիւր եւ երեսուն ամ... Եւ վասն արտասուացն Եղեկիալի արքայի յաւելաւ նմա հնդետասան ամ: Եւ վասն ատաշխարութեան նինուկէացուցն՝ ոչ կորոյս զբաղաք...»: Հոս ունինք երեք համագիր նախադասություններ, բայց ասոնցմեն երկրորդը ժամադրությունը կիսախտե, զոր վերահաստատելու համար պետք է յաւելաւ ձեզ փոխել և դարձնել յաւել³²:

Էջ 159, տող 2—6. «Այլ երկինք և երկիր անօթք հտեղակալք են հաստատեալք յարարչէն, ունել ամփոփ ընդ ինքեամբ զամենայն՝ որ ի միջի նոցա է»: «Ընդ ինքեամբ» եղակին պետք է ուղղել «ընդ ինքեամբք» հոգնակիով³³, ինչպես է քիչ մը վարը. «Եւ

հն հարկաւորք բնակաւորք, հրամանաւ արարշին իւրեանց, ի վայելս ամենայն կենդանեաց. և իւրեանց ինքեանք չեն...»:

Էջ 171, տող 25. «կամի՞ զի եւ իւր բանաւոր արարածքն ցանկացողք բարեաց եւ գործօնեայ արդարութեան լինիցին»: Եթե առաջին ստորոգելին (ցանկացողք) հոգնակի է դրված, գեղեցկությունը կամ համաշխությունը կպահանջե, որ երկրորդն ալ դրվի հոգնակի, այն է «գործօնեայք»³⁴:

Էջ 176, տող 20—23. «Եւ յօրանչելն եւ ձգտել, որպէս կարծեցին ոմանք, ու ի դիւէ լինի, այլ ի մեղկութենէ եւ թուլութենէ մարմնոյն»: Երկրորդ բացառականին վրայեն ի նախորդին հապավումը բոլորովին պատահական է. ուղղելի է «ի մեղկութենէ յւ ի թուլութենէ»³⁵:

Էջ 178, տող 15. «Եւ մի՛ իմն ի հակառակորդէն, քանզի նա անմարմին է...»: Եզնիկ քանի մը տող վերը (նույն էջ, տող 5) կըս թե երազները երկու պատճառ ունին «Եւ այնը երկու պատճառք են», ասոնցմէ մին այն է՝ որ Աստվածային շնորհաց ազդեցությամբ մարդ երազ կամ տեսիլք մը կտեսնե (տող 7—14). բայց երկրո՞րդը որն է արդյոք. այս մասին Եզնկա մեջ բան մը չկա: Բայց իրոք տող 15-ին սկսյալ մինչև հաջորդ երեսին վերջը կպատմվի սատանայական երազներու (երազափորձության կամ երազախարության) մասին, որ ուրիշ բան պիտի լրվա, բայց եթե Եզնկա տված պատճառներն երկրորդը. այսպես ըմբռնելու և այսպես մեկնելու համար պետք է վերոհիշյալ տողին մեջ մի՛ իմն ձեռ, որ հակառակ է տակը մեջ բերված մանրամասն բացատրությանց, ուղղել և դարձնել միասն³⁶: Երկու ձեռքուն շփոթությունը շատ հասարակ կերպով կմեկնվի երկաթագիր զրությամբ, ուր ՄիհիՄն և ՄիհիՄն հազիվ թե կզանազանին:

Էջ 202, տող 1—5. «Եւ զի՞նչ զարմանք հն ընդ նոցա՝ թէ զերկինս վասն անշափ մեծութեանն, եւ զլուսաւորս վասն առաւել պայծառութեանն աստուածս կարծէին»: «Զարմանալ» բայց կպահանջե ընդ-ով հայցական. ուստի ուղղելի ընդ նոսա. Հատվածը կթարգմանվի «ինչո՞ւ զարմանալ անոնց վրա՝ որ երկինքը անշափ մեծության պատճառավ, և լուսավորները՝ ավելի պայծառության համար, Աստված կկարծեին»³⁷:

Էջ 217, տող 12—22. «Եւ չէ հնար լուսնի յերկիր իջանել. որ-

պէս կախարդաց տեսեալ ի ժամանակի հրամանաւ Աստուծոյ զլուսնոյն արիւնագոյն լինելոյ զկերպարանսն՝ դիվ նմանել լուսնի բարբանչեն, թէ զլուսին իջուցանիցին. որում շեն մարք լինել, թէ բարբանչեն արդարութեան լինիցին. Որում շեն մարք, զոր քան զրազում աշխարհս մեծ է թէ ի կալ մի փոքրիկ ամփոփիցի, և կթիցի անստինն»: Սիալագիր բառն է շեն մարք, զոր պետք է ուղղել «չէն մարթ»: Որովհետև ձեռագրին մեջ եւ է պետյան ձեռվ են միշտ, ուստի այս պարագային ձեռագրիը մեր ուղղության հակառակ չէ. խոսքին իմաստն է, որ ուղիղ ձեռ պիտի որոշե, Եղնիկ կըս. «կախարդները կրարրանչեն, թե լուսինը կրնան իջեցնել վար. մի կրնար լինել այնպիսի բան, թե նա որ բազում երկիրներն ավելի մեծ է, փոքրիկ կալի մը մեջ ամփոփի...»: Այս պարզ իմաստը հանավի միայն չեն մարք ձեռն. իսկ եթե առնենք շեն մարք, թերևս կախարդներուն անցնի խոսքը, բայց այս պարագային լինել բային տեղ կպահանջվի առնել, իսկ որում ըսելու տեղ ալ՝ զոր. «անոնք չեն կրնար ընել այնպիսի բան որ...»³⁸:

Էջ 221, տող 20—22. բայց զի փոփոխմուն ուղոց ի մարմնոց ի մարմինս ետ, այսու յոյժ եպերելի էյ: «Ետ» հոս կնշանակե ննթագրեց, որուն հոմանիշ է նաև «դնել». բայց պետք չէ կարծել, թե ըստ այսմ բառը պետք է ուղղել «եղ», որովհետև «տալ» նույն նշանակությամբ գործածված կա քիշ մը վերը, տող 4. «Եւ որպէս պատճառ ամենայնի ի միուշէ միութենէ տայ՝ և զինամակալութիւնն ի նմանէ դնէր...»:

Էջ 222, տող 7—12. «Եւ զմիսն շուտել՝ եթէ վասն զկարիս մարմնոցն խափանելոյ հրամայէր, բարսոք և յիրափ առնէր. ապա եթէ իբր ի պղծոյ իմերէ արշարածոց հրամայէր հրաժարել, վատթարագոյն»: Թե ի պղծոյ և թե իմերէ եղակի բացառականները բավական են ցուցնելու, թե զոյականն ալ պետք է ուղղվի «արարածոյ»³⁹: Շփոթությունը ծագած է երկաթագիր Յ և Յ տառերուն նմանութենն:

Էջ 230, տող 20—22. «...յամենայն դարս աստուածապաշտք գտանէին, որք յանդիմանէին զմեշմակապատսն»: Ուղիղ է ուրիշներու կողմեա առաջարկված «Հեղմակապաշտ» ձեռ, որ կնշանակե աստուածայապաշտ»: և է իբր հակառակը՝ քիշ մը վերը դըրված «աստուածապաշտ» ձեռն⁴⁰:

Էջ 233, տող 16—18. «է իմն զօրութիւն, որ արար և ետ զեռսա

ընդ ձեռամբ նորա»։ Պետք չէ կարծել, թե ուղղելի է «եղ զնոսա», այսինքն «կա զորություն մը՝ որ ստեղծեց զանոնք և դրավ անոր ձեռքին (իշխանության) տակ»։ սովորական են «դնել ընդ ձեռամբ» կամ «տալ ի ձեռս» ոճերը, բայց «տալ ընդ ձեռամբ» ևս կա քիչ անգամ. ինչ. «Զորս ընդ ձեռամբ ձերով ետու» և. Գր.։

Էջ 233, տող 25—էջ 234, տող 6. «Եւ եթէ բժիշկ ըստ պէսալէս հիւանդութեանց՝ ազգի ազգի գեղս ախտացելոցն մատուցանել, զի որ սկզբան ցաւոյն դէպ իցէ՝ զայն ի սկզբանն մատուցանեն, և որ լընդմիջելն՝ զայն ի միջոցի, և որ ի պառաւել ցաւոյն՝ զայն հուսկ յետոյ»։ Թէ՛ առաջին «մատուցանել» անորոշը և թէ՛ երկրորդ «մատուցանեն» հոգնակին պետք է դարձնել «մատուցանէ»։ խոսքին ենթական է «քժիշկ»⁴¹։

Էջ 234, տող 14—18. «Իրրև կանխագէտ գիտէ զամենայն, մինչ չնչ լեալ իցէ, թէ ո՞րպէս պարտ իցէ առնել, և յո՞ր ժամանակի, և յո՞ր պէտս»։ Հստ օրինի պետք է ըլլա «յորում ժամանակի»⁴²։

Էջ 245, տող 14—18. «Եւ եկեալ հիւղեայն՝ պատոփիրել նմա ըստ սովորութեանն, տեսանէր՝ զի ոչ անսայր նմա Աղամ, այլ խորհեալ ի բաց մերժէր, և շմերձենայր առ նա»։ Պետք է ուղղել «խորշեալ ի բաց մերժէր եւն...»։ Հ և Ծ տառերուն շփոթությունը անցման երկաթագրին պատճառավ է, ուր երկուքն ալ շատ նման են ձևով⁴³։

Էջ 263, տող 19—21. «Ոչ զի ես միայն արժանի եղայ խորհրդոյն, որ տրուպս եմ առաքելոց...»։ Ստորագծյալ ձեմն տեղ ձեռագիրն ունի եղայ, որ նույնն է. Եղանձիմ քային դեմ անշուշտ շատ կանոնավոր կլիներ եղայ ձեւը, ինչպես հատաճիմ-կատ. եատայ, բայց այլուր չկա գործածված։ Տարակույսի մեջ ենք, թե արդյոք այս բառն ալ հնության հաղվագյուտ մնացո՞րդ մըն է, ինչպես ապատամբ բառը, թե աշխարհաբարի ազգեցության արդյունք⁴⁴։

Էջ 267, տող 15—19. «Եւ իցէ՝ ոք բժիշկ, յորժամ զորդի ուրուք բժշկիցէ, վարձս ոչ առնու, այլ զբժշկեալն ի զիսովին զինս բժշկութեանն խնդրիցէ»։ Ուղղելի է «վարձս ոչ առնուցու, այլ զբժշկեալն զիսովին ի զինս բժշկութեան խնդրիցէ»⁴⁵։

Էջ 268, տող 26—էջ 269, տող 5. «Եւ կամ իցէ՝ ոք, որ մա-

տուցեալ՝ դայլոյ զորդիս կամ զծառայս յապիմակս և ստահակս յօժարեցուցանիցէ հանել, և հասեալ ի վերայ՝ ոչ հանիցեն զայն ընդ կառափին»։ Ուղղելի է «ի ստահակս»։ ի նախդրին անկումը երկաթագրի գրության մեջ նախորդ շաղկապին և տառին հետ շփոթության պատճառավ է⁴⁶։

9.

ԵԶՆԿԱ. ԿՈՐՍՎԱԾՄ ՄԱՍՆԵՐԸ

Երբ որևից հեղինակութենե մը մեզ հասած է միայն մեկ օրինակ, և այն մանավանդ հետին դարերու գրչությամբ, աշխատության անվթար և ամբողջական լինելը համենայնդեպս կասկածելի կըլլա. ասոր հայտնի օրինակներ են Բուզանդ Փավստոսը, Ղազար Փարպեցին ևն։ Քիչ թե շատ ապահովություն ստանալու, ընթերցվածները ըստ կարելվույն ճիշտ ընդունելու համար՝ պետք է ունենալ ամենաթիշը երկու օրինակ, տարրեր աղբյուրե ծագած, որոնց փոփոխակի ընթերցվածները կա՛մ իրար հաստատեին, կա՛մ իրար լրացնեին և կամ երկութին համեմատությամբ նախնական ձեր վերականգնվեր։ Այս ընդհանուր կանոնին չէր կրնար բացառություն կազմել նաև եղնկա գործը, որմե հասած ձեռագիրը թեև շատ խղճամիտ գրություն մը, բայց չունինք բնավագահություն, թե այդպես ըլլային նաև այն նախորդ օրինակները, որ նույն գրչագրին աղբյուրն են եղած։

Նախորդ գիտին մեջ ցուց տվինք քանի մը սխալներ, որոնք իբրև արդյունք տառական կամ բառական շփոթությանց, մտեր են եղնկա ձեռագրին մեջ։ Այս գիտով ալ կուգենք ցուց տալ, թե եղնկա ձեռագրին ունի նաև ապելի ծանրակիցի թերություն մը, այն է քանի մը նշանավոր պակաս մասեր։ Այս պակասները կըրնան նույնպես կա՛մ ժամանակի ընթացքին մեջ թերթերու պատահական անկմամբ հառաջացած ըլլալ և կամ դիտմամբ գըրշագիրներու կողմե հապավված ըլլալ եղնկա աշխատության հատվածային բնավորությունը քիչ մը արգելք կհանդիսանա հապավված կամ կրճատված տեղերը լավ նկատելու, նյութի հանկարծական փոփոխություն մը, որ ուրիշ տեղ բնագրի ընդհատում պի-

տի համարվեր, կրնա այս աշխատության մեջ իրը նոր պլուս կամ նոր հատված նկատվիլ. այնպես որ իսկապես հապավված մասերն ուժանք կրնան այսպեսով քննադատության աշքեն փախչիլ Ռուսի այն պակաս կետերը, որ այստեղ հառաջ կրերենք, համենայնդեպս պետք է նկատել իրը փոքրագույն թիվը (ուսումնական), որոնցմենա ավելին գտնել դուրին, բայց հատվածային բնավորության պատճառավ իրը թիվը հաստատելը դժվար է:

Ահավասիկ իմ թերի համարած մասերս.

1. Եզնիկ Ա. գրքի Բ. գլխի սկիզբը (էջ 32) հակաճառելով հյուկեական վարդապետության գեմ՝ հետևյալ ձևով կփաստարանե. «Հարցնենք թե, կրսե, հյուկեն պարզ մարմին էր թե բաղդրյալ մարմին. եթե հյուկեն պարզ մարմին էր, աշխարհը որ բաղդրյալ է՝ չէր կրնար անկե ստեղծված ըլլալ, որովհետև անկարելի է որ բաղդրյալ մարմին մը միակ պարզ մարմինն մը հառաջանա. իսկ եթե հյուկեն բաղդրյալ մարմին էր, ուրեմն անարատ չէր և կա՞ր ժամանակ՝ երբ հյուկեն չկար, այսինքն ա՞յն ժամանակը՝ երբ դեռ զայն կազմող պարզ մարմինները միացած չէին»: Այս խելացի փաստաբանութենեն հետո Եզնիկ նոր խնդիր մը հանեն. «Այժմ ալ տեսնենք, կրսե, թե այդ հյուկեն կազմող պարզ մարմինները միմյանց համաձայն էին թե հակառակ»: Թնական է, որ հաջորդ տողերուն մեջ Եզնիկ նախ պիտի քններ, թե ի՞նչ կլիներ երբ հյուկեն կազմող պարզ մարմինները համաձայն ըլլային, և ի՞նչ կլիներ՝ եթե հակառակ ըլլալին, որով պիտի եղացներ, թե հյուկեն ալ պետք ուներ աստվածային իմաստության, որ զար և անոր կազմիչ անմիաբան տարրերուն մեջ համերաշխություն մտցներ: Բայց շարունակության մեջ այսպիսի խոսքեր չկան. մեկ երկու հառաջաբանական խոսքերի հետո՝ Եզնիկ բոլորվին կթողու յուր բարձրացուցած խնդիրը, և հանկարծ կսկսի թ. գլուխը՝ ըսկելով. «Եւ արդ զհիւղեայն խնդիր թողեալ՝ զոր նիւթն ամենայնի կոչեն, ի շարեացն խնդիր եկեցուք...»: Պարզ է որ արտագորով ձանձրանալով հյուկեի մասին եղած այդ հակաճառություններն, նախորդները բավական համարելով՝ մնացյալ բոլոր թողեր և ուղակի անցեր է նոր գլխի:

2. Ա. գրքի ի գլխով (էջ 79—82) Եզնիկ կցուցնե այն պատճառները, որոնց համար տարածամ մահը մտավ աշխարհ. այս

պատճառները պարզելե ետքը՝ կանցնի համառոտիվ ցուցնելու, թե ի՞նչ բանե սկիզբ առին պատերազմները, պոռնկությունը և դիվահարությունը: Ասկե ալ անմիջապես ետք կսկսի իԱ գլուխը՝ հետևյալ բառերով. «Այս ասացաւ վասն հարցանելոյ ոմանց, թէ մեղաւորք վասն մեղաց տանջիցին ի դիւացն, տղայցըն անմեղաց ընդէ՞ր տիրիցեն դեւքն»: Կնշանակե թե իԱ զլուկը սկսելե առաջ քննած վերջացուցած պիտի ըլլար Եզնիկ ոմանց այն հարցումը, թե ինչո՞ւ անմեղ տղաներն ալ դիվահարությամբ կպատժվին. բայց իրոք այս մասին խոսք մ'ալ չկա. Եզնիկ այս խնդիրը կքննե բավական ընդարձակորեն իԱ գլխով՝ ճիշտ այդ խօսքերէն յետոյ՝ էջ 82—84, երբ 84 էջի 23 տողով այս խնդիրը կվերջանա, Եզնիկ հանկարծակի կանցնի նոր նյութի մը. «Այլ զի դեւ զգեւ ոչ հանէ, զայն խկ յայտ արար...»: Պարզ կտեսնվի, որ այստեղ խանգարում կա. նախ պետք է որ էջ 82 իԱ գլխին սկիզբը դրված տողերը՝ «Այս ասացաւ վասն հարցանելոյ ոմանց...», դրվեին 84 էջի 23-րդ տողին հետո. երկրորդ՝ այս տողին հետո եկած մասը՝ «Այլ զի դեւ զգեւ ոչ հանէ», պետք էր համարել նոր գլխի, թերևս սկսած հառաջարանական քանի մը տողերով, որոնք կորսված են (Հմմտասոր ճիշտ դիմացը, էջ 85՝ իԲ գլխին հառաջարանը. «Այլ կախարդը, ասեն, յինն դեւս եւ հանեն զգեսւ»). երրորդ իԱ գլխին սկիզբը դրված հառաջարանը հանելե վերջ՝ պետք էր կերպով մը երկու մասերը միմյանց կապել. այդ կապն ալ կորսված է:

3. ԻԲ գլխով Եզնիկ կքննե նախ, թե կախարդներ շեն կարող դե հանել. երկրորդ՝ գեերը առանց աստվածային թույլտվության իրավունք չունին մարդու մեջ մտնելու, և երրորդ՝ սատանան և զազանները առաջ, երբ մարդիկ մեղանշած չէին, չէին համարձակեր վնասել մարդուն: Այս խնդիրներեն հետո՝ բոլորովին անկապ կերպով կսկսի իԳ գլուխը, ուր կքննե թե հրեշտակները, զմերը և մարդկանց հոգիները անմարմին են, թե բոլոր կարծեցյալ ոգիները (ուրվական են) ցնորական երեսությներ են են. այս քննությունները մինչև Ա. գրքի վերջը կանոնավոր և կապակցյալ կերպով կերթան, որմե հետո կսկսի պարսից քեշին հերքումը: Կթվի թե իԳ գլխեն անմիջապես առաջ պակաս կա. այս պակասը կշեշտվի թերևս նաև անով, որ քանի մը թուղթ հետո (էջ 96) կըսվի. «Այս ամենայն ասացաւ, զի ցուցցի թէ որ ինչ երեւի մարմնաւոր

է, և որ ինչ ոչ երեւի՝ անմարմին. և ի մարմնաւորացն են որ թանձրամարմինք են, և են որ անօսր մարմինք. ...Եւ միանգամայն իսկ ասացեալ թէ որ ինչ ի զգայնոց շօշափի կամ զննի կամ ազդի՝ այն մարմնաւոր է, և որ զգայնոց ոչ ազդի՝ անմարմին»: Եզնիկ այս խոսքերով թերեւ կուտա նախորդ զըստիներու նյութը, այսինքն մարմնավոր և անմարմին (ուրիշ խոսքով երեսի և աներեւույթ) էակներու, թանձրամարմին և անոսրամարմին մարմնավորներու, ինչպես և զգալի և անզգալի (իմա՞ շոշափելի և անշոշափելի) մարմիններու տարբերությունը, որոնք այժմ չկան. այս մասերը կրնանք իդ գլխեն առաջ կորսված մասին տեղ դնել:

4. Սկսյալ 113 երեսն մինչև 149⁴ եզնիկ կկազմե շարունակյալ և խիստ կապակցյալ ամբողջություն մը, ուր զորավոր և մինույն ժամանակ հեգնական ձեերով կըրե մազգեզական վարդապետությունը. ամբողջը կկայանա Զրվանի, Որմիզդի և Ազրիմանի վրա. և գրեթե չկա երես՝ ուր ասոնցմե մեկին կամ մյուսին անունը չկրկնվի. բայց էջ 149, ժի զիսով ամեն բան հանկարծ կփոխվի. այս երեք անունները այնուհետև իսպառ կանհետանան. բարի և շար աստվածներու մասին ո՛չ մի խոսք. նոր ժի զըստը կսկսի բացարձակապես անկապ ձևով մը. «Իսկ այլք այլազգ կարծեցին զսատանայէ, թէ Աստուած իսկ զնա շար արար», Այնուհետև կքննվի ստատային բնականե՞ն շար ստեղծված թե կամովին շար դարձած լինելու խնդիրը, ճակատագիր, կենդանակերպներու ազգեցությունը, աստվածային կանխագիտությունը, բնագդներու, երազներու, քանի մը չիվանդության մեկնությունը, վերջապես դարձյալ երկնային լուսավորներու մասին, որ երկրորդ գիրքը անմիջապես կկապէ երրորդ գրքին հետ: Էջ 149, ժի զիսեն առաջ մեծ պակաս մը ակներեւ և անուրանալի է: Հետաքրքրական է նկատել, թե այս խնդիրները կվերաբերին ավելի Առաջին գորքին և հատկապես կրնան կապվի էջ 90 դրված զիսին. Էջ 173 հայտնապես կիսուվի անձնիշխանության մասին, որ ինչպես հայտնի է՝ Ա. զրքին նյութն է:

5. Էջ 180, վերջին տողեն սկսյալ (Եւ փորձել այնչափ իշխէ) մինչև էջ 185, տող 13 (նորա ոչ ինչ գոյ յայնմ շնորհ) կքննվի թե ստանան ա՛յնչափ միայն իրավունք ունի փորձելու, որշափ հրաման է ստացած, սուտ է ոմանց ըսելը թե ստանան բնավ

չի փորձեր մարդը Ան: Այս բոլորը կկազմե անկախ մաս մը, որուն հետ կապ չունին ոչ իրմե առաջ և ոչ իրմե ետք գրված մասերը. իրմե առաջ դրված մասերը կիսուին քանի մը դիվական հիվանդությանց, ամեննեն վերջը լուսնոտության վրա, իսկ իրմե ետքի մասերը կիսուին լուսավորներու վրա: Եթե երկութին մեջտեղն հիշյալ մասը կրծատվի, իմաստի կապակցության մեջ խաթարում առաջ չի գար, այլ ընդհակառակն ավելի կկապվի: Ըստ իս այս մասը առաջին գրքին վերաբերյալ կտոր մըն է, հատկապես 87—90 էջերուն կողմերին:

6. Երրորդ գրքին մեջ Եզնիկ այլևայլ հույն հեթանոս փիլիսոփաներու վրա խոսելի հետո, էջ 241 կսկսի Պղատոնի մասին՝ այս բառերով. «Եւ մանաւանդ որ քան զամհնեսինն իմաստնագոյն համարին զՊղատոն, որ վասն Աստուծոյ եւ վասն ոգոց եւ վասն արարածոց խօսել յօժարեցաւ: Այնուհետեւ Եզնիկ կիսուտանա զորավոր խոսքերով կովիլ անոր հետ, շախչախել անոր վայելած պատիվը և հետո ցուց տալ, թե ո՞վ է Աստված և որո՞նք են անոր արարածները: Ահա յուր բառերը. «Եւ արդ ընդ նմա իսկ մարտիցուի գոռութեան բանիմ, որ քան զամհնայն փիլիսոփայսն աստուծապատոյն երեսի Յունաց: ...Զի յորժամ զնոսա մեծարոյ կարիսն զձեսցուի, եւ հանցուի զնա յաշաց իւրոցն խարեցելոց, ապա ցուցցուիք թէ ո՞վ Աստուած է, եւ զի՞նչ նորա արարածքը: Այս մեծագորդ հայտարարութենեն հետո, որ ամբողջ գիրք մը ենթադրել կուտա Պղատոնի գեմ, ի՞նչ կգտնենք. վեց տող միայն, ահա այն. «Եւ մի ինչ, զոր առաւել անճառ համարի Պղատոն, այս է՝ թէ միշտ էր Աստուած, եւ արարածն ինչ ոչ ունէր. զորոյ զկամսն սիրեմ վասն զԱստուածն խնդրելոյ, եւ զամրարտաւանութիւնն ոչ գովիմ»: Բոլորովին պարզ է, թե հոս ահագին թերի մաս մը ունինք, և ինչպես կկարծեմ, թերեւ ամբողջ գիրք մը, որուն միայն վերջին տողերն են սույն վեց տողերը⁴⁷: Պղատոնի վրա խոսված է սույն գրքին մեջ էջ 224—227, բայց այս մասը չի կրնար այն խոստացածին տեղը բռնել. որովհետև զրեթե նույն ընդարձակությամբ և երբեմն քիչ մ'ալ ավելի խոսած է Պղութագորասի, ստոյթիկյանց և էպիկուրյանց (220—229) մասին, որոնց համար այնպիսի խոստաբանություն չկա. այս մասերը (Պղատոնի մասն ալ միասին) քիչ մը ընդարձակված կանո-

նավոր թվումն են այն խնդիրներուն, որոնք մեջ բերված են երես 204—205 (այն է ամբողջ Դ գլուխը): Ասկե զատ սա՛ ալ կրնանք ի նկատի ունենալ, որ Պղատոնի այդ մասը խոստումեն բավական առաջ է տրված և չի կրնար ալ տեղափոխվիլ խոստումին տակ, որովհետև այսպեսով իր գտնված տեղին ամբողջությունը կխանգարվի: Պղատոնի գրքին կորուստը մեծ է և ցավալի ո՛չ միայն հայ մատենագրության համար, այլ և բուն հույն գրականության, մանավանդ ընդհանուր փիլիսոփայության պատմության համար⁴⁸:

7. Կմնա վերջին անգամ շեշտել 279 և 289 երեսներուն խոր զանազանությունը, որու մասին տես վերը Ա գլուխ, էջերու համեմատական ցուցակին մեջ, և որ կա՛մ թերություն և կա՛մ առնվազն տեղափոխություն կենթադրե Եզնկա բնագրին մեջ:

ՀԱՅԿԱԿԱՆՔ

Ա. (14). ՄԵՐ Ա.ԽԱԶԻՒ ՊԱՏՄԱԳՐԵՐԻ ԹՎԱԿԱՆԸ

Հայկական ակադեմիայի առաջին ընդհանուր ժողովում, մեր բազմահմուտ հայագետ և Հայկական ակադեմիայի իսկական անդամ Ստ. Մալխասյանը մի բազմաբովանդակ ելույթ ունեցավ հայոց ամենահին պատմագրերի մասին¹, և մաթեմատիկական ճշշմարտությունների նման իրարից բխեցնելով՝ որոշեց նրանց գրության թվականը:

Նա հիմք առավ Եղիշեն, որ խոսելով նախարարների դարձի մասին, ասում է, որ նորից վերադառնալու է (ինձ դարձեալ գալ պիտի) այդ հարցին: Բայց գիրքը այդպես էլ մնում է. չի վերադառնում Եղիշեն իր խոստացած հարցին և չի պատմում նախարարների դարձից քիչ առաջ: Այսպեսով ճշտվում է Եղիշեի գրության ժամանակը, այն է 461:

Փարպեցին Եղիշեից հետո է. նա ժամանակակից է Վահան Մամիկոնյանին, պատմում է նրա ապստամբությունը պարսից գեմ (481) մինչև նրա մարզպան նշանակվելը (485), բայց չգիտե նրա մահը (505): Ուստի և զրված պիտի լինի 490-ական թվերին:

Եղիշեի մեջ ո՛չ մի հիշատակություն չկա Գրիգոր Լուսավորչի մասին. նույնիսկ այն տեղերում, ուր Եղիշեն պարտավոր էր խոսել նրա մասին, դարձյալ ո՛չ մի ակնարկ չկա: Լուսավորիչը ապրել է Եղիշեից շատ առաջ. ինչպես պետք է բացատրել այս լուսացիոնը: Ուրեմն Լուսավորչի «առասպելը», որ հունական օրինատացիայի ստեղծագործությունն է, դեռ այդ ժամանակ հնարյած չէր: Եվ որովհետև Լուսավորչի պատմության հեղինակը Աղաթ-

անգեղոսն է, ուրեմն և Ագաթանգեղոսը գրված է Եղիշեից ուշ, այն է 461—465 թվերին:

Ագաթանգեղոսը ստեղծագործությունն էր Հայոց մեջ գոյություն ունեցող այն կուսակցության, որ հետևում էր հունական օրինացիային: Բայց սրան հակառակ կար Հայոց մեջ նաև մի ուրիշ կուսակցություն, որ հետևում էր ասորական օրինացիային: Այս կուսակցությունը տեսնելով, որ իրենց հակառակորդները մի ուժեղ պաշտամունք ստեղծեցին, որոշեցին մի ուրիշ «առասպել» էլ իրենք հնարել և հնարեցին Արգարի սուս պատմությունը, նրա թղթակցությունը Քրիստոսի հետ, Թագեռու առաքյալի գալը Հայաստան ևն: Ասացին. եթե դուք մի կուսավորիչ կստեղծեք, մենք էլ ահա մի Առաքյալ կստեղծենք և կկապենք ուղղակի Քրիստոսի հետ: Տեսնենք ո՞վ կհաղթե:

Արգարի զրուցը իրեն պատասխան Ագաթանգեղոսի, պետք է ուրեմն գրված լինի նրանից հետո՝ 465—470 թվերին:

Փակստոսի մեջ թե՛ Թագեռու առաքյալի պատմությունը կա և թե Գր. Լուսավորչի (յառաքելասպանն Սանատորկոյ մինչեւ...). ուրեմն և նա գրված է Ագաթանգեղոսից էլ ու Արգարու զրուցից էլ հետո, ուրեմն շուրջ 475 թվին:

Այս բոլորից հետո գրեց Խորենացին, որ սակայն չգիտե Վա. Հանի ապստամբության պատմությունը. ուստի նրա թվականն էլ պետք է դնել 483—6 (Փակստոսի նման նա էլ գիտակ է թե՛ Արգարին և թե Լուսավորչին):

Այսպեսով ամփոփվում է մեր առաջին պատմագիրների շարքը հետեւյալ ձևով.

Եղիշե 461.

Փարպեցի 490-ական թ.

Ագաթանգեղոս 461—465.

Արգարի զրուցը 465—470.

Փակստոս 475 թ.

Խորենացի 483—6²:

Ամբողջ կառուցվածքը շատ գեղեցիկ է, և ինչպես ասացի, մաթեմատիկական ճշտությամբ յուրաքանչյուրը բխում է մյուսից:

Կան սակալն մի քանի հարցեր, որոնք ծառանում են մեր դեմ և կասկած ներշնչում նրանց կապակցության մասին:

202

Այդ հարցերը հետևյալներն են.

1) Խորենացին գրել է 483—6 թվերին. ուստի նա տեսել էր թե՛ Վարդանանց պատերազմը (451) և թե Վահանի ապստամբությունը (481). ինչո՞ւ սրանց մասին ո՞շ մի ակնարկ չունի³:

2) Փակստոսն էլ կանոնավոր Հայոց պատմություն է. նա գնում է Խոսրով Բ-ից մինչև Խոսրով Գ. գրված լինելով ըստ բանախոսի 475 թվին, նա տեսած պիտի լինի Հայոց գրերի գլուտը, Արշակունյաց պետության կործանումը և Վարդանանց պատերազմը. ինչո՞ւ սրանց մասին ո՞շ մի ակնարկ չկամ⁴:

3) Այս հարցերը շեմ տալիս Ագաթանգեղոսի և Արգարու զրուցի մասին, որովհետև սրանք կեղծիքներ լինելով, իրենց ժամանակն էլ պիտի կեղծենին և պիտի ամփոփվեն մի՛միայն իրենց երեսակայած շրջանում: Չեմ խսում նաև Եղիշեի և Փարպեցու մասին, որոնք կանոնավոր շարահարված պատմություններ են⁵:

4) Ստ. Մալխասյանը մեկն է Կովկասի այն շատ սակավաթիվ հայագետ հայկաբաններից, որոնք ճանաչում և ընդունում են ոսկեդարյան և ոչ-ոսկեդարյան լեզուների, ինչպես և ոսկեդարյան զանազան գպրոցների տարրերությունը: Նա լավ գիտե, որ Արգարի զրուցը ոսկեդարյան լեզով է, Ագաթանգեղոս և Փակստոս միևնույն գպրոցին են պատկանում և ոսկեդարյան են, Եղիշեն և Փարպեցին հետ-ոսկեդարյան են և իրար նման լեզու ունին, իսկ Խորենացին՝ իր հունարան լեզով, այս բոլորից հետո է: Այսպես, լեզվի հնագիտության համաձայն այս հեղինակները կազմում են հետեւյալ շարքերը.

ա շարք.—Արգարու զրուցը.

բ շարք.—Փակստոս, Ագաթանգեղոս.

գ շարք.—Եղիշե, Փարպեցի.

դ շարք.—Խորենացի:

Առհասարակ ընդունված է, որ Ոսկեդարը վերջանում է 460 թվին: Բանախոսի տված թվականներից միայն Եղիշեն ու Փարպեցին են, որ համապատասխանում են գծված սահմանին. Արգար, Ագաթանգեղոս և Փակստոս դուրս են ընկնում սահմանից. այսինքն՝ ո՞շ-ոսկեդարյան են, մինչդեռ նրանց լեզուն, ինչպես

203

գիտենք, հաստատապես ուկեդարյան է⁶: Անհարմար է նաև Խորհնացին, որ իբրև Հոնաբան դպրոցի գործ, պետք էր որ ավելի ուշ լիներ, քան Փարակեցին⁷:

5) Ենթադրենք, թե մենք այժմ խախտում ենք 460 թվի սահմանը և տանում ենք ավելի առաջ, օրինակ, մինչև 475 թ.—այս դեպքում Արգարը, Ազաթանգեղոսը և Փավստոսը կմնան Ոսկեդարի (նոր) սահմանում, բայց ի՞նչ կանենք Եղիշեն: Իր լեզվով Եղիշեն Ազաթանգեղոսից, Արգարից ու Փավստոսից անպատճառ հետո է, ուր մնաց թե նրանց ժամանակակից և նույնիսկ ավելի առաջ⁸:

6) Խորհնացին բայց բանախոսի գրել է 483—6 թվերին. կլոր հաշվով դնենք 485 թ., գրած ժամանակ ենթադրենք 60 տարեկան էր. ուստի ծնվել է 425 թ., ուրեմն 40 տարեկան էր, երբ Ազաթանգեղոսը հնարեց կուսավորչի առասպելը, և 45 տարեկան, երբ հնարեց Արգարի զրույցը: Արդ Խորհնացին տեսել ու ապրել էր այդ խարերաների հետ. նա չէ՞ր բռնի նրանց օձիքից և չէ՞ր ասի. «ԵՇ խարերաներ, ինչո՞ւ ձեզանից այդպիսի սուս ու մուտքաներ եք հնարում. ի՞նչ կուսավորիչ, ինչ թագեռու առաքյալ. ո՞ւմ եք ուզում խարել այդպիսի ստերով ևն»⁹:

7) Փավստոսը Ազաթանգեղոսից 10 տարի հետո է և միայն 5 տարի հետո Արգարի զրույցից. նա նույնպես չէ՞ր բռնի այդ խարերաներին և նրանց երեսով չէ՞ր տա նրանց արած կեղծիքը: Բայց նա, ընդհակառակը, երկուակի կեղծիքն էլ ընդունել է և իբրև ճշմարիտ անցկացրել իր Պատմության մեջ: Այս բոլորը խոսք մե՞կ են արել, ի՞նչ է, ստեր հնարելու և այդ ստերը կլեցնելու¹⁰:

8) Փարակեցին գրել է Ազաթանգեղոսից 25 տարի հետո և Փավստոսից էլ ընդամենը 15 տարի հետո. ուստի երկուակին էլ ժամանակակից է և տեսած կամ լսած պիտի լինի նրանց խարդախությունը: Բայց ի՞նչ ձեռով է խոսում նրանց մասին. «Սկիզբն առաջին գրոց պատմութեանն Հայոց, որում սկիզբն արարեալ պատմեաց ստուգի այրն Երանեի Ազաթանգեղոս, սկսեալ ի մահուն Արտեմանալ... զդարձ աշխարհիս Հայոց յանգիտութենէ կոռապաշտութեան յաստուածգիտութեան նշմարառիւմ ի ձեռն սրբոյ նահատակին Գրիգորիսի... Երկրորդ գրոց սկիզբն արարեալ պատմելոյ ի կարգէ առաջին գրոցն՝ զիրս բազմափոփոխ աշխարհիս

Հայոց, զբարեաց և զլարեաց, զվարս և զգործս զարանց սրբոց և զպզծոց, զժամանակի պատերազմաց և զխաղաղութեան: Պատմեալ զայս ամենայն Փաւստոս ոմն Բուլղարացի, մինչև զթագաւորութիւնն Արշակայ...: Ընդ բազում ճառս մատենից առաջնոցն պատմագրացն Հայոց անցի. յորոց ըստ յերկար ընթերցողութեան գտի ի նոցանէ... յստոյգ և յանսխալ կարգաւորութենէ Առաջին գրոցն, զոր յարմարապէս պատմեալ ծանոյց մեզ երանելին Ազաթանգեղոս, այր բանիբուն գիտութեամբ և լի ամենայն նրանցի, ստուգաբան ի կարգադրութիւն նաոից և յարմարագիր ի պատմութիւնս... ստուգապէս յօրինուածով կարգեալ դրոշմեաց...»: Ապա խոսում է Փավստոսի մասին երկար, ևն: Այս բոլորի մեջ նա ո՞ւ միայն խոսում է իբրև Հին, վաղուց արդեն մեռած պատմիչների մասին, այլև իբրև ճշմարտություն թվում է կուսավորչի պատմությունը մանրամասն, իբրև վաղուց ի վեր հաստատված և գոյություն ունեցած պաշտամունք: Այսպէս պիտի խոսեր Փարակեցին, եթե կուսավորչի պաշտամունքը և պատմությունը իր օրով սարքված մի «առասպել» լիներ¹¹: Այսպէս պիտի խոսեր Փարակեցին Փավստոսի մասին, եթե նա իրանից ընդամենը 15 տարի առաջ գրված մի աշխատություն լիներ¹²:

9) Ազաթանգեղոսը և Արգար դուրս են գալիս իրար հակառակորդ երկու կուսակցությանց հերյուրանք. առաջինը հունական և երկրորդը աստրական օրիենտացիայի հետևորդների գործ: Իսկ ի՞նչ կուսակցության էին հետևում Փավստոսը, Փարակեցին և Խորհնացին, որոնք թե՛ Արգարի «առասպելն» են ընդունում և թե՛ կուսավորչի «առասպելլ»: Եթե սրանք ժամանակով շատ հեռաւ լինեին, ինչպես մենք ենք, կարող էին ընդունել երկուսն էլ իբրև ճշմարտություն. բայց չէ՞ր որ այս երկուան էլ, ինչպես բանախոսն է ասում, նրանց օրով սարքված առասպելներ էին¹³:

10) Ընդունենք, որ հունական օրիենտացիան հույն կուսակցուին դնելով մեշտեղ, իր կուսակցությունը փառավորեց: Այդ դեպքում ինչո՞ւ իսկական մի հույն չվերցրեց և գնաց մի շար պարսիկ Անակի (ապահակերեն լեզվով անակ նշանակում է «շար»!) որդուն հայ եկեղեցու հիմնադիր դարձրեց¹⁴: Վերջապես ասորի կուսակցությունը ի՞նչ շահ ուներ թագեռու առաքյալին դնելու հայ եկեղեցու հիմնադիր, քանի որ թագեռու առաքյալը ասորի չէր և

իրրե Քրիստոսի աշակերտ՝ պատկանում էր ընդհանուր քրիստոնեական եկեղեցուն, թէ՛ ասորուն, թէ՛ հային, թէ՛ հույնին և թէ լատինին¹⁵:

Ես կինդրեի, որ այս 10 հարցումներիս պատասխանը մեծարգո բանակը-համասեր-հայագետը շզլանար տալու մեր Ակադեմիայի «Տեղեկագրի» մոտակա մի համարում, որով հարթված պիտի լինին մեր մտքում ժագած թյուրիմացությունները:

Բ (55). ՀՅՅ. ԹՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՍԻԱԼ ԶԵՎ.

Ամենքիս հայտնի է հին հայոց թվագրության ձեզ. Ա—Ժ ներկայացնում են 1—10 թվերը. Ժ—Ճ ներկայացնում են 10—100, իսկ Ճ—Ռ 100-ից մինչև հազար թվերը. Այս վերջին շարքի անհատ թվերն են Ճ=100, Ռ=200, Ց=300, Ն=400, Շ=500, Ռ=600, Չ=700, Պ=800, Ջ=900:

Ուշ շրջանի գրողների մեջ, թվագրության ժամանակ պատահում են երեսմն շեղումներ այս վերջին թվերի շարքում, օրինակ՝ փոխանակ գրելու Շ=500, կարելի է գտնել ԵՃ (5×100) և նման ձևեր:

Ավելի հետաքրքրական են այն շեղումները, որոնց մեջ հարյուրավոր թիվը գրվելուց հետո ավելացվում է նաև Ճ հարյուրավոր թիվը՝ բոլորովին ավելորդ և իզուր տեղը:

Այսպիսի մի թվագրություն տեսա վերջերս Սյուրմեյանի «Յուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի, Հոտ. Ա» աշխատության մեջ (տպ. Երրուսաղեմ, 1935), էջ 214:

Ահա ձեռագրի հիշատակարանի այդ կտորը. «Գրեցաւ... ի մեծաշուշակ քաղաքս որ է Բերիայ որ կոչի Հալպ ընդ հովանեաւ Սք. ածածնին, ի թուականութեն. Հայոց : ԶՃՀ. ի նեղ և ի դառն ժամանակիս»:

Հրատարակի Սյուրմեյանը այս ԶՃՀ թարգմանել է 1429 թ., անշուշտ մտածելով, թէ Չ=700+Ճ=100+ՀՀ=78, գումար 878, որի վրա ավելացնելով 551—ստացվում է 1429; Եվ այս 1429 թիվը գրել է էջ 213 նկարագրված № 126 ժողովածուի վերևում:

Բոլորովին սիսալ է:

Պետք է ամբողջապես դեմ գցել $\delta=100$ թվանշանը և մնաց-յալը գումարելով՝ ընդունել 1329 թ.:

Սիսալը կարելի է հաստատել մի քանի ձեռվկ:

Ժողովածուի գրիչն է Ստեփաննոս քահանա Կրակացի. Այս անձը ծանոթ է մեզ այլուստ. նա հիշված է Ալիշանի Սիսվանում, էջ 517ա և 547թ. Նախ քահանա էր, ապա եղավ արքեպիսկոպոս Տարոսնի, թվականն է 1320 թ. (այս թվին նա ուսուցիլ էր Կրակացուղաքարի դաստան մեջ, որ գտնվում էր «Թորոս Զաւտկա» հովանավորության տակ):

Երկրորդ. ձեռագիրը էջ 351 ԶՃՀ թվականը դնելուց հետո, ավելի մանրամասնում է ժամանակը՝ ասելով. «ի հայրապետութե. տն. Յակոբայ: Եվ ի թագավորութիւն. տղայ Լեռնի: Որդի Աւշին թագավորի»: Այս Հակոբը է Հակոբ Բ Տարոսնացի, որ գահակալել է 1327—1341 թթ. (իսկ 1429 թվին կաթողիկոս է Պողոս Բ Գառնեցի):—«Տղայ Լեռն» է Լեռն Ե, որդի և հաշորդ Օշինի, տասը տարեկան հասակում գահ բարձրացավ և 1329 թվին 19 տարեկան էր միայն: (Իսկ 1429 թվին հայոց թագավոր չկար. Լեռն Զ գերի էր գնացել 1375 թվին):

Երրորդ. ձեռագիրը էջ 226 գրված հիշատակարանում արդին չի գրում ԶՃՀ, այլ միայն ԶՃՀ, որից շուշարեկվելով Սյուրմեյանը, թարգմանում է 1329 թ. և կողքին էլ դնում է ! զարմացական նշանը:

Չորրորդ. ձեռագիրը էջ 284 դնում է նորից մի հիշատակարան, որը կրկնելով ԶՃՀ թվականը, Հակոբ և Գրիգոր Անարգարացի (1293—1307 թթ.) կաթողիկոսների և Օշին ու Լեռն (Ե) թագավորների անունները, տալիս է մի քանի պատմական նոր մանրամասնություններ: Այս նոր հիշատակություններից էլ չի ուշարեկվում Սյուրմեյանը և ասում է թէ «անկասկած որ հիշատակագրության վերջին մասը նույնությամբ ընդօրինակված է հատորիս գաղափար ծառայող առաջին օրինակեն, այլապես գրչության թվականը և հիշատակագրությանս այդ մասը ժամանակով չեն նույնանար»:

1894—5թթ., երբ ուսուցիչ էի Կարնոն Սանասարյան վարժարանում, ձեռնարկեցի կազմել նույն դպրոցի հայերեն ձեռագրերի ցուցակը, Յուցակը տպվեց նախ «Հանդես Ամսօրյա» ամսագրում և ապա առանձին գրքով հրատարակվեց Վիեննա, 1900 թ.: № 1 ձեռագիրը 986 թ. գրված Ավետարան է: Այս Ավետարանի մեջ կային հայտնապես մի քանի կրկնագիր թերթեր, այն է՝ 2—15 և 328—329: Այդ կրկնագիր մասերը երևան հանելուց հետո պարզվեց, որ Հովհաննու Ավետարանից մի մաս էր (ԺԷ, 28)—եւ ամին զթիսու ի վանացն Կայիշափայ հն և նույնպէս Պողոսի առ Կողոսացիս թղթից գլուխ Ա, գլուխ Գ; որ ավելորդ եմ համարում այստեղ առաջ բերել:

Նորատիպ «Ճիշտակարանք ձեռագրաց» աշխատության մեջ, որ հրատարակեց Սսի Գարեգին Ա. կաթողիկոսը 1951 թ. Անթիլիս, էջ 150, խոսելով այս ձեռագրի մասին, հայտնում է, թե «Կրկնագիր լինելով, ավելի հին է քան նև (=986) թվականը»:

Այս համառոտ, բայց արժեքավոր նկատողությունը առիթ է տալիս մեզ ավելի խոր մտածության:

Ճշմարիտ է, որ կրկնագրի տակը գրված բնագիրը ավելի հին է, քան վերեինը: Օթե 986 թ. գրված բնագիրը մինչև այժմ (մոտ 1000 տարի) դիմացել է և հասել է մեզ անվթար, այն էլ տաճկական ավերումներից և, մանավանդ, 1915 թվականի ընդհանուր հայկական կոտորածից հետո, ինչո՞ւ չմտածել, թե տակի գրությունը գոնե 500 տարի ավելի հին լիներ, մանավանդ, որ Ե դարից մինչև ժամանական ավերածություններ շկային դեռ:

Այս մտածումքով մենք ահա հասնում ենք Ե դարին: Կինում են դեպքեր, երբ կրկնագիրը քիչ ժամանակ միայն ավելի հին է, քան բնագիրը: Հայտնի է, որ Կիեկը գանգատվում է այն մասին, թե ոմանք իր ճառերը մագաղաթի վրայից քերելով՝ ուրիշ նոր բան են գրում: Ուրիշն եթե մի հեղինակի կենդանության ժամանակ դեպքեր էին լինում մագաղաթը քերելու, ինչու չմտածել, թե շուրջ 100 տարի հետո մի գործ որևէ մագաղաթ ձեռք բերած լիներ և քերելով՝ նոր բնագիր արտագրած լիներ:

Սակայն այս առարկությունը գոնե այս դեպքում ճիշտ չէ,

որովհետև եթե այդ գրիչները մագաղաթը քերում և նորից էին գրում, այդ նոր գրությունը տարբեր բնագիր էր լինում և ոչ թե միենալունը: Մեր քննած 986 թ. ձեռագիրը Ավետարան է, և տակի գրությունն էլ Ավետարան է: Ինքնին հասկանալի է, որ այդ հին Ավետարանը այնքան հին էր, որ այլևս անգործածելի դառնալով, պետք էր քերել և մաշված ու անընթեռնելի դարձած տողերի վրա նորից Ավետարան գրել:

Քիմիական միջոցներ այժմ շատ կան քերված բնագրերը երևան հանելու համար: Հրավիրում եմ մեր երիտասարդ քիմիկուներին այդ միջոցներով երևան հանել մեր Ե դարի այդ ամենահին ձեռագիրը, որպեսզի տեսնենք, թե ինչ հնագրական արժեք է ներկայացնում:

Չենագրի ցուցակը կազմելուց 58 տարի հետո նորից գնացի և տեսա այդ ձեռագիրը, որ բարեխախտաբար փրկվելով տաճկական աշխարհավեր սպանդից, շնորհիվ սովետական իշխանության փոխադրվել է այժմ մեր Մատենադարանը: Կարևոր կետը այն է, թե հինգրորդ դարի այդ ձեռագրի երկաթագիրը ո՞ր տեսակին է պատկանում:

Հայտնի է, որ մենք ունենք երկու տեսակ երկաթագիր: Առաջինը կոչվում է բուն Մեսրոպյան կամ զիխագիր երկաթագիր, իսկ երկրորդը կոչվում է միջին Մեսրոպյան երկաթագիր: Այս երկուսի տարբերությունն այն է, որ առաջինի մեջ տառերը կլորածեն, իսկ երկրորդի մեջ՝ անկյունավոր և թեքվում են դեպի քառակուսի ձեր: Տաշյանը իր Ակնարկի մեջ հնագույնը համարում է զիխագիր երկաթագիրը, բայց իր որոշման մեջ վճռական չէ: Իմ «Հայոց գրերը» աշխատության մեջ (Վիեննա, 1928) էջ 387—396 կարծեմ թե կարողացել եմ ապացուցել, որ հնագույնը երկաթագիրն է:

Մեր խնդրանքով պատմական գիտությունների թեկնածու ընկ. Կ. Ղաֆադարյանը հետևյալ ծանոթությունը տվեց այդ ձեռագրի մասին:

«Մատենադարանի 986 թվականին գրված № 7735 ձեռագիր Ավետարանը (Սանասարյան վարժարանի № 1 ձեռագիրը) սկզբնապես ոչ մի զարդանկար չի ունեցել, դրա համար բոլոր շորս ավետարաններն ել սկսվում են պարզ գրությամբ,՝ բայց որում

վերնագրերը ուղղագիծ երկարագիր են, իսկ տեխնոլոգիա՝ միապահադ
բոլորանք երկարագիր, որ լիսպիս համապատասխանում է Հ դա-
րի գրչության ռեն:

Սակայն հետազայում, ճավանարար ՏI դարի առաջին կեսին, Ավետարանի սկզբին ավելացրել են 7 թեր մագաղաք, որոնց վրա գրել են նվազերիս Կարպիանոսի բուղը (4—5 էջ) և Ավե-
տարանի տասը կանոնները (5—13 էջեր), բոլորն էլ խիստ պրի-
միտիկ խորաններով զարդարած և կարմիր, կապույտ, դեղին և
կանաչ գույններով ներկած: Այդ հավելվածը թերերը խիստ կնրանով
տարբերվում են բուն Ավետարանի մագաղաքից թե՛ որակով և
թե՛ այն բանով, որ նրանք պրիված են մի հին ավելի մեծ շափսի
ձեռագիր Ավետարանից և վրայի գրվածքը մաքրելով կրկին ան-
գամ օգտագործել են Կարպիանոսի համակի և կանոնների համար: Մեր ասածք ապացուցվում է նաև այն բանով, որ նման մի թերը
էլ օգտագործված է Ավետարանի մեջ, գործածության ժամանակ,
ձեռագրի միջից բնկած թերքի տեղում, որն այժմ համարակալ-
ված է 328 և 329 էջերի տակ: Անշարժավճ այն է, որ այդ թերքն
ավելացնողը ձեռագրի մի շարք էջերում (330—348) ուժեղացրել
է իր մուգ գույնի մելանով՝ գունարափ բնագիրը: Այդ թերքի վե-
րին գիրն ըստ գրչության ռնի պատկանում է ՏI դարի առաջին
կեսերին, ուստի բնական կիխներ նաև ձեռագրի սկզբի կանոնների
թերքը ևս հայտարարել ՏI դարի առաջին կեսի գործ, իսկ տակը
հին գրչությունը, որ դարձալ բոլորանք հին երկարագիր է՝ ավե-
լի հին:

Սակայն կանոնների հյուսածո զարդարանների ռենական
հննությունը ցույց է տալիս, որ հին ձեռագրի այդ թերերը կրտ-
րատել, գրությունը ջնջել և նկարազարդել են ՏI դարի վերջերին
կամ ՏI դարում, երբ մանրանկարչությունն իր համար առանձին
ռն դեռևս չեր կարողացել ստեղծել, այլ ամենութեք, ինչպես ման-
րանկարչության, նույնպես էլ գեղարվեստական կերամիկայի մեջ
օգտագործվում էր, այսպիս կոչված, նարտարապետական օրնա-
մենտը և ոչ ՏI դարում, երբ արդեն մշակվել էր մանրանկար-
չական առանձին ռն:

Այս կարևոր հանգամանքը նկատի առնելով, պետք է եղա-
210

կացնենք, որ Մատենադարանի 986 թվականի Ավետարանը XI
դարի առաջին կեսերին վերանորոգելու ժամանակ մի այլ հին ձե-
ռագրի մեջ ՏI դարում օգտագործված 7 կրկնագիր թերերը պո-
կել և միացրել են նրան, որին իր շափերով ժիշ տարբերությամբ
հավասար է եղել բննարկվող ձեռագիրը: Այս եղանակացությունը
ավելի հավանական է դառնում, երբ նկատի առնենք նաև այն
հանգամանքը, որ այդ թերերի շափսը ձեռագրի մյուս թերերի
շափսից մի ժիշ տարբեր է:

Այսուղ հարց է առաջ գալիս, թե այս դեպքում ինչպես բա-
ցարել 328—329 էջերի թերքի նորոգությունը XI դարում նույն
հին ձեռագրի մագաղաքյա թերով:

Չեռագիրն այժմ պահպանակ չունի, հավանարար այդ թեր-
քը սկզբում նույն ձեռագրում օգտագործված է եղել իրեւ պահ-
պանակ, իսկ հետո նրա հին գրությունը ջնջել և օգտագործել են
ընկած թերքի տեղում, ձեռքի տակ մագաղաքյա ազատ թեր չու-
նենալու պատճենով:

Այս տեսակետով պրոֆեսոր Հր. Անառյանի ենթադրությունը
ստանում է մեծ կարևորություն, որովհետեւ, եթե իրոք ՏI դարում
մագաղաքյա մի ձեռագիր մատյան արդեն այնքան էր հնացել, որ
նրա թերերը պոկրուում էին փոքրացնելու և այլ մատյանների
մեջ իրեւ պահպանակ օգտագործելու նպատակով, ապա այդ հին
ձեռագիրը պատկանելու էր հայոց գրերի սկզբնական շրջանին,
հավանարար ՏI դարին:

Մինչ այժմ մեզ ծանոթ էին Դվինի VI դարի վիմական արձա-
նագրությունները, իսկ ձեռագիր մատյանների ՏI դարից ավելի
հին գրչության օրինակները մեզ համար անհանաչելի էին, բացի
մի քանի կրկնագրերից, որոնք դեռևս ուսումնասիրված չեն, ուս-
տի այսուղ բննվող ձեռագրի կրկնագիր թերերի ստորին գրու-
թյանը անվեպ հայոց գրչության սկզբնական շրջանին պատկա-
նելը ունի խիստ մեծ կարևորություն հայկական գրերի պատմու-
թյան համար»:

Դ (37). ԲՈՒԶԱՆԴ ՓԱՎԱՏՈՍԻ ՄԱՍԻՆ

1907 թվին, Փարիզի «Բանասեր» հանդեսում հրատարակեցի
մի աշխատություն, որի վերնագիրն է «Չեռագրական սրբագրու-

թյուններ Փակստոսի մեջ»; Կա նաև սրա առանձին արտատպությունը (64 էջ):

Այստեղ խոսում եմ նաև այն մասին, թե Բուլ. Դ դպր. գլ. ժղ, հրտր. Պատկ. էջ 107, տող 9—11 մի մեծ թերույթ կա:

Հատվածը հետեւյալն է.

«Կամեցաւ խանգար առնել ի մէջ Արշակայ թագաւորին Հայոց և փախչելլայլ ասէր Շապուհ. թէ ձեր սրտի մտօք էր տուեալ զիրդումն» են:

Որպեսզի պարզ լինի թերույթի հանգամանքները, պատմում եմ համառոտիվ այն, ինչ որ պատմում է Բուզանդը մինչև վերոհիշյալ հատվածի երկգծիկով բաժանված մասը:

Արշակը այցելության է գնում Շապուհին, որ սիրալիր ընդունելություն է ցույց տալիս. պատահում է միայն փոքրիկ մի միջադեմ. Շապուհի ախոռապետը (սորակալ, կարդա ստորակալ, տես՝ Արմ. բռ. է, 182) անարգում է Արշակին. աներկյուղն Վասակ տեղնուտեղը սպանում է նրան. Շապուհը վարձատրում է Վասակի քաջությունն ու տիրամակրությունը: Այնուհետև Շապուհը և Արշակը սիրո դաշինք են կնքում. Շապուհը կանչում է Տիսպոնի երեցներին և նրանց ձեռքով երդում տալիս Արշակին՝ Ավետարանի վրա: Շապուհը շատ է ուրախ այս դաշնադրության վրա. ուստի առանձնապես պատվում է Վասակի եղբայր Վարդանին, որ միշնորդ էր եղել երկու թագավորների միջև: Վասակը նախանձում է և ուզում է դաշինքը խանգարել:

Երկգծիկից հետո նյութը հանկարծ փոխվում է.—Շապուհն է, որ խոսում է Տիսպոնի երեցների հետ, կասկածում է, որ նրանք սուտ են երդում տվել Արշակին, և բոլորին կոտորում է. պարզ է, որ մի խոշոր պակաս կա այստեղ: Պակաս մասի նյութը հետեւյալն է. Վասակը համոզում է Արշակին և երկի շարախոսելով Շապուհի մասին՝ պատճառ է դառնում Արշակի փախչելուն: Շապուհը լսելով Արշակի փախուստը և կանչելով Տիսպոնի երեցներին, մեղադրում է նրանց, որ նենգությամբ են երդում տվել և խաբել Շապուհին: Երեցների գլխավորը (Մարի) պատասխանում է. «Մենք արդարությամբ երդում տվինք. իսկ եթե նա ստեց Ավետարանին, նույն Ավետարանը դարձյալ նրան քո ոտքը կբերի»: Մնացյալը

տեսնվում է ԺԶ գլխի շարունակության մեջ: Պակաս մասի այս բովանդակությունը երևում է նաև ԺԶ գլխի ընդարձակ խորագրից աթէ զիարդ ստեաց լետոյ (Արշակ) և փախեաւ, երկրորդ՝ հաջորդ գլուխների պատմությունից, և մանավանդ երրորդ՝ ԾԴ գլխի առաջին մասից, ուր Շապուհ թագավորը (30 տարի հետո) ընդարձակ կերպով մեջ է բերում այս պատմությունները, իբրև հին հիշողություններ:

Տեղուտեղը ստուգելու համար մեր ձեռագրերի դրությունը, դիմեցի մեր Պետական Մատենադարանը: Ձեռագիրների հմուտ մասնագետ ընկ. Լուն Խաչիկյանը իր սիրալիր պատրաստակամությամբ վայրկենապես բերեց ինձ Բուզանդի բոլոր ձեռագրիները: Դրանք թվով 7 հատ են և կրում են հետեւյալ համարները №№ 1185, 1482, 1867, 3071, 3079, 4584 և 8813: Առաջինը և վերջինը թերի լինելով՝ չէին պարունակում մեզ հետաքրքրող հատվածը, քննեցի մյուս հինգ օրինակները և գտա, որ ոչ մի փոփոխություն չեն մտցնում տպագրյալ բնագրի մեջ:

Այսպիսով, ուրեմն, ստուգեց, որ թերի են մեր բոլոր ձեռագրերը Բուզանդի հիշյալ կետի վերաբերմամբ:

Բայց այս թերությունը մի ուրիշ բան էլ ապացուցեց, այն, որ մեր ունեցած այս բոլոր ձեռագրերն էլ (Վենետիկի, թե Երևանի) բխում են միայն մի նախագաղափար օրինակից և այդ ձեռագրերի ճյուղագրությունը կազմելու և խմբավորելու կարիք չկա:

Ե (49). ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՄՍԱՆՈՒՆԵՐԸ

Անանիա Շիրակացին (կամ Շիրակունին) իր զանազան մանր աշխատությունների շարքում տալիս է նաև 16 զանազան ազգերի ամսանունները: Այս բոլորը հրատարակել է պրոֆ.-դր. Աշոտ Աբրահամյանը (Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 116—122):

Խնդրել էի պրոֆ.-դր. Էդ. Աղայանից ուսումնասիրել աղվանից ամսանունները՝ համեմատելով արդի Ռուսիացոց լեզվի հետ: Հաջողությամբ կատարեց նա այս աշխատությունը ընկ. Պատվական Քուշմանյանի աշակցությամբ:

Այստեղ ես քննության եմ առնում մի քանի ուրիշ ժողովուրդների ամսանունները:

Նախ առնում եմ մակեդոնացոց ամսանունները:

Մակեդոնացոց լեզվական ամեն տեսակ մնացորդների համար առանձին ուսումնասիրություն ունի Hoffmann, Die Makedonen, Göttingen, 1906:

Այստեղ էջ 101 գտնում ենք մակեդոնացոց 12 ամսանունները: Բաց ենք առնում Շիրակացու մատեն. էջ 121 «Ամիսք մակեդոնացոց» և ո՞չ մեկը չի համապատասխանում Hoffmann-ի տված անուններին: Այս վերջինները գտնում ենք Շիրակացու մոտ, էջ 119, «Ամիսք յունաց» վերնագրի տակ:

Տալիս եմ այստեղ երկուսի ցուցակը՝ համեմատության համար:

Hoffmann
Մակեդոնական ամիսներ

Δίες
'Απελλαῖος
'Αύδναῖος
Περὶτιος
Δύστριος
Ξενθίκος
Αρτεμίσιος
Δαισίος
Πάναρος
Λώιος
Γοրπιαῖος
'Υπερβερετάῖος

Շիրակացի
ամիսք հունաց
Թիոս
Ազիդիփոս
Գենեսիփոս
Պերիփոս
Դυտրիփոս
Քսանթիկոս
Արտեմիսիփոս
Դեսիփոս
Պենիմոս
Պենիմոս
Գենիփոս
Հենիմոս
Գենիփոս
Հենիմոս
Գորպիփոս
Հիպետիփոս

Համեմատության մեջ ուր որ սխալներ կան, տպված է շեղատառ:

Հրատարակիչը 119-րդ էջի վերջում ծանոթագրում է, թե «Հայկական ՍՍՀ Մատեն. № 1973 գրագրում ասորաց և հունաց ամիսներից մասամբ տարբերվում են վերևում, ծանոթագրության համար համարակալված հետեւյալ ամիսների անունները»: Նույն այս տեղեկությունը դրված է նաև 120-րդ էջի վերջում. և իրոք «ասորաց և հունաց» ամիսների մեջ ծանոթության համար համարակալված են 1—13, որից 1—7 ասորաց ամիսների համար և 8—13 մակեդոնական ամիսների համար: Դժբախտաբար խոստացված տարբերակները ո՞չ նույն էջում և ոչ էլ նախորդ և հաջորդ էջերում չեն հրատարակված: Կարենոր էր սակայն այդ, որովհետև նրանով պիտի իմանալինք, թե արդյոք № 1973 ձեռագրի ընթերցվածները ավելի լավ չե՞ն և պիտք չե՞ր արդյոք դրանք դնել բնագրում, ինչ որոշելը իմ հիմնական նպատակն էր:

Արաբական ամսանունները դրված են երկու անգամ, առաջինը «Ամիսք տաճկաց» վերնագրով (էջ 121), երկրորդը «Ամիսք արապկաց» վերնագրով (էջ 122):

Այս երկուսը դնում եմ իրար գեմ:

Ա

Մաւհալամ
Ասիփար
Բապիաւալ
Բապիախր
Ջամագիաւալ
Ջամադիախր
Բաջապ
Շահլապան
Ոտնազան
Ջաւալ
Ջուլաս
Ջուլատ

Մուհամառ
Սաֆար
Բապիլաւալ
Բապիախր
Ճմէտալաւալ
Ճմէտալախր
Բաջար
Շայլան
Ուամադան
Շաւալ
Տիլայս
Տէլհիճա

Երկուսն էլ սխալաշատ. երկրորդը առաջինից մի քիչ ավելի լավ է. աղավաղումները ցույց տալու համար դնում եմ այստեղ արաբերեն ամսանունները՝ տառադարձությամբ հանդերձ.

مَعْرِم	muḥarram
صَفَر	safar
رَبِيعُ الْأَوَّل	rabī'-al-avval
رَبِيعُ الْآخِر	rabī'-al-āxir
جَمَادِيُ الْأَوَّل	Jamādi al-avval
جَمَادِيُ الْآخِر	Jamādi-al-āxir
رَجَب	rajab
شَبَان	Ša'bān
رَمَضَان	ramazan
شَوَّال	Šawvāl
ذِي الْقَعْدَةِ	Zilga'da
ذِي الْحِجَّةِ	Zilhijja

Որովհետև անըմբոնելի է տեսնել այսպահ ակնհայտ սխալ-ներ նույնիսկ մեր հարևան լեզուների ամսանունների մեջ (արաբերեն և մանավանդ վրացերեն), ուստի իրավացի ենք գտնում պրոֆ. Աբրահամյանի այն եղրակացությունը, թե «այս ամիսների անուններից որոշ ցանկեր, հատկապես արաբականը, մեր կարծիքով, մտցված է տեքստի մեջ հետագայում» (Եղրակացու մատ., էջ 122):

Վրացական ամիսներն էլ երկու տեսակ են. սրանք էլ դնում եմ դեմ առ դեմ (Ա. և Բ), համեմատության դնելով նաև (Գ) իսկական վրացական ամսանունները, որ հաղորդեց ինձ վրացի գիտնական պրոֆ. Աբովյան՝ քաղելով Օրբելիանի բառարանից, հրատ. 1928, էջ 139.

A	B	C
Ախւածելի	Ախալծերի	Ախալծլիսա
Սիթիլի	Սթիլի	Սթուլիսա
Տիրիսթի	Տիրիսղին	Տիրիսկոնիսա
Տիրիսղենի	Տիրիսղինի	Տիրիսղենի
Ապանի	Ապանի	Արանի
Նունկնի	Նուկկնի	Նուրծղունիսա
Նիկրանի	Նիկրանի	Նիրկանի
Իգրակա	Իգրիկա	Իգրիկա
Վարդոսպ	Վարդոսպա	Վարդորիսա
Մարիլի	Տրելի	Մարիալիսա
Քուրա	Քուրա	Թիթիսա
Քուրալուրա	Քուրարալուրա	Քվելթորիսա

ԱՆՎԱՆՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄՍՈՅ

Մեր ժամանագության ամենահին հիշատակարանները կը հայտնեն, թե մեր նախնիք կգործածեին մասնավոր ժամանակագություն մը, ուր տարին կբազկանար 365 օրե, բաժնված 12 ամիսներու՝ որոնց յուրաքանչյուրն ուներ 30 օր. իսկ այս 12 ամիսներուն վրա կբարդվեր տարեկան հավելվածական 5 օր: Իբրև թվական կգործածվեր մասնավորապես յուրաքանչյուր թագավորի գահակալությունը. օրինակ, Արշակի Ա տարին, Բ տարին, Գ տարին, և այլն. այս թվականը կվերջանար թագավորին մահվան հետ և հաջորդին գահակալության օրեն կսկսեին հաշվել նոր թվական: Այսպես շարունակարար:

Պետքին համեմատ կգործածեին նաև պարզապես՝ Արշակի տարին, Տրդատի ժամանակն:

Առհասարակ գիտուն ժամանակագիրները հաշված են միենույն ժամանակ իշխող այլևայլ թագավորներու վրա միանդամայն. այսպես. «Յերկրորդ ամի Որմղի Պարսից արքայի և յութերորդ ամի ինքնակալութեան Կոստանդեայ»: (Խոր. Գ. 5). Կամ պարզաբար լոկ ի բագաւորութեանն Հերակղոսի և շախչախ բագաւորութեանն Յազկերախ, և ի կարողիկոսութեանն Հայոց Եղրի և ի սպարապետութեանն Մուշեղի, ի Սիւնեաց տէրութեանն Գրիգորի, յեպիսկոպոսութեանն Մաքուսաղայի... (Մով. Կաղ., ծ.): Բնիկ ժողովրդական կյանքին մեջ, ուր կարիք էկար ոնավ շատ հեռու տեղեր երթալու, ժամանակագությունը կհիմնվեր հայ թագավորին, կամ տեղական իշխանին և կամ առ առավելն Պարսից թագավորին վրա:

Այս ժամանակագությունը երկու թերություն ուներ. նախ,

որոշ և շարունակական թվականի մը պակասությունը, որով քանի մը սերունդ առաջ երթալու ժամանակ ստիպված էին երկար հաշվներ ընել, հին պատմությունները քրթել, և այլն. իսկ երկրորդ պակասություն այն էր, որ տարին լոկ 365 օրե բազկանալով ամեն տարի գրեթե 6 ժամ (շորս տարին մեկ օր, մեկ դարու մեջ 25 օր) սխալ կհաշվեր. ինչ որ նահանջ տարիի գրությամբ պիտի դարմանգեր: Այս պատճառով և եղանակներուն հաջորդական կարգը կիանգարեր, և միմնույն օրը՝ օրինակ նավասարդի մեկը՝ եթե այս տարի հունվեական թվականին հետ համեմատելով օգոստոս 1-ին եկավ, չորս տարի վերջ կու գար հուլիս 31-ին, չորս տարի ավելի վերջ հուլիս 30-ին և այսպիս շարունակաբար:

Հայ ժողովուրդը ամեն նավասարդի հետ նոր տարին կտոներ. ժամանակագրական սխալը մարդկացին ամբողջ կյանքի մը մեջ միայն գրեթե 20 օր ետ մղելով տարին, բնական է թե եղանակներուն փոփոխությունը մարդոց շատ գգալի չէր ըլլար:

Այս դրությունը գործածվեցավ շատ ժամանակ, նույնիսկ մեր հին գրականության ամենեն փայլուն շրջանին:

Մովսես կաթողիկոս Եղիշվարդեցին է, որ առաջին անգամ մտածեց բարեփոխություն մտցնել այս դրության մեջ. ուստի և ազգին դիտունները Դվին ժողովի զումարեց և հոն որոշեցին հայոց բնիկ անփոփոխ թվական մը գնել:

Թրիստոսի 552 թվականին, հայոց վեցերորդ ամիսն էլ (Արաց որ այն տարին կհամապատասխաններ դեկտ. 11—հունվ. 9-ին), երբ Դվինի ժողովը գումարեցավ. այդ տարին նահանջ էր և հետևաբար թէ՝ 552-ին և թե հաջորդ 553, 554, 555 տարիններն ալ նավասարդ 1 պիտի գար հուլիս 11-ին: Ժողովականներեն մեկ մասը որոշեց, որ նոր թվականին 1-ը սկսի 553-ի նավասարդին. իսկ մյուս մասն ուզեց որ 552-ի նավասարդին սկսվի. համաձայնություն շկարենալով գոյացնել՝ երկու կողմերն ալ պահեցին իրենց վճիռը և ազգին մեջ միմնույն ժամանակ սկսան գործածվիլ երկու տարբեր թվականներ՝ իրարժե մեկ տարի տարբերությամբ:

Առաջինը կսկսի 553-ին հուլիս 11-ին = Հայոց Ա. նավասարդ 1; Երկրորդը՝ որ ավելի սովորական և գործածական դարձավ, կսկսի 552-ին հուլիս 11-ին = Հայոց Ա. նավասարդ 1;

Գալով նահանջի սխալներուն, ինչպես հայտնի է, շատ գգալի

շէր այդ և նկատողության շառնվեցավ, սիսալները որոշ կերպով
սկսան շարունակվի՝ այսպես,

Հայոց	Ա.	Քրիստոսի	552	Հուկի	11
»	Ե	»	556	»	10
»	Թ	»	560	»	9
»	ԺԴ	»	564	»	8 և այլն

Նավասարդն այսպես մեկ մեկ օր ետ գալով, արդեն Հայոց 249
և Քրիստոսի 1317 թվականին երկու տարեգումները նույն օրն
հանդիպեցան. Նավասարդի մեկը հունվարի մեկին էր; Նույնը շա-
րունակելով՝ ասկե 115 տարի վերջ՝ այսինքն Քրիստոսի 2012 թվա-
կանին Նավասարդի մեկը դարձյալ հուկի 11-ին պիտի պատահի,
որով սիսալներուն համագումարը պիտի լինի 1 տարի (1460 տար-
վան մեջ):

Այս է ինչ որ կկոչվի Շարժական տոմար: Բայց մեր հայրերը
հետո հաստատեցին նաև Անշարժ տոմար մը՝ ընդունելով նահանջ
տարիի գրությունը և Ավելեաց ամիսը հաշվելով 5 կամ 6 օր: Իսկ
իրենց ամիսները հաստատեցին Արշակունյաց թագավորության
վախճանին՝ Քրիստոսի 428 թվականին համեմատ՝ հետևյալ կեր-
պով.

1. Նավասարդ	11 օգոստոս Նահանջ	տարին
2. Հոռի	10 սեպտեմբեր	—
3. Սահմի	10 հոկտեմբեր	—
4. Տրե	9 նոյեմբեր	—
5. Քաղոց	9 դեկտեմբեր	—
6. Արաց	8 հունվար	—
7. Մեհեկի	7 փետրվար	—
8. Արեգ	9 մարտ	8 մարտ
9. Ահեկի	8 ապրիլ	7 ապրիլ
10. Մարերի	8 մայիս	7 մայիս
11. Մարգաց	7 հունիս	6 հունիս
12. Հրոտից	7 հուլիս	6 հուլիս
13. Ավելլաց	6 օգոստոս	5 օգոստոս

Ժամանակագրության այս եղանակը միայն մեզի հատուկ չէր.
Եղիպատացիներն ունեին միկնույն ձեռ, ինչպես Հերոդոտոս և

կպատմե. «Եղիպատացին ամիսը 30 օր հաշվելով՝ ամեն տարի հա-
վելիածական եինք օր միայն ավելցնելու պետք ունին. և այսպե-
սով եղանակներուն դարձը ամեն տարի այն ժամանակին կըլլա» (Հեր. Բ. 4):

Հնդկական դասական շրջանի ժամանակագրությունն ալ ճըշ-
տիվ համաձայն է մերինին.—յուրաքանչյուր ամիս կըլլաց ամիսին տալու,
հավելվածական օրերով 5 տարին մեկ անգամ առանձին ամիս
կհաշվեն:

Դարձյալ նույն դրությունն ունեին մեզ դրակից իրանյանները՝
սկսած Զանդկական ու Հին-պարսկական շրջանեն՝ մինչև Պահ-
լակ-Արշակունյան, Սասանյան և Նորապարսիկ շրջանները:
Իրանյան Նորապարսիկ շրջանի ամսանուններն են.

1. Ֆարվարդին	فروردین	Մարտ
2. Արդիրի Հիշտ	اردیبهشت	Ապրիլ
3. Խորդադ	خورداد	Մայիս
4. Տիր	تیر	Հունիս
5. Ամուրդադ	امرداد	Հուլիս
6. Շահրիմար	شهریور	Օգոստոս
7. Միհր	مهر	Սեպտեմբեր
8. Աբան	آبان	Հոկտեմբեր
9. Աղար, Աղար.	آخر	Նոյեմբեր
10. Դի	دى	Դեկտեմբեր
11. Բահման	بەمن	Հունվար
12. Իսֆանդարմուզ	اسفندارمز	Փետրվար

Այս դրությունը անշուշտ ժագումն առած է Եղիպատոսի մեջ,
ուսկից տարածված է Պարսկաստան և ասոր միջոցով ալ Հայա-
տան: Բայց թե ե՞րբ, ահա ինչ որ պետք է քննել:

Ինչպես արդեն ըսված է վերը, ժամանակագրական մեր այս
դրությունը հիշված է մեր մատենագրության ամենահին հիշատա-

կարաններուն մեջ, այսպես, նավասարդի վիպասանական երգը, «Ո՞ւ տայր ինձ զծովս ծխանի և զառաւօտն նաւասարդի», դարձալ. «զնաւասարդաց ժամանակօքն.—Զունս նաւասարդաց» «Բուզ. Դ. 15). «ի ժամանակի դիցն Ամանորայ ամենաբեր նորոց պաղոց տօնից հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղուց պաշտէին՝ յուրախութեան նաւասարդ աւուր» (Ազաթ. ՃՌԹ). «ի նաւասարդէ ի նաւասարդ» (Եղիշ. Բ.). «Յամսեանն Քաղոցի որ օր չորս էր». (Եղիշ. Գ.). «Յերեքտասաւանն Մեհեկանի» (Խոր. Գ. 67). «Յամսեանն Մարերի» (Եկմ. Քր. Ա.). «Որ օր 25 էր Հրոտից ամսոյն» (Եղիշ. Ը.). «Արեգ ամիս հասեալ է և ահաւասիկ դարուն է». (Կոչ. ԺԴ.). «Մինչև յերեսունն Ահեկանի ամսեան.—յամսեանն Ահեկանի» (Բ. Մկր. ԺԱ. 30, 33). և այլն, և այլն:

Այս կոչումները կտանին զմեզ մինչեւ հինգերորդ դարում սկիզբը կհասցնեն. բայց ավելի առաջանալու համար չունինք հաստատուն կովան. որչափ որ կարելի է հավատալ Խորենացիին, այս դրության հաստատովյունը կապրտինք մեր աշխարհաշեն թագավորին՝ Արտաշես Բ-ի: Ահավասիկ ինչ որ կպատմե Խորենացին. «ի մեծամեծաց արուեստից և ի գիտութեանց ունայնացեալք էին, որպես հինից և ասպատակաց պարապեալք, և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք և կամ ոչ հասեալք. զշաբաթուց ասիմ և զամսոց և զտարեաց բոլորմանց: Քանզի ոչ այսպիսի ինչ ճանաչիր առ նոսա, այլոց ազգաց վարելով. և ոչ ի ծովակս աշխարհիս նաւագնացութիւնք, և ոչ ի վերայ գետոց ճանապարհորդութիւնք և ոչ զործիք ձկանց որսոց. այլ և ոչ յամենայն տեղիս երկրագործութիւնք. բայց դոյզն ուրեք, ըստ օրինակի հիւսիսականաց կողմանց շաղղակերութեամբ և այլովք այսպիսիօք կեցեալք: Եւ այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշեսին». (Խոր. Բ. ԺԹ):

Ավարտելու համար այս փոքրիկ աշխատովթյունը պետք է քննել նաև յուրաքանչյուր ամսանունի ծագումը: Հետաքրքրական է հիշել նախ Վանական Վարդապետի տված մեկնություններն իր Տարեմուտին մեջ:

1. «Նավասարդ.—Հայոցս է ի վերայ որդոց Հայկինն, եօթն արու, նաւասարդ, Հոռի, Սահմի, Տրե, Քաղոց, Արաց և Մեհեկի.

և երեքն դուստր՝ Արեգ, Ահեկի, Մարերի. և երկու ի վերայ եղանակացդ՝ Մարգաց և Հրոտից: իսկ աղուան ամիս նաւասարդուլ, որ է նաւասարդեցի, այսինքն է ի թոռանց, ի յուատերաց կամ ի դստերաց:

2. Հոռի. զի հորեն երկրագործք և մշակք զցորեանն, և զգինի ի շտեմարանն ժողովելով:

3. Սահմի. զի գնայ հարաւային և գայ հիւսիսային հողմ. և դարձեալ իմաստունք արք սահմանեն գտունս իրեանց առ ի գալ ձմերայնոյն:

4. Տրե. զի տայ կամ կրէ գիշերն յօրէն զժամն և զմասունքն:

5. Արաց. արանց կամ արեաց ամիս ի ձմերան:

6. Մահեկի, զի տունկք և բոյսք որպէս զմեռեալ լինին եղեմնապատ և ձիւնաթաղ. մահ-եկի, այսինքն ածի:

7. Արեգ, որպէս թէ յառնեն բոյսք, կամ Արի՛ ասէ հիւսիսի, և ե՛կ հարաւ, որ է գարնան ամիսն:

8. Ահեկի, այսինքն ահանի է յառնել գետոց և ի թուլանալ ձեան ահ է ասեն մարդոց ամենայն ուրեք:

9. Մարերի, յորժամ թաւանան մայրիք տերեօք և ոստօք, և լինին որպէս մայր թռչնոց և գաղանաց:

10. Մարգացն, որ է ժամանակ ածելոյ զմարգմ՝ որ ի դաշտս և ի հովիտս իցեն, յայգեստանս և ի բուրաստանս:

11. Հրոտիցն ըստ դրութեան է, զի հուր է ոտիցն (որպէս յուլիս) որ այրէ ի ներքուստ ի վեր չերմութիւն արեգականն»:

Ամանուններուն արված գիտական մեկնություններն են.

1. Նաւասարդեւ նաև Ուղղ. նավասարդի=նոր տարի. հմմտ. Երիտասարդ և աւսարդ. Զանդ. Նավա նոր և Սարբա տարի. Սանս. Շարադ տարի. պարս. յա նոր և Յա սալ տարի. նավսալ նոր տարի, և այն, և այլն:

2. Հոռի=երկու. վրաց. Ուփ, Հեռի, մինկրելերեն՝ Ժիրի, Ժուրի, լազերեն՝ Ժուր, Զուր, սվանեթերեն՝ Ուի, Հերի, Յերվի. ինգուշերեն (Կովկասյան բարբառ Տփղիսի արևելյան կողմը խոսված) Ուր, Ուր:

3. Սահմի=երեք. վրաց. Սամի, մինկրել. Շումի, Սումի, լազ. Ժում, Շում. սվանեթ. Սեմի, ինգուշ. Սամ:

4. Տրե. հմմտ. պրս. յանց Տիր, որ նույնպես անոնց չորրորդ ամիսն է:

5. Քաղոց՝ արմատը Քաղ,-ո, մեկնովթյուն մը չէ տրված գեռ. անշուշտ արմատը կնշանակե սառ, ցուրտ, և կապ ունի ուղղակի մեր սառ, լատ. ցես և այլն ձևերուն. բայց թե ի՞նչ ձախնական օրենքներով, չգիտեմ:

6. Արաց. արմատը Ար, -ա, անժանոթ:

7. Մեհեկան, Մեհեկի (=Մեհեկակ), նույն է պարսից յոթներորդ ամիսին հետ ^{յառ} =միեր (=արեգակ). պահ. Միերազա՞ն, Միերակա՞ն. պարսիկ. Միերազա՞ն, Ստրաբոն ունի Միջքառական Արշակունյաց ժամանակի ձեզ պիտի լիներ ուրեմն *Միերակա՞ն, *Միերակա՞ն:

8. Արեգ=Հայ. Արեգ՝ Արեգակն:

9. Ահեկան, Ահեկի, Ահեկի. նույն է պարսկական իններորդ ամիսին հետ. պրս. ^{յառ} Աղար, Ազար, պահ. Ա՛տուր, պազ. Ա՛ղար, Զանդ. Ա՛թրօ, կնշանակեն հուր, կրակ. մեր բառը կենթագրե հնագույն Արշակունյան *ա՛թրակա՞ն, *ա՛հրակա՞ն:

10. Մարերի (ուղ. և սեռ.)=Մարեա՞ր, անժանոթ:

11. Մարգաց (ուղղ. և սեռ.). Հայ. Մարգ, Մարգագետին, պրս.

Մարդ, արաբ. ^{بَوْد} Մարգ, ասոր. Մարգա:

12. Հրոտից (ուղ. և սեռ.) արմատը երա, հնագույն Հրորա. հմմտ. պահ. Ֆրավարտիկա՞ն, պազ. Ֆրավարդյա՞ն, հին պրս. Ֆարվարդիյա՞ն. բոլորն ալ կնշանակեն Ավելյացի հինգ օրերը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱԿԱՑՎԱՅԻ. ՔՆԱՌԻԹՅՈՒՆ ԱՆՈՐ ԳՐՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎՐԱ

Տպագրվել է «Բազմավեպ» ամսագրում. 1897, օպոստոս (Հա. Սի), էջ 370—374:

1. «Պատմութիւն Աղվանից արարեալ Մովսիսի Կաղանկատուացույ», ի լուս ընծայեց Հանդերձ ծանոթութեամբ Կ. վ. Շահնազարհան, Փարիզ, 1860;

2. «Ես Աղոփանէ» և այլն. Մովսիսի տպագրության մեջ պատմության կարգեն վերցված և ի ստորև իշխն դրված է, իբրև Հավելված կամ Հիշատակարան դրշխն և ոչ մասն պատմության Սանօթ. «Բազմավեպին իմք.»:

3. Բանասիրության մեջ (Դ. Աղիշան, Գ. Զարբհանալլան, Ստ. Մալխասյան), ընդունված է, որ «Աղվանից աշխարհի պատմության» հեղինակ Մովսես Կաղանկատավցին ապրել է VII դարում: Կաղանկատավցին զրել է Պատմության առաջին և երկրորդ գրքերը, իսկ երրորդը, որ վերաբերում է հետագա զարերին և հասնում է մինչև 986 թվականը, գրել է Մովսես Պատմությանցին՝ Խ դարի վերջին, առև Ստ. Մալխասյանց, Մատենազիտական զիտողություններ, Երևան, 1961, էջ 216—219: Հր. Աճառյանը հետագայում ևս պաշտպանել է իր տեսակետը (հմմտ. Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Հա. Գ. Երևան, 1946, էջ 438—439): Թեև Հր. Աճառյանի տեսակետը չի ընդունվում, բայց նրա բերած փաստերն ու մեկնարանությունները անպայման արժեքավոր են և հետաքրքիր:

ՄԱՍԹԵԱՆ ՈՒԹԵԱՅԵՑ

Առաջին անգամ տպագրվել է 1953 թ. («Հանդես ամսօրյա», № 7—9, էջ 350—354): Հոգվածի տակ նշված է գրության տեղը և ժամանակը. Փարիզ, 1896, հունվար 7/19: Խմբագրության ծանոթագրության մեջ ասված է. Հոգվածը «անդրանիկ բանասիրական գրվածքն է Հ. Աճառյանի, ուղարկված խմբագրության 1896 հունվարին, բայց մենացած անտիպը Հարգելու համար իր Հիշատակար կհրատարակեմ զայս այժմ անփոփոխ: Հոգվածագրին անժանոթ մնացած են Է. Dularie-ի ուսումնասիրությունները ի մասին Մ. Ուռհայեցվու Հետաքրքրական են իր տեսությունները այնու մանավանդ, որ 1896-ին ետք լուզ չէ անսած մատենագրիս մասին որևէ նոր ուսումնասիրություն: Աճառյան կատարած է մանր

սրբագրություններ Ուռայլեցվող Տարեգիրքին մեջ («Արարատ», 1913, էջ 1142—1150) և քննություններ Տարեգիրքին մեջ երևան եկած նոր բաներու («Բազմավեցորդ», 1919, էջ 125—126, 149—151): «Արարատ» ամսագրում տպագրած «Մերանի սրբագրություններ հայ մատենագիրներու մեջ» հոդվածը տես սույն ժողովածուի մեջ:

1896 թ. հոդվարին այս հոդվածն առաքելով Վիեննա, «Հանդես Ամսօրյա»-ի խմբագրությանը, Հր. Աճառյանը գրում էր. «Կը դրեմ Զեզ նոր շարք մը հոդվածներու՝ հայ մատենագրաց անձնն և ժամանակին վրա» («Հանդես Ամսօրյա», 1953, էջ 451): Հանդեսի խմբագրությունը ժամանակին չի տպագրել հիշյալ շարքի առաջին հոդվածը («Մատթեոս Ուռայլեցին»), ուստի Հր. Աճառյանը հաշորդ հոդվածները չի ուղարկել: Այս շարքին է պատկանում նաև «Մովսես Կաղանկատացին» հոդվածը, որ հեղինակը գրել է գեռևս 1892 թ., Պոլսի Կեղործական վարժարանում ուսանելու ժամանակ և 1897 թ. տպագրվել է «Էմազմավեա» ամսագրում:

1. Այս կապակցությամբ տե՛ս Մատթեոս Ուռայլեցի, Ժամանակագրություն, Թարգմանությունը, Ներածությունը և ծանոթագրությունները՝ Հրալ Բարթիկյանի, Երևան, 1973, էջ XI—XII:

2. «Պատմութիւն Մատթեոսի Ուռայլեցուոց», Երուսաղեմ, 1869:

3. Հր. Բարթիկյանը հիշյալ Հատվածները Համապատասխարար թարգմանել է հետեւալ կերպ. ա) «Վերոհիշյալ շարադրանը մենք կատարեցինք հայոց հայրապետներ տեր Գրիգորի և տեր Բարսեղի օրոք...» (նույն տեղում, էջ 183). բ) «...որ նորից ենք սկսել շարադրել այս պատմությունը, Համաձայն երանելի Գրիգոր վարդապետ Նյուսացու ասածի» (էջ 186):

4. Տե՛ս Մատթեոս Ուռայլեցի, Ժամանակագրություն, Հր. Բարթիկյանի ծանոթագրությունը, էջ 336—337, ծանոթ. 2, 6:

5. Հր. Բարթիկյանը քննականարար թարգմանել է նաև այս նախադասությունը, ծանոթագրության մեջ հիշելով Հր. Աճառյանի առաջարկած ուղղումը (նույն տեղում, էջ 323, ծանոթ. 3):

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ «ՄՐԳՈՒՅ ՓԱՆԱՔԻ» ԼՈՒՇՈՒՄԸ

Տպագրված է «Հանդես Ամսօրյա», 1923, Խ 5—6, էջ 241—256:

ՏԻՄՈԹԵԱՆ ԿՈՒԶ ԵՎ Ա. ԳՐԻԳ ՆՈՐԱԲԵՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արտատպվում է «Շողակաթ» հայագիտական ժողովածուից, գիրք առաջին, Վաղարշապատ, 1913, էջ 1—22:

1. «Ճիմոթէոսի եպիկոպոսապետի Աղեքսանդրիայ Հականառութիւն առ սահմաննեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի, ի լոյս ընծայեալ աշխատութեամբ Կարապետ Ժարդապետի և Երուանդ վարդապետի», էջմիածին, 1908:

2. «Հականառության» թարգմանության ժամանակը բանասիրության մեջ ընդունված է համարել VI դարի կեսերը, «շուրջ 552—556» թթ.: Տե՛ս Պ. Անանյան, Պատմական հիշատակարան մը Դվինի թ. ժողովի մասին. «Բազմավեա» 1958,

թ. 6—7, էջ 117—131, և Տեր-Մինասյան, Տիմոթեոս Կուզի «Հականառութիւն առ սահմաննեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» երկի թարգմանության ժամանակը. «Բանչքիր Մատենագրաբաննի», գիրք 5, Երևան, 1960, էջ 279—291. նույնը՝ Ս. Գ. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 394—410:

ԶԵՐԱԳՐԱԿԱՆ ՄՐՑԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

Արտատպվում է Հր. Աճառյանի «Զերագրական սրբագրություններ հայ մատենագիրների մեջ» ապակետիպ գրքից (Երևան, 1926), որ բազմացված է ընդունենք 50 օրինակ: №№ 2, 3, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20 տպագրվել են «Արարատ» ամսագրում, 1911 թվականին (№ 3, էջ 225—229), իսկ №№ 32, 33, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 66, 67, 68, 69, 70, 71—1913 թ. (№ 12, էջ 1142—1150): Ամսագրում եղած սրբագրությունների մի մասը տարրեր պատճառներով հետազոտում հեղինակը չի մտցրել գրքի մեջ:

1. Հմատման սույն ժողովածուի «Քննություն» և համեմատություն Եղինականորակությանը հոդվածը և ծանոթ. 23:

2. Հր. Աճառյան, Հայերեն նոր բաներ հին մատենագրության մեջ, և, Վենետիկ, 1913:

3. Կիրակոս Գանձակեցու երեխի քննական հրատարակության մեջ սույն հատվածն այսպէս է. «...և թագաւորէ դարձեալ Խոսրով, եղայր նորա, ամ մի. և ապա Արտաշէս, որ և Արտաշիր, թագաւորէ յետ նորա» (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 30):

4. Ոնցափ. պահանջմել է Կոստանդին Երզնկացու տաղերի վերջին հրատարակության մեջ (տե՛ս Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Աշխատասիրությամբ Արմենուշի Սրապյանի, Երևան, 1962, էջ 164):

5. Հր. Աճառյանի ուղղումն ընդունելի է անշուշտու Կոստանդինի տաղերի վերջին հրատարակության մեջ (էջ 155) տօսու օհան ընթերցվածք իշեցված է տողատակ, իսկ բառարանում (էջ 290) գրված է Տօսունքն (իբրև մեկ բառ) ու բացատրված՝ սիրածի կենացը: Այս բառը գործածված է նաև հայրեններում: Բնիքները մի օրինակ:

...Պիտէր ինձ ժողովեր գիրի ու նաւերդ ինձ տօստոքանի.

Իմ եարն ալ իմ բոփս ըլնար, խըմեաբ տարեկ մի բանի:

(«Հայրեններու բուրաստանը», Համախմբեց և ի լույս ընծայեալ քննական ուսումնասիրությամբ մը և ծանոթագրություններով Արշակ Չոպանյան, Փարիզ, 1940, առաջին մաս, բանեիններորդ տողաշարք, ի՞ն, էջ 306):

Տօսունքն բառը Ա. Չոպանյանը «Հայրեններու բուրաստանը» ժողովածուի բառարանում բացատրում է հետեւալ կերպ. «Եթուն գավաթը զոր զինարութիւն մը էն վերջը կը խմեն իրարու կենացը» (էջ 540—Տօսունքնի):

Ահա և այդ բառի Մ. Աբեղյանի բացատրությունը.

«Տոստողանի», տօստօնանի —ընդհանուր մեծ դավաթը, սովորաբար մեծ եղջբար, որից ձեռք ձեռք անց կացնելով, իրար կենաց խմում են ուրախացող-ները» («Գուսանական ժողովրդական տաղեր, Հայրեններ և անտունիներ», Հա-վարեց և խմբագրեց փիտության վաստակավոր կործիչ պրոֆ. դոկտ. Մանուկ Ա-րենցան, Երևան, 1940, էջ 336):

6. «Նահապետ Թուշակի Դիվանը» ժողովածուի «Ստ. Մալխասյանի օրինակի լուսանցքում ևս կա այս ուղղումը (դիրքն այժմ Երևանի պետական համալսարանի հայ գրականության ամբողջ դասախոս և, Վարդանյանի սեփականությունն է): «Հայրեններու բուրաստանի» առաջին մասի առաջին տաղաշարքի եջ տաղիկն է սա, որ Ա. Չոպանյանը տապագրել է Համապատասխան սրբագրումով (էջ 143—շար շապիկանց): Մ. Արենցանը ևս ուղղել է շար շապիկանց, հաշվի առնելով հանգը («Գուսանական ժողովրդական տաղեր», էջ 130, № 207):

7. «Հայրեններու բուրաստանը» ժողովածուի առաջին մասի առաջին տաղա-շարքի էլ հայրենը (էջ 141), Ա. Չոպանյանը, անկախ Հր. Աճառյանից, ձեռագրի հաղան կուտ հասկածելի բնիթերցվածք սրբագրել է նոշանը կուռ, բացատրելով իրեն «կոմի դրահ» (տե՛ս էջ 152): Այս միաւր նկատել է նաև Ստ. Մալխաս-յանը, «Նահապետ Թուշակի Դիվանը» ժողովածուի իր օրինակի լուսանցքում դնելով հարցական նշան:

Մ. Արենցանը, նկատի առնելով մի այլ տաղիկի՝

Երթամի ի փշի շահրէն,

Ու զրեհ հագնիմ կովելու...

առղերը, այս Հայրենի մեջ նշված բաները սրբագրել է՝ նօշան կոռաւլու (տե՛ս «Գուսանական ժողովրդական տաղեր, Հայրեններ և անտունիներ», էջ 90—91, № 119 և տարբերակը):

8. Միւալը նկատել է նաև Ստ. Մալխասյանը:

Մ. Արենցանը, ինչպես ինքն է ասում, օգտվել է Վենետիկի Միհիթարյանների Մատենադարանի № 1371 (1642 թ.) ձեռագրի՝ «ուրիշի Հատկապես կատարած արտագրությունից» (էջ 108—109), որտեղ նշված աղավաղումը չկա:

9. Ա. Չոպանյանը տաղիկս կերպարատարակել է գրեթե նույնությամբ («Հայ-րեններու բուրաստանը», առաջին մաս, տասնեւեցերորդ տաղաշարք, Է, էջ 246): Հետեւալ տողում միայն կան որոշ փոփոխություններ.

Սէրն ալ զի՞ւ ոտուի ոմի ու ձեռուի զէտ էտ հարամի...

Ուղղած առաջին բառը (գէմ) Համապատասխանում է Հր. Աճառյանի առա-շարկածին:

Հր. Աճառյանի նշած այս աղավաղումը ևս նկատել է Ստ. Մալխասյանը և Հարցականով գրել է՝ անքու, որը, ինչպես և Հր. Աճառյանի առաջարկությունը, Համապատասխանում է իմաստին թերեւս անդուն ավելի հարմար է, քանի որ սրբագրում (փոխում) է միայն մեկ տառ:

Մ. Արենցանը կատարել է մի շարք սրբագրություններ. բերում ենք տաղիկներ («114») ամբողջությամբ.

Կանչեմ, ալանի կանչեմ,

Ուր որ իմ ձայնըն հասանի.

Թող աւազանի ծնունդ՝
Մարդ սիրուն պէլան լընկնի.
Աէրն ալ կամ ոտպի ունի,
Ու ձեռվի զէտ բգնաբամի:
Եկէ՛ք, հարամին տեսէք,
Հարամին, որ նետ մի շունի.
Անզուլ ւ անըսպառ հկիալ,
Անզուլ հոգիս կու տանի.
Եկէ՛լ ւ ի զուլս ելեր,
Երեսօք ի բարշ կու տանի:
(«Գուսանական ժողովրդական տաղեր», էջ 88):

ԵՐԵՍՈՒ ԱԽԾԱՋԱՄ ԿՈՐՅՈՒԽԻ ՄԵՋ

Արտասպնում է ՍՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի (Արմֆան) «Տեղեկա-դրից» (1941, № 1, էջ 169—170):

1. Մ. Արենցանը Կորյունի բնինական հրատարակության մեջ սրբագրել է տէ-րունական բառը. տէ՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, Բնագիրը ձեռագրական այլըն-թերցածներով, թարգմանությամբ, առաջարանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Արենցանի, Երևան, 1941, էջ 90 և 121 (ժանոթ. 157): Ամ-սագրի նույն տարգամ № 3—4-ում (էջ 142) տպագրված է Հր. Աճառյանի հե-տեւալ նամակը «Արմֆանի «Տեղեկագրում» (1941 թ., № 1/6, էջ 169) իմ հող-վածը հրատարակելուց հետո նկատեցի, որ Գ. Ֆնտովյանը Կորյունի բնինական հրա-տարակության մեջ (Երևանիմ, 1930, էջ 66) խոսել է ծերունական բառի մա-սին: Ուղղումը կատարել է նախ նորայր՝ իր «Կորին վարդապետ» աշխատու-թյան մեջ: Ցնորդյանը չի ընդունում այս սրբագրությունը և պաշտպանում է դար-ձալ տէրունական ձկը: Իր փաստարկումը՝ կապված «Քրիստոսի տարիին» հետ, ամենայն համոզի չէ»: Տե՛ս նաև «Կորինի վարդապետ» և նորին թարգմանութիւնը. Հանդերձ դիտողութեամբը, տեղեկութեամբը և լուսարանութեամբը գրեաց նորայր Ն. Բյուզանդացին, Տփղիս, 1900:

2. Մ. Արենցանը առաջարկվող ուղղումներից ու մեկը չի կատարել Կորյունի բնագրում (Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 44): Այդ առաջարկություններին նա հա-մառաւակի անգրադառնում. և ծանոթագրությունների մեջ (էջ 108—109, ժանոթ. 59): Տե՛ս նաև Կորյունի երկի ուսուերեն թարգմանությունը. Կօրյոն, Ժիտին Մաշ-տօւ, перевод Ш. В. Смбатяна и К. А. Мелик-Оганджаняна, Комментарий Ш. В. Смбатяна, Ереван, 1962, էջ 89 և էջ 136 (ժանոթ. 69, 71):

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԵԶՆԿԱՆ ՆՈՐԱԳՅՅՈՒՏ ԶԵԽԱԳՐԻՆ

Տպագրվել է «Հանդես ամսօրյա»-ում, այնուհետև՝ առանձին գրքով. Գ. Տեր-Միրուշյան, Հ. Աճառյան, թննություն և համեմատություն Եզնկան նորացուած ձե-սագրին, Վիեննա, 1904:

«Հանդես ամսօրյա»-ի 1902 թ. հունիսյան համարում (էջ 191) Կետիկ ստորագրությամբ տպագրված «Հազրողման մեջ ասված է. ՊՊ. Հ. Աճառյանի առ Հ. Տաշյան ուղղած բաց նամակին մեջ կընթեռնանք. «Ուրախությունն ունիմ ավետելու Զեղ և Հ. Գալեմբերյանին թի Եղնիկի միակ ձեռագիրը, որ «այրած էր Զմյուռնին Հրդեհին մեջ», գտնվեցավ Ս. Էջմիածնա ձեռագրատան մեջ Եղ. (Հինգշաբթի) Ապրիլ 25: Երեկ սկսանք Համեմատել տպագրյալին հնո՞ւ նվասս և Գալուստ Մարկարյանը: Մեր քննությանց և համեմատությանց արդյունքը շատ շուտով լույս կը տեսնե տպագրությամբ»: Կրնա երեակարյալի, թի բանասիրներն ինչպիսի հետաքրքրությամբ առողջ վաղբնիփուլթ հրատապակման կը սպասեն, որոնք շատ մը ինքրական խնդիրներու լուծումը պիտի տան»: Զմյուռնիալի հիշյալ Հրդեհ տեղի է ունեցել 1845 թվականին:

1. Հր. Աճառյանն իր հուշերի գրքում («Կյանքին հուշերից», Երևան, 1967, էջ 238) այս ժողովածում անվանում է «Լիակատար տաղարան», որի օրնդարձակ երկու հատորները, օրինակությամբ իր և իր կնոց՝ Տիկին Արուսյակի, (Աճառյանը) նվիրեց 1926-ին Վիհննական Մխիթարյան մատենադարանին» («Հանդես ամսօրյա», 1953, էջ 452): Այս ձեռագրերի մասին տե՛ս Հ. Անկան, Յուցակ ձեռագրաց Մխիթարյան մատենադարանին ի Վիհննա, Հու. Բ, Վիհննա, 1963, էջ 657—685. (№№ 1041 և 1042 ձեռագրերը):

2. Զեռագիրն այժմ պահպամ է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում (№ 1097, ժողովածու, 1280 թ.):

3. Հր. Աճառյանը ձեռքի տակ ունեցել է Վենետիկի 1826 թ. հրատարակությունը. «Եղնկայ Կողբացոյ Բագրեանդայ Եպիսկոպոսի Եղծ աղանդոց», Վենետիկ, ԲՈՒՀԸ: Սույն հրատարակությունն է, որ ստորև անվանում ենք վենետիկյան:

4. Լ. Մարինսկի. Մերսիկի աշխատակցությամբ Փարիզում իրագործեց Եղնիկի բնադրի գիտական հրատարակությունը և ֆրանսերն թարգմանությունը, ուր վերանայված է այս հարցը, և փոփոխությունը կատարված է ըստ ձեռագրի: Գիրքը լույս է տեսել «Patrologia Orientalis» մատենաշարով (tome XXVIII, fascicule 3, 4), հետևյալ վերնագրով. Eznik de Koſb. De Deo, traduction française, notes et tables par Louis Mariès et Ch. Mercier Paris, 1959: Սույն հրատարակությունն այսուհետև կանվանենք փարիզյան:

5. Լ. Մարինսկի հրատարակության մեջ պապատամբը ցույց է տրված տողատակում (t. XXVIII, fasc. 3, էջ 28, ծանոթ. 9 ևն), ինչ Բունենոս-Այրեսի հրատարակության մեջ սրբագրված է ըստ ձեռագրի («Եղնկայ Եղծ աղանդոց ի շատագութիւն և ստուծոյ ճշմարտի, Պուենոս Այրես, 1951, էջ 25 ևն»). Այս բառի մասին տե՛ս նաև Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառաշան, Ա. Հու. Երևան, 1971, էջ 242:

6. Եղջ. Լ. Մարինսկի (էջ 44), և Բունենոս-Այրեսի հրատարակության մեջ (էջ 45) ասունեալ բառը փոխարինված է ստորեալյով:

7. Եղնիկի վենետիկյան հրատարակության՝ Հր. Աճառյանի մատնանշած տեղում (էջ 95, 18-րդ տող) ցուցանկը է Ալյափս է և Լ. Մարինսկի կազմած բնագրում:

8. Փարիզյան հրատարակության մեջ (էջ 45) ուղղված է անաւամարմին: 230

Բունենոս-Այրեսի հրատարակությունը համապատասխան տեղը տողատակում ունի «Ալյափս՝ անօրամարմին» նշանը (էջ 46):

9. Փարիզյան (էջ 55) և Բունենոս-Այրեսի (էջ 59) հրատարակությունների մեջ սրբագրված է պատշաճ: Հր. Աճառյանի մատնանշած բառարանում («Ստորաբանական բառարան Հայ լեզուի, աշխատասիրութիւն տն. Յովհաննու բահանալի Հինքեարպէյնտեան», Կոստանդնուպոլիս, 1894) պատշաճ բառը ստորաբանված չէ:

10. Այսուղե ևս վենետիկյան տպագիրը ճիշտ բնթերցված ունի՝ զար (էջ 127):

11. Վենետիկյան հրատարակության՝ Հր. Աճառյանի նշան 195 էջի երեք տեղում ևս ոչ թի փառաւորութիւն, այլ փառաւորություն է: Ալյափս է նաև Հաջործ էցում (2 տեղ): Ինչ 208 և 296 էջերում հանդիպող փառուշշյալի հնաց ցույց է տալիս, որ այս բառը լի կարելի շփոթել, որովհետեւ ւ-ը (փառաւորութիւն) ավելի երկար է, քան ա-ի համապատասխան (Հորիզոնական) մասնիկը: Հնարավոր է, որ Հ. Աճառյանին շփոթեցրած լինի Գ. Մենկիշյանի դիտողությունը, որի մասին հիշում (տե՛ս Գ. Մենկիշյան, Արդի լեզվագիտությունը, Հու. Ա, Վիհննա, 1903, էջ 125—126, տողատակի ծանոթագրությունը):

12. Վենետիկյան հրատարակությունը (էջ 197) ունի հնաց ի վերոյ քան զերակի, ինչպես առաջարկում է Հր. Աճառյանը:

13. Վենետիկյան տպագիրը ունի սուլական (էջ 201):

14. Լ. Մարինսկի բնագրի մեջ յիւր-ը ուղղել է իսր, ինչ ձեռագրի լրեմբան ընթերցվածը դրել է տողատակում (էջ 100, ծանոթ. 6): Բունենոս-Այրեսի հրատարակության մեջ սրբագրված է՝ իր յինելան (էջ 122):

15. Լ. Մարինսկի ուղղումը կատարել է (էջ 106): Բունենոս-Այրեսի հրատարակության բնագրիր կապմողը (Գ. Ե. Տ.), նկատի ունենալով Ելից գրքի (ի նու թ. թ. 3) «Մի՛ հղիցին քեզ այլ աստուածը բաց լինենա արտահայտությունը, Հր. Աճառյանի առաջարկած ուղղումը շի կատարել (տե՛ս էջ 123):

16. Նորար Բունենուացին «Քննասերում» հրապարակած «Եղնիկա Կողբացը» երկու հատվածը սրբագրյալը՝ նողածում այլ դիտողություններ է անում (տե՛ս «Քննասեր», ինքնագրությունը Նորարիի, պր. Ա., 15 մայիս, 1887, Ստորհում, էջ 8—11): Նա պատրաստել էր նաև մի ուսումնասիրություն՝ «Եղնիկ Կողբացի և յուր գրքածըն Ընդդէմ աղանդոց», ուր ցույց էր տալիս, թի «իմանակությունը կան ի գիրս Եղնիկա ի հետևացութենի թիրթից գրչաղորաց» («Քննասեր», պր. Բ., 3 գեկտեմբեր, 1887, Ստորհում, էջ 3), բայց հաջորդ տարին, երրորդ պարին, լույս տեսնելոց հետո, «Քննասերը» շի շարունակում:

«Հոս պարտը կհամարիմ վերստին կրկնել...»—նշելի է, որ Հր. Աճառյանը առ ուսումնասիրության մեջ սուրբ անդամ լի հիշում «Քննասերը»:

17. «Նուաճեր» բառը վենետիկյան նշված էջի 21-րդ տողում է և ու 18-Փարիզյան հրատարակության մեջ պահպանված է նույնությամբ, Բունենոս-Այրեսի տպագրին (էջ 8) ունի սրբագրված ձևով (նուաճել):

18. Այսուղե նույնպես Լ. Մարինսկի պահել է այս ընթերցումը (էջ 13): Բունենոս-Այրեսին ունի յայսց կառաց (էջ 8):

19. Լ. Մարիեսը գրել է ի յատրածոց (էջ 19): Այն պահպանված է նաև Բուհնոս-Ալբեսի հրատարակության մեջ (էջ 15):

20. Հիւղային բառից առաջ է. Մարիեսը անկուռափոր փակագով ավելացրել է ի ասխողիր (էջ 19): Նույշը՝ Բուհնոս-Ալբես, էջ 15:

21. Փարիզի հրատարակությունն ունի կազմածոյ (էջ 22), Բուհնոս-Ալբեսինը՝ ի կազմածոյ (էջ 19):

22. Լ. Մարիեսը պահպանի է զոր, (էջ 23) պատճառաբանելով, թե ուղղումն անհմաստ է: Բուհնոս-Ալբեսի հրատարակության մեջ ուղղումը կատարված է (էջ 20):

23. Լ. Մարիեսը պահպանի է մարտչիցի, տողատակում դնելով մարտ չիցի, ծանթագրությունների բաժնում (Ժանթ. 148) դիտելով, որ Հր. Աճառյանը և Գալիերյարյանը առաջարկում են ուղղել մարտչիցի, մինչդեռ լավագույն է մարտնչիցի: Տե՛ս նաև «Զեռագրական սրբագրություններ» հայ մատենագիրների մեջ հոգիածը:

24. Փարիզի հրատարակությունն ունի՝ զմիսն, զմանքառն (զմանքագրյան ցուց է տրված տողատակում), զիազար (էջ 33), զպաշտանեայսն (էջ 42), Բուհնոս-Ալբեսինը նույնպես (էջ 32 և 42): Նկատելի է, որ Հր. Աճառյանն ինքն էլ վրճականորեն չի առաջարկում սրբագրել:

25. Լ. Մարիեսն ուղղել է լինին (էջ 40), նկատի ունենալով մի բանի տող ներթեւում հրազնակիով նույն բառի առկայությունը. լինին այսպիսի տանջանք (Ժանթ. 280): Ուղղումը կատարված է նաև Բուհնոս-Ալբեսի հրատարակության մեջ (էջ 40):

26. Խնապես Փարիզի (էջ 55), այնպես էլ Բուհնոս Ալբեսի (էջ 60) հրատարակության մեջ պահպանված է ի մարդկանք հնարազորեն:

27. «Հաջորդ ե-ին առաջին տառեն»—Հր. Աճառյանը նկատի ունի ե-ը (ե-ի երկտառ զրության (եւ) գեպգում): Բուհնոս-Ալբեսի հրատարակության մեջ (էջ 61) ուղղումը կատարված է, փարիզյանի մեջ՝ ոչ (էջ 55):

28. Լ. Մարիեսը ուղղել է բացաւորորին ես ես նմա ինձ հազար ամի (էջ 56): Ուղղված է նաև Բուհնոս-Ալբեսի հրատարակության մեջ (էջ 61):

29. Վենետիկյան հրատարակության ընթերցվածը պահպանել են և Փարիզի (էջ 60), և Բուհնոս-Ալբեսի (էջ 65) հրատարակությունները:

30. Ուղղումն ունի փարիզյան հրատարակությունը (էջ 61), Բուհնոս-Ալբեսինը՝ ոչ (էջ 66):

31. Այն ունեն Փարիզի (էջ 66) և Բուհնոս-Ալբեսի (էջ 73) հրատարակությունները:

32. Փարիզյան հրատարակությունն ունի յաւելաւ (էջ 69), Բուհնոս-Ալբեսինը՝ յաւել (էջ 76):

33. Այսուղ ևս փարիզյան հրատարակությունը պահպանել է վենետիկյան ընթերցվածը (էջ 71): Բնդ ինքնամբ ունի նաև Բուհնոս-Ալբեսինը (էջ 78):

34. Խնապես Փարիզի (էջ 76), այնպես էլ Բուհնոս-Ալբեսի (էջ 84) հրատարակությունները ունեն գործանեալ:

35. Հր. Աճառյանի ուղղումը, հավանաբար տպագրական վրիպումով, կիսատ

է մնացել. պետք է լինի՝ ի մեղկութենէ: Այս ուղղումը ընկն Փարիզի (էջ 78) և Բուհնոս-Ալբեսի (էջ 86) հրատարակությունները:

36. Փարիզյան հրատարակության մեջ ուղղած է նե միտն ի նակառակորդն (էջ 79), Բուհնոս-Ալբեսի տպագրում՝ նմ մին ի նակառակորդն (էջ 87): Նույն տեղում սույնը Գ. Խաչատրյանը թարգմանել է հետեւյալ կերպ. Սեկ ալ նակառակորդն...

37. Լ. Մարիեսը (էջ 89) պահպանել է թեղ նոցա: Նույնն է նաև Բուհնոս-Ալբեսի հրատարակության մեջ, որտեղ աշխարհաբար թարգմանությունը համապատասխանում է Հր. Աճառյանի թարգմանությանը (էջ 100):

38. Վենետիկյան հրատարակության 217 էջի 18-րդ տողում տպագրված է չեն մարք: Այսպես է և փարիզյան հրատարակության մեջ (էջ 96): Բուհնոս-Ալբեսին ունի չեմարը (էջ 103):

39. Փարիզի հրատարակությունը ուղղում չի կատարել (էջ 98): Չի ուղղված նաև Բուհնոս-Ալբեսի հրատարակության մեջ (էջ 110):

40. Փարիզյան հրատարակության մեջ (էջ 102) զենքակապատն իշեցված է տողատակ և կատարված է առաջարկվող սրբագրությունը (տե՛ս էջ 130, վրիպակների ցանկը): Զենքակապատն սրբագրությունն արգած է նաև Բուհնոս-Ալբեսի հրատարակության մեջ (էջ 114):

41. Փարիզի հրատարակության մեջ փոխված է թիջկը. «Եւ եթե թիջկի ըստ պիտի կիսանդրութեանց՝ ազգի զեղս պատացեցն մատուցանել...» (էջ 103): Բուհնոս-Ալբեսի հրատարակությունը նույն է վենետիկյանի հնտ (տե՛ս էջ 116):

42. Յոր ժամանակի ունեն փարիզյանը (էջ 103) և Բուհնոս-Ալբեսի հրատարակությունը (էջ 116):

43. Ուղղումը կատարել է Լ. Մարիեսը (էջ 105): Բուհնոս-Ալբեսի տպագրի մեջ պահպանված է խորենակ (էջ 123): Հր. Աճառյանի հնթադրությունը հավանական է:

44. Լ. Մարիեսը ընազրում դրել է եղայ, իսկ տողատակում՝ եղա (էջ 115): Բուհնոս-Ալբեսի հրատարակությունը ևս ունի եղայ (էջ 131):

45. Լ. Մարիեսը (էջ 116) և Բուհնոս-Ալբեսի հրատարակիը (էջ 133) պահեր են ձեռագրի բնիթեցումը:

46. Լ. Մարիեսը (էջ 117) և Բուհնոս-Ալբեսի հրատարակիը (էջ 134) ուղղում չեն կատարել:

47. Լ. Մարիեսը 1924 թ. հրատարակած «Le De Deo d'Eznik de Koib connu sous le nom de «Contre les sectes». Etud de critique littéraire et textuelle» աշխատության մեջ այս հատվածի վերաբերյալ Հր. Աճառյանի դիտազրությունը մերժելի է համարում: Մ. Մինասյանի կարծիքով առաջել ընդունելին Հր. Աճառյանի հիմնավորումն է (տե՛ս և Մ. Minassian, 'A propos d'un passage d'Eznik. «Le Muséon. Revue d'études orientales», t. LXXXVI, 3—4, Louvain, 1973, էջ 341—343):

48. Լ. Մարիեսը «Le De Deo d'Eznik le Koib, connu sous le nom de «Contre les sectes». Հատազոտության մեջ ընդունում է Հր. Աճառյանի առաջարկությունների մեջ մասը (Հր. Աճառյանի հաշվումը 33), բայց սիալ է համարում այս դիտազրությունը: Լ. Մարիեսը աշխատության դրախոսության մեջ Հր.

Ամառյանը հայտնում էր, թե այս հատվածը ցույց է տվել «անձամբ Արեգայանին, Մանանդյանին, Հ. Ակինյանին, Շահազիդին, Խաչատրյանին և Ավդալբեյյանին. որոնք... հասկցան աշնակն, ինչպես և եմ հասկցած: Հետևաբար հիմա ալ կը-ապնդեմ՝ որ Եղիշիկը գրած է ամբողջ գիրք մը Պղատոնի դեմ, որմեն կմնան միայն վերջին վեց տողերը» («Բաղմակեաց», 1926, թ. 6, էջ 171): Անշուշտ, զիրք բարը այստեղ պետք է հասկանալ մաս, զուխ իմաստով:

ՀԱՅԱԿԱՆՔ

Հր. Ամառյանը, սկսած 1897 թվականից, մանր հոդվածները, բառաքնական-ստուգարանական ուսումնասիրությունները տպագրել է պարբերական մամուլում այս խորագրի ներքո, սկզբից մինչև վերջ ընդհանուր համարակալումով: Այստեղ արտատպօւմ են միայն բանափական բնույթի հոդվածները: Հոդվածների համարակալումը հայոց այրությին տառերով՝ մերն է, իսկ փակագծերում նշվում են դրանց հերթական համարները հոդվածաշարում:

Ա (14). «ՄԵՐ ԱՌԱՋԻ ՊԱՏՄԱԳՐԵՐԻ ԹՎԱԿԱՆԸ»—Տպագրված է «Տեղեկագիր Հայկ. ՍՍՀ Գլու (Հասարակական գիտություններ), 1945 թ. № 3—4, էջ 47—50:

1. Ստ. Մալխասյանի համորդումը տե՛ս «Տեղեկագիր», 1944, № 6—7 («Ժամանակագրական ինդիքտներ հայոց հին դրականության մեջ»): Հր. Ամառյանի սույն հոդվածում արտահայտած տարակուսանենքներին Ստ. Մալխասյանը պատասխաննել է «Տեղեկագրի» 1946 թ. № 11—12-ում («Իմ պատասխանները»):

2. Հմմտ. «Տեղեկագիր», 1944, № 6—7, էջ 22, 1946, № 11—12, էջ 3:

3. Այս հարցի առթիվ Ստ. Մալխասյանը դրում է. «Եթե այդ տեսակիտով մոտենանք հարցին՝ պետք կլիներ ենթադրել, թե Խորենացին գրել է Կարդանանց պատերազմից առաջ, 440-ական թվականներին, երբ նա, ըստ Հ. Ամառյանի, մոտ 20 տարեկան պետք է լիներ, կամ, ըստ իս՝ 35 տարեկանի շափ. այնինչ նա իրեն կուռում է «այր ծեր և հիւանդուս» Ուրեմն այդ տեսակնետով շի կարելի լուծել հարցը, այլ Խորենացու լուությանը պետք է յուրիշ պատճառ գտնել» («Տեղեկագիր», 1946, № 11—12, էջ 4): Այնուհետեւ նա այս կապակցությամբ անում է մի շաբթ ենթադրություններ:

4. Ստ. Մալխասյանը հետևյալ բացատրությունն է տալիս Հր. Ամառյանի երկրորդ հարցի կապակցությամբ. «Փակամուսը գրում է անմիջապես Ազգային դոսի կանգ առած տեղից՝ ինքը մի ծափած հեղինակ է, որի անունն էլ չգիտենք: Նա աշխատել է իրան ձեւացնել իրեւ այն Փակամուս ծերունի եպիսկոպոսը, որ սարկավագ էր ձեռնադրել Ներսոն կաթողիկոսին Արշակ Բ-ի թագավորության սկզբնական տարիներում (339—342 տարիներին): Փարզ բան է, ուրեմն, որ նա շեր կարող գրել Կարդանանց պատերազմի և այլ անցքերի մասին, իբրև այդ ժամանակներն ապրող հեղինակ: Իսկ ինչ որ պրոֆ. Ամառյանն ասում է յուր երրորդ հարցում Ազգային դոսի վկայարանության մասին—«Մրանք կեղծիքները իրենց վենելով՝ իրենց ժամանակներն ել պիտի կեղծենք—բառացի հարցարում է նաև Փակամուսին» («Տեղեկագիր», 11—22, էջ 4—5):

5. Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

6. Ստ. Մալխասյանը իրավացիորեն նշում է, որ միայն լեզվի հիման վրա,

«առանց նկատի ունենալու որից շատ հանգամանքներ», զրության մամանակը որոշելը շիամիուս հիմք է և հասցնում է շատ միալ հետևանքների», իսկ «ոսկեգորյան վեզվով» գրել են նաև հետազո՞ւյթին բանիններորդ և քահաներորդ դարերում: «Ազգային գեղագույքը, Փակամուսը ոսկեգորյան լեզու ունենալով հանդիք, կարող էին գրված լինել նաև շատ հետո, իսկ ընդհակառակը, եղիշեն, ոսկեգորյան լեզու լունենալով, կարող էր գրել 461-ին»,—եղբակացնում է Ստ. Մալխասյանը (էջ 5):

7. «ԵՄիան հոնաբար լեզվից դատելով՝ նոյն իսկ Խորենացին կարող էր գրած լինել գաթառնական, նույնիսկ հիմնական թվականներին, եթե հունաբան գպրոցը սկիզբ առավ Հայաստանում»:— գրում է Ստ. Մալխասյանը (էջ 6):

8. Տե՛ս ծանոթ. 6 և 7:

9. Ստ. Մալխասյանը դիտում է, թե Խորենացին Ազգային գեղագույքը պատմության հեղինակին կեղծարար շի համարում, ավելին, կոչում է «աջող քարտուղար» Տրդատայ Ազգային գեղագույքուն: «Խորենացու պատմությունից տեսնում ենք,— գրում է Մալխասյանը, —որ նա հավատում է Ազգային գեղագույքին, մի քանի անգամ նրան վկա է կանչում և հանձնարարում է նրան կարդալ պատմական անցքերի շարունակության մեջ»: Խորենացին ժամանակակից շեր Տրդատի քարտուղար Ազգային գեղագույքին, ուստի շեր կարող բռնել նրա սուտը, շարունակում է այնուհետև Ստ. Մալխասյանը, «Թեպես իրոք ժամանակակից և մոտ ծանոթ էր Ազգային գեղագույքի Պատմության անհայտ հեղինակին, որ իմ կարծիքով Գյուտ կաթողիկոսն էր, բայց սա թաքցրել է յուր անունը և իր կեղծիքը վերսպառել է մտացածին Ազգային գեղագույքին» (էջ 6): Նկատենք, որ Ստ. Մալխասյանը 6-րդ հարցի մասին խոսում է իրոք հինգերորդի («Հշինգերորդ հարցում պրոֆ. Աճառյանը գրում է...»), և բերում է 6-րդը):

10. Նկատենք, որ յոթերորդ հարցը նման է վեցերորդին, Ստ. Մալխասյանը նոյն պատասխանն է տալիս և այս հարցին, եղբակացնելով. «Խորենացին և Փակամուսը ոչ թե խարեւաներ են, այլ խարված հեղինակներ» (էջ 7): Տե՛ս նաև նախորդ ծանոթագրությունը:

11. «Առասպեկտ» բառը չակերտներով գրելին, իսկապես, կարծել է տալիս, թե այն վերցված է Ստ. Մալխասյանի խոսքից. մինչդեռ արդար չէ, և վերջին այդ առթիվ առարկում է Հր. Ամառյանին (էջ 3):

12. Ստ. Մալխասյանը գիտում է, որ այս հարցը նման է նախորդ եղիսականին և տալիս է հետևյալ պատասխանը. «Փարպեցին Ազգային գեղագույքունին կոչում է երանելի, ուրեմն վախճանած, իրան ոչ ժամանակակից, այլ քարտուղար» Տըրդատ թագավորի: Իսկ Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը արդեն 30 տարի հաստատված էր հայոց եկեղեցում՝ երբ Փարպեցին գրում էր յուր պատմությունը: Նա գուց է կցիշեն, թե այդ պաշտամունքը յուր երիտասարդության ժամանակ դեռ չկար, այդ բանը նա կրացարեր նրանով, որ Ազգային գեղագույքի Պատմությունը հագիլ այդ ժամանակ հայտնի դարձավ, որի հիմնան վրա և հաստատվեց լուսավորչի պաշտամունքը: Իսկ Փակամուսի նկատմամբ, որի հեղինակը նույնպես բոլորովին անձանոթ անձ է Փարպեցին համար, չպիտեմ ինչը այս պահտի նա գրեր. — Մի անժանոթ ոմն, Փակամուս անունով, թագավար շահը պահտամանը այս պահտի նախորդ առաջարկությունը:

յում ուսում առած,— (Փարպեցին Բուզանդացի բառը սխալմամբ մեկնում է իբրև բյուզանդացի)՝ գրում է անտեղի հիմարական բաներ, որ ամենեին վայել չէ Բյուզանդիայում ուսում առած մարդուն: Ի՞նչ կա սրա մեջ անքնական, ևս շեմ հասկանում» (էջ 7):

13. Այս կապակցությամբ Ստ. Մալիխասյանը կրկին ընդգծում է, որ Փավստոսը, կորենացին և Փարպեցին շգփտեին Ազաթանգեղոսի և Արքարի զրույցի կեղծիք լինելը, նրանք հավատում էին, թե Հիշյալ զրույցը առաջին դարից է, իսկ Ազաթանգեղոսը՝ երբորդ: Այս հավատն էլ հիմք է տվել Հիշյալ պատմիլներին օգտվելու նրանցից՝ «Փավստոսն, իբրև աշուղ, անկուսակցական, իսկ կորենացին ու Փարպեցին անշուղ կուսակցական, հունական օրիենտացիալի» (էջ 7—8):

14. Ստ. Մալիխասյանը պատմախանում է. ուկամթանգեղոսի կեղծողը չէր կարող մի հայտնի հույնի անոն դնել, որովհետև դրանով կեղծիքը կրացվեր, չէր կարող մի անհայտ հույնի անոն դնել, որովհետև զա պատիվ չէր բերի կաթողիկոսական տոմմի ծագման: Նա ընտրել է պահակ (ոչ պարսիկ) Անակին, որ տոմմով ավելի բարձր էր, քան Արշակունիները, որպիսզի հայոց եկեղեցու նվիրապետությունը հավասար կամ բարձր լինի Արշակունիներից» (էջ 8):

15. «Եհարկե, —ի պատմախան Հր. Աճառյանի վերջին՝ 10-րդ հարցի դրում է Ստ. Մալիխասյանը, —Թագիսու առաքյալը պատկանում էր ընդհանուր քրիստոնեական եկեղեցուն, բայց նա մասնավորապես ասորոց առաքյան էր, ասորոց լուսավորիչը, ուստի հայկանալի է, որ ասորական կուսակցությունը նրան Հայաստանի էլ լուսավորիչ գարձնելով նպատակ է ունեցել սերտ միացնել հայոց և ասորոց եկեղեցիները, իբրև նույն լուսավորչից հիմնված երկու բոլոր եկեղեցիները» (էջ 8):

Բ (55). «ՀԱՅ ԹՎԱԿՐՈՒԹՅԱՆ ՄԻ ԱԽԱԼ ԶԵՎԸ. տպադրված է 1952 թ. «Տեղեկագիր», № 1, էջ 37—38:

Դ (68). «ԵԱՐԻՅ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՎԸԿԻՐ», «Տեղեկագիր», 1952, № 11, էջ 69—71:

Դ (37). «ԲՈՒՀԱՆԴ ՓԱՎՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ»—«Տեղեկագիր», 1950, № 12, էջ 83—84:

Ե (49). «ԵԻՐԱԿԱՑՈՒ ԱՄՄԱՆՈՒՆՆԵՐԸ»—«Տեղեկագիր», 1950, № 12, էջ 89—91:

1. Էդ. Աղայանի հոդվածը տպագրվել է ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագրում», «Աղայանից ամսանունները» վերնագրով («Տեղեկագիր», 1946, № 5, էջ 61—64):

ԱՆՎԱՆՔ ՀԱՅԱԿԱՆ ԱՄՍՈՅ

Տպագրվել է «Բազմավեպ» հանդեսի 1897 թ. № 8-ում (էջ 391—394), իբրև պատմախան ընթերցողների հարցերին: Այդ իսկ պատմառով հոդվածը փոքրինչ հանրամատչելի բնույթ ունի: Հր. Աճառյան ըստ երևոյթին, իր կյանքի վերջին շրջանում ցանկացել է «վերանայել և որոշ լրացումներ մտցնելով հրատարակել» այս հոդվածը (տե՛ս Գ. Գարեգինյանի «Աճառյանը Փարիզում և Ստրատորդում» հոդվածը հետևյալ գրքում: Հր. Աճառյան, Կյանքին հուշերից, Երևան, 1967, էջ 187):

Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ

Երկու խռով	3
Մավսես Արականկատվացի	9
վրա	19
Մատթեոս Առաջայեցի	24
Կրիզոր Մազմառոսի «Մորուկ փանաքի» լուծումը	40
Տիմոթեոս Կուզ և ա. Գրիգ Նորաբեր թարգմանությունը	73
Զեռագրական սրբագրություններ հայ ժամանակիների մեջ	105
Թնագործություն և համեմատությունն եզնկա նորագյուտ ձեռագրին	108
Հայ կա կանք	201
Ա(14). Մեր առաջին պատմագրերի թվականը	201
Բ(55). Հայ թվագրության մի սխալ ձև	205
Դ(68). Ե զարից հայերեն ձեռագիր	208
Դ(37). Բուզանդ Փավստոսի մատին	211
Ե(49). Եիրակացու ամսանունները	213
Անվանք հայկական ամսոց	218
Մանոթագրություններ	225

ԱՃԱՌԵԱՆ
ՀՐԱՋԱՆ
ՀՅԱԽՈԹԻ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ



Հրատ. իսլբագիր՝
Լ. Լ. Աղայան

Գեղ. իսլբագիր՝
Ն. Ա. Թովմասյան

Տեխն. իսլբագիր՝
Ֆ. Գ. Տռենյան

Վերստ. սրբագրիչ՝
Լ. Գ. Կոստանդյան

ԳՖ 04838, պատվեր 1007, տպա-
քանակ 3000։ Հանձնված է ար-
տադրություն 15/IX 1975 թ.: Սառ-
բագրված է տպագրության 7/V
1976 թ.: Թուղթ՝ 60×84¹/₁₆,
Տպագր. 15 մամ.+1 ներդիր:
Պայմ. 14,07 մամուլ: Հրատ. 12,1
մամուլ: Գինը՝ 1 լ. 45 կող.։
Երևանի համալսարանի հրատարակ-
չություն, Երևան, Արովյան փող.
№ 52։

ВФ 04838, заказ 1007, тираж
3000. Сдано в производство
15/IX 1975 г. Подписано к
печати 7/V 1976 г. Бумага
60×84¹/₁₆. Печатных 15 листов
+1 вкладка. Условн. 14,07 ли-
ста. Изд. 12,1 листа.
Цена 1 р. 45 коп.
Издательство Ереванского уни-
верситета. Ереван, ул. Абовяна
№ 52.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արովյան փող. № 52,
Типография Ереванского университета. Ереван, ул. Абовяна № 52.